ՍՈՒՐԵՆ Շ. ՎԱՆԵՑԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ

«Աստծուն փնտրելու ճանապար–հին Ես գտա Սուրբ Էջմիածինն ու իմ Հայրենիքը և խոնարհվեցի ճա–կատագրի առաջ...»

ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

«ԵՒ ԳՈՐԾՔ ՆՈՐԱ ԻԲՐԵՒ ԶԿԱՅԾԱԿՍ»

(Եսայ. Ա. – 31)

...Գրական-հրապարակախոսական բեմելն սկսվեց Փարիզում, ավելի ճիշտ՝ «Գաղ–ղիո դշխո մայրաքաղաքում» 1932 թվականի սեպտեմբերից հրատարակվող «Մարտկոց» ազգային-քաղաքական և գրական եռօրյա (հետագայում երկօրյա) պարբերականի էջերում: Զղուտ, ազգային-հասարակական հարցերում սկզբունքայնորեն անզիջող, իսկ ավելի հա–ճախ՝ այդ հարցերը անողոք քննադատության ենթարկող պարբերական էր «Մարտկոցը», որը հենց առաջին իսկ համարի առաջնորդողում վճռականորեն հայտարարեց, որ՝ «Մարտկոցը» պիտի դառնա ըստ մեզի, կենտրոնական զսպանակը համատարած ցեղային շարժումի մը»: Հասկանալի է, որ նման շարժում առաջ բերելու և որ կարևոր է՝ այդպիսի շարժմանը գաղափարական նպատակաուղղվածություն ու ազգային դիմագիծ հաղորդելու համար, առաջին հերթին պետք էր արթնացնել «մտավոր թմբիրի մեջ ինկած» գաղութա–հայությանը և եռանդալից ու վճռական գործողությունների մղել նրանց: Եվ «Մարտկոցի» դիրքավորումն ու անելիք գործողություն-ծրագիրն այս կապակցությամբ առավել քան որո–շակի է. «Պարբերաթերթին առաջնակարգ նպատակներեն մեկը գաղութահայ հանրային կյանքի վերանորոգման խնդիրն է: Անոր առույգացումը, երիտասարդացումը»:

Այսպիսի նպատակասլաց և ինչ-որ տեղ հախուռն գործունեության հետևանքն այն եղավ, որ «Մարտկոցը» կարողացավ առաջ բերել և գլխավորել ազգային-հասարակական աննախադեպ մի շարժում, որը շուտով ստացավ «Մարտկոցականություն» անունը և որն, իհարկե, իր առավել կամ պակաս մեծության ճյուղավորումներն ուներ նաև տարբեր պե–տությունների հայկական գաղութներում: Ամենևին էլ պատահական չէր, որ բնութագրելով իրենց ծավալած՝ հենց այդ բնույթի գործունեությունը, պարբերականը, ոչ առանց ներքին հպարտության, գրում էր. «Մարտկոցականությունը նախ և առաջ մարտունակ տարրերու դաշինք մըն է, ռազմական ուխտ մը, ցեղին փրկագործության նախագիծ մը: Ամենքս հայրե–նիքի համար և հայրենիքը, որ կվերածնվի՝ մեզի համար»:

Ազգային-մշակութային այսպիսի բնույթ ու նպատակաուղղվածություն ունեցող պարբերականում էր, ահա, որ 1933 թ. ապրիլի 12-ի համարում (83), հրատարակվեց «Հա–յուն պայքարը» շեշտակի խորագիրն ունեցող հրապարակախոսական մի հոդված, որն ու–ներ այն ժամանակ դեռ ոչինչ չասող «Կ. Պալճյան» ստորագրությունը: Քիչ ժամանակ անց, 1933 թ. օգոստոսի 13-ին և 15-ին (թթ. 109-110), նույն պարբերականը հրատարակեց՝ ասես նախորդի բնականոն շարունակությունը հանդիսացող «Նոր սերունդի խնդիրը» ծավալուն հրապարակախոսական հոդվածը, որն այս անգամ ուներ քիչ ավելի ընդարձակ՝ «Կ. Պալճ–յան ի Պուքրեշ» ստորագրությունը: «Մարտկոցի» հաղորդած կարճառոտ տեղեկությունից իմանում ենք, որ Կ. Պալճյանը «ռումինահայ ուսանող մըն է»:

Գեթ համառոտակի մեկնաբանելու համար ռումինահայ կյանքի բնութագրական մի առանձնահատկությունը, որը հիմք ու առիթ էր հանդիսացել Բուխարեստի պետական հա–մալսարանի Գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանո–ղին գրիչ վերցնելու և հոդվածներով հանդես գալու համար, այն էլ իր երկրից դուրս, Փարի–զում հրատարակվող պարբերականում և սա այն դեպքում, երբ ռումինահայությունն ուներ քաղաքական տարբեր ուղղություններ դավանող մեկից ավելի իր թերթերը, մենք պետք է նկատի ունենանք հետևյալ հանգամանքը: Դեռ 15-րդ դարի կեսերից ծայր առած՝ տարաշ–խարհի հայության զաղթը դեպի Ռումինական թագավորություն, արդեն որոշակի երևույթ դարձավ 1894-96 թվականների համիդյան հայաջինջ քաղաքականության և դրա հետևանքը հանդիսացող հայկական կոտորածների ժամանակ: Հաստատվելով Ռումինիայի՝ առև–տրական-տնտեսական առումով նշանավոր քաղաքներում (Բուխարեստ, Կոնստանցա, Գալաց, Բրաիլա, Պլոեշտի) և ի դեմս տեղացիների ու նրանց կառավարության, ունենալով ոչ այնքան լուրջ ու գործազետ մրցակիցներ, նորաբնակ հայերը աստիճանաբար կարողա–

ցան իրենց ձեռքը վերցնել երկրի հասարակական-տնտեսական կյանքի գերակշիռ լծակ–ները և, որ մեզ համար կարևոր է, կարողացան ըստ ամենայնի կազմակերպել տեղի հայ–կական համայնքի կյանքը և ազգային ձև ու հասարակական դիմագիծ տալ նրան, ըստ իրենց պատկերի նմանության:

Դրությունը, սակայն, հիմնավորապես փոխվեց 18-րդ դարի սկզբներից, երբ «մեծ պե–տություն խաղացող այդ փոքր շաղլատանը» (Բիսմարկ), այսինքն՝ Թուրքիան, կրկին սան–ձազերծեց հայկական կոտորածների մի նոր և այս անգամ ավելի ծավալային իր քաղա–քականությունը, որի հետևանքով 1915 և մանավանդ 1922 թվականներին Ռումինական թագավորության տարածքները ներթափանցեցին և, իհարկե, այնտեղ բնակություն հաս–տատեցին Պոլսից, Ռոդոստոյից, Զմյուռնիայից և այլ վայրերից տեղահան արված գաղթա–կան հայազգիների նորանոր զանգվածներ: Եվ այստեղից էլ սկսվեց...

Ռումինիայում արդեն հաստատված և հայկական համայնքի հասարակական կյանքի հիմնական շարժիչ ուժերը իրենց ձեռքում հիմնավորապես պահող «հին» ռու–մինահայերը համառորեն աշխատում էին պահպանել իրենց մենաշնորհային այդ կարգա–վիճակը, իսկ «նոր» ռումինահայերը ամենևին էլ տրամադիր չէին ընդունել այդ, հակված չէին «հներին» ընդունելու որպես անբեկանելի մեծություններ ու երկրային քուրմեր: «Հին» ռումինահայերը պարտադրում և պահանջում էին, որ համայնքի հետ առնչվող բոլոր հար–ցերում վճռական խոսքն ասելու կամ տվյալ խնդրի վերջնական լուծման իրավաբանական իրավունքը վերապահվի իրենց և միայն իրենց, իսկ «նորերը» ոչ միայն հակամետ չէին ընդունելու աշխատանքային այդպիսի կարգաեղանակը, այլև շատ ելակետային խնդիր–ներում առաջ էին քաշում իրենց ինքնուրույն և ոչ քիչ դեպքերում «հներին» տրամագծորեն հակընդդեմ իրենց տեսակետները: «Հին» ռումինահայերի մոտ, վերջապես, տասնամյակ–ների պատմությունից եկող իրենց մենաշնորհային վիճակի շնորհիվ արդեն ստեղծվել ու ամրապնդել էր այն մտայնությունը, որ իրենց արածն ու ստեղծածը, իրենց ծավալած գործն ու գործունեությունը ամենաճիշտն է, ամենախելացին ու ամենակարևորը, իսկ «նորերը» իրենց այնքան բնորոշ մարտնչող ուղղամտությամբ ցույց էին տալիս և ապացուցում, որ «հին» ռումինահայերի կատարած գործը ամենևին էլ անսխալական ու անթերի չէ, որ նրանց գործերում մեկից ավելի են եղել վրիպումներն ու բացթողումները:

Այս էր համառոտակի, ռումինահայ գաղութի ներքին պայքարը ծնող հասարա–կական շարժառիթը, որը մեզ հետաքրքրող այս՝ 1930-ական թվականների ժամանակաշըր–

ջանում, առավել քան որոշակիությամբ արդեն զգացնել էր տալիս իրեն: Եվ այդքանից հետո, մեծ կարողություններ պետք չեն մակաբերելու համար, որ քսանիինգամյա երիտա–սարդ Կարապետ Պալճյանը կարողացավ ճիշտ կողմնորոշվել ռումինահայ կյանքում ըն–թացք վերցրած «հների» և «նորերի» միջև սանձազերծված պայքարում և անվերապահորեն կանգնեց ի պաշտպանություն նորերի, ի պաշտպանություն երիտասարդությանն ու նրա առաջ քաշած «տեսիլքների»: Այս առումով, հիշատակված «Հայուն պայքարը» հոդվածում Կարապետ Պալճյանի հետևյալ միտքը, որևէ երկընտրանքի տեղիք չի տալիս: «Մեր հին սերունդը, – գրում էր նա, – կարծես իր վրեժը լուծելու համար, իր պնդերակավոր ձեռքին մեջ կպահե բոլոր կազմակերպությունները, կջանա որսալ երիտասարդությունը ու կխլե անոր բնազդին ու մտքին ազատությունը, փճացնելով ուրեմն ինչ որ անոր հատկանիշը պետք է ըլլար: Հին սերունդը, այո, կդիմե երիտասարդության, սակայն անոր ֆիզիկականի մասին, անկե պահանջելով քվե և ծափ»:

Հին սերնդի պահպանողական էությունը բացահայտող և այդ քաղաքականության վարքագծի հետևանքով նորահաս երիտասարդությանը խանգարող նման անողոք մեջբե–րումներ կարելի է էլի բերել: Եվ բնականորեն ծագում է իր որոշակի պատասխանին սպա–սող մյուս հարցը. իսկ երիտասարդությո՞ւնը: Ի՞նչ պետք է անի նա իրադարձությունների այս հորձանապտույտում: Անողոք ու սկզբունքային պայքար հայտարարել հնին ու ժամ–կետանցին, թե՞ հաճոյակատար պատրաստակամությամբ ընդունել նրանց ծանրանիստ գերիշխանությունը և փութաջան խոնարհությամբ ծառայության անցնել նրանց մոտ, հանուն «քվեի ու ծափի»: Հարցի պատասխանը իհարկե, ամենևին էլ դյուրընկալներից չէր և մտքի հավանորեն մեծ աշխատանքից հետո, երիտասարդ հրապարակախոսը կարողացել է գտնել միակ ճիշտ ու տրամաբանական պատասխանը. այսինքն՝ «հետևաբար սերունդ–ներու պայքարը մեր մեջ պիտի ըլլա ոչ սովորական պայքար՝ արդյունք արժեքներուն ու դեպքերուն աստիճանական ու բնականոն զարգացման, այլ պիտի դառնա պայքար մը, արմատական ու ժխտող: Մեկ միջոց կա. պայքա՛ր, հարատև պայքա՛ր հիներուն դեմ»: Կամ. «Մեր ազգային արժեքները, ձգտումները, ապրումները մահեն փրկելու և զանոնք վերստին կյանքի կոչելու տենչը պետք է ստեղծե այդ պայքարը ու ատով՝ նաև նոր սերունդը: Կյանքի ճամփա մը գտնելու, ապրելու ձև մը գտնելու համար մղված պայքարը միայն կրնա մեր երիտասարդությանը մեկտեղել»:

Ինչպես և պետք էր սպասել՝ չլռեցին ռումինահայ գաղութի ավագ սերնդի ներկայա–ցուցիչները, այսինքն՝ «հները»: Կարապետ Պալճյանի քննադատությունը շատ էր շեշտակի,

իր հարցադրումների մեջ անողոքորեն ճշմարիտ, իր եզրակացությունների մեջ միանգամայն իրավացի ու սկզբունքայնորեն անզիջում: Չէր լռելու մանավանդ «հների» հավատարիմ հովանավորն ու պաշտպանը՝ Հակոբ Սիրունին, որը և շտապեց իր «Արազ» թերթի միջոցով հանդես գալ մի ամբողջ շարք մեծ ու փոքր «դատումներով» ընդդեմ այդ «պարսավիչ եղելությանց»: Առանց գեթ մեկ անգամ հիշատակելու հոդվածների հեղինակի՝ Կարապետ Պալճյանի անունը, Սիրունին նրան «դատում» էր ռումինահայ գաղութի կրթական-մշակութային կյանքը դիտավորյալ կերպով խեղաթյուրելու, «չեղած և չելլալիք» պայքարներ տեսնելու և այն ի վնաս գաղութի շահերի ներկայացնելու, «հիներուն արյունաքիրտն վաստակը արհամարհելու» և մանավանդ «սա նորելուկ մանչերուն», «չոճուխներուն» հների դեմ խաչակրած պատերազմի կոչելու մեջ: Բնականոն հետևանքն այն եղավ, որ ուսանող Կարապետ Պալճյանը Փարիզում հրատարակվող նույն «Մարտկոց» թերթում հանդես եկավ է՛լի երկու անուն հրապարակախոսական հոդվածներով («Նոր սերունդին համար», 1933, թ. 73 և «Մեր ապազան», թ. 94-95), այս անգամ նախ՝ հիմնավորապես «մշակելով» թե Հակոբ Սիրունուն ու նրա խմբագրած «Արազ» պարբերականը և թե, – որ ավելի կարևոր էր, – բերելով նորանոր փաստեր ու վկայություններ «հին» և «նոր» ռումինահայերի միջև տիրող թշնամական հարաբերությունների և, դրա հետևանքով, երիտասարդության նկատմամբ ծայր առած կատարյալ անտարբերության ու անպատասխանատվության նկատմամբ:

Մեր նպատակից դուրս է քննել Կարապետ Պալճյանի նաև այս հոդվածների արձագանք-վերաբերմունքը ռումինահայ իրականության պայմաններում և դրանց հետևանքները: Նշենք միայն, որ «հները» շատ էլ հեշտությամբ չզիջեցին իրենց միահեծան դիրքերը: Պատասխան հոդվածներով հանդես գալու ծանրությունն իր վրա վերցրեց «Մարտկոցը», որտեղ, այդ առիթով տպագրված հոդվածների վերնագրերի սոսկ թվարկումն իսկ («Սերունդի խնդիրը», «Մարտկոցական շարժումը Ռումանիո շրջանին մեջ», «Ո՞Ւր կերթա գաղութահայ նոր սերունդը», «Ռումանահայերը իրենք իրենց մեջ», «Ճիշտ ժամանակն է միահամուռ գրոհ տալու» և այլն), ակնհայտորեն խոսում է այն մասին, որ դրանք գրված էին Կարապետ Պալճյանի հոդվածների ոճով ու ոգով: Մեզ համար կարևորը հավաստումն է այն փաստի, որ սկսելով իր գործունեությունը որպես հրապարակախոս և այն էլ հայրենի երկրից դուրս, Փարիզում, Կարապետ Պալճյանը կարողացել էր հիմնավորապես երևակել իրեն, կարողացել էր մտավոր-հասարակական բնույթի մի ամբողջ շարժում խթանել ռումինահայ իրականության պայմաններում և, ուրեմն, Կարապետ Պալճյան հրապարակախոսը, որպես այդպիսին, արդեն կայացել էր:

Հետագա շուրջ հինգ տարիները, այսինքն մինչև Ռումինահայ մշակութային կյան–քում անբեկանելի դեր կատարած «Հերկ» ամսագրի հանդես գալը, Կարապետ Պալճյանի, – իսկ ավելի լրիվ ձևով Լևոն Կարապետ Պալճյանի, – մտավոր հասարակական հասունաց-ման և որպես երիտասարդ գաղութահայ գործիչ ձևավորվելու բեղմնավոր տարիները հան-դիսացան: Դեռ մի քանի տարի առաջ, 1929 թ. սեպտեմբերին, նա աշխատանքի է անցնում Բուխարեստի հայկական «Միսաքյան-Քեսիմյան» ազգային վարժարանում որպես ուսուցիչ (հետագայում՝ որպես քարտուղար), ի դեպ, այդ պաշտոնը հաջողությամբ վարելով մինչև 1943 թվականի կեսերը, այսինքն ամբողջ տասնչորս տարի: 1930 թ. օգոստոսին, Նիկոլա Յորգայի և Հակոբ Սիրունու ջանքերով, ստեղծվում է գրական-հասարակական «Հայ մշա-կույթի բարեկամներու ընկերակցություն» կազմակերպությունը, որի ջանադիր անդամնե-րից էր նաև Լևոն-Կարապետ Պալճյանը: Երկու տարի անց, 1932 թ. սեպտեմբերին, հաջո-ղությամբ հանձնելով պահանջվող քննությունները, նա ուսանող է արձանագրվում Բու-խարեստի պետական համալսարանի Գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում և հենց այդ ժամանակ էլ անդամագրվում է համալսարանում գործող «Հայ ուսանողների միությանը», դառնալով շուտով այդ ընկերության գործունյա անդամներից մեկը: Շուրջ 1936 թվականից, սկսում է Լևոն-Կարապետ Պալճյանի մտերմությունը ռումինահայ թեմի առաջնորդ, ճանաչված հոգևորական Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի հետ, որի ըն-թացքում սրբազանը զրույց-դասընթացների ձևով ընդհանուր աստվածաբանական գիտե-լիքներ էր հաղորդում իր սանին և որը անընդմեջ շարունակվեց մինչև 1942 թվականի հոկտեմբեր, մինչև թեմի առաջնորդի մահը: 1936 թ. սկզբներից, համալսարանական ուսումնառությանը և հիշատակված ամբողջ ազգային-հասարակական գործունեությանը զուգընթաց, Լևոն-Կարապետ Պալճյանը սկսում է գրաբար լեզվի մասնավոր դասընթացներ անցնել ռումինահայ հայագետ Հակոբ Սիրունու մոտ. պարապմունքները տևում են գրեթե մեկ տարի: Նույն թվականի փետրվարին, վերջապես, բարձր նիշերով ավարտելով Բուխա-րեստի պետական համալսարանի հիշատակված՝ Գրականության և փիլիսոփայության ֆակուլտետը ուսուցիչ-մանկավարժի որակավորումով (ավարտաշարադրանքի թեման էր. «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ»), Լևոն-Կարապետ Պալճյանը սկսում է հաճախել Պետական համալսարանին կից կազմակերպված Տիտու Մայուրեսկուի անվան գիտա-մանկավարժական բնույթի հատուկ սեմինարներին և շուրջ մեկ տարի դառնում է այդ սեմինարների ազատ ունկնդիրը՝ ավելի լրացնելու ու խորացնելու համար կրոնա-աստվածաբանական բնույթի իր գիտելիքները: Եվ եթե այս բոլորին էլ ավելացնենք դասա-խոսական բնույթի աշխատանքների անընդմեջ ու եռանդալից գործունեությունը, որը հաս-

տատուն հետևողականությամբ ծավալում էր նա, սկսած իր աշխատանքային-հասարակական գործունեության ամենասկզբնական ժամանակներից, ապա մեր ասելիքը հիմնականում կամբողջանա: Առհասարակ, 1930-ական թվականների ռումինահայ մշակութային կյանքում, նշանակելի է տվյալ գրական դասականի կամ գործչի հերթական տարելիցի, պատմա-քաղաքական բնույթի տվյալ նշանավոր երևույթի, ազգային գոյավիճակը պահպանող շրջադարձային իրադարձությունների, գաղութահայության մոտիկ-հեռավոր ապագային վերաբերող անկյունաքարային խնդիրների վերաբերյալ «բանախոսություններ», «վիճաբանականներ», «մտային ասուլիսներ» կազմակերպելու միջոցով «երիտասարդական կորովի միտքերը շարժումի մեջ դնելու» (Հ.Սիրունի) աշխատանքային գործելաեղանակը, որն ի դեպ, հրաշալի կերպով արդարացնում էր իրեն և որը բազում տարիների տևողություն ունեցավ: Եվ ռումինահայ գաղութի դասախոսների՝ բավականին պատկառելի թվաքանակում իր անկապտելի տեղն ուներ նաև Լևոն-Կարապետ Պալճյանը: Տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով նրա կարդացած դասախոսությունների վերնագրերի՝ սոսկ հաջորդաբար թվարկումն իսկ, հրաշալի բնութագրում են թե՛ նրանց գաղափարական բովանդակությունը և թե՛ դրանք հանրությանը ներկայացնող երիտասարդ դասախոսին: Ինչպես մի քանի անգամ և այն էլ ամենատարբեր առիթներով հավաստում էին Բուխարեստում հրատարակվող Հակոբ Սիրունու «Արազ», Մկրտիչ Պոտուրյանի «Հայ Մամուլ», Հարություն Պողոսյանի «Պահակ» և էլի ուրիշ պարբերականները, Լևոն-Կարապետ Պալճյանի զեկուցումներն աչքի էին ընկնում մատուցվող նյութի խորանիստ, մասնագիտական իմացությամբ, ներքին տրամաբանությամբ առլեցուն՝ ուշագրավ, հաճախ համարձակ եզրակացություններով, և այդ վերլուծությունների հիման վրա իր ինքնուրույն, սեփական ասելիքն ունենալու վառ արտահայտված կարողությամբ: Թվենք այդ զեկուցումներից մի քանիսի վերնագրերը. «Ավետիք Ահարոնյանի «Խայը» պատմվածքը» (1933 թ. հունվարի 27, Բուխարեստի «Րաֆֆի» կրթական-մշակութային միությունում): «Օսվալդ Շպենգլերը և իր վարդապետությունը» (1933 թ. հունիսի 1, նույն տեղում): «Անհատը թե՞ միջավայրը կգերիշխե արվեստի մեջ» (1933 թ. հուլիսի 20, նույն տեղում): «Նոր սերունդը» (1934 թ. փետրվարի 11, Բուխարեստի «Հայ ուսանողների միության» դահլիճում): «Ֆրանց Վերֆելը և նրա «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպը» (1936 թ. սկիզբ, Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցու գավթում) և այլն[1]:

---

[1] Արձանագրելի է, որ Լևոն-Կարապետ Պալճյան – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ը ժամանակային ամբողջ տարածքում, զեկուցումներով հանդես գալու գործելաեղանակը մշտապես մնաց որպես աշխատանքային հաստատուն ու անփոփոխ կարգավիճակ: Վերևում հիշատակվածներին կարելի է ավելացնել

Այո, ազգային-կրթական և հասարակական-մշակութային բնույթի գործունեության պակասից գանգատվելու հիմք չուներ Բուխարեստի Պետական համալսարանի երիտասարդ շրջանավարտ Լևոն-Կարապետ Պալճյանը: ՈՒստի հասկանալի է ու տրամաբանական, որ այդպիսի ներուժ աշխատանքի բնականոն հետևանք հանդիսացող հարուստ կենսափորձը և ուսումնառության տարիներին ամբարած ընդարձակածավալ գիտելիքները նրա մոտ հրամայաբար պետք է առաջ բերեր գաղութի իր համազգիների հետ սեփական պարբերականի օգնությամբ հաղորդակցվելու, իրեն հուզող մտքերին ու մտորումներին նրան մասնակից ու խորհրդակից դարձնելու ստիպողական անհրաժեշտությունը: Ռումինահայ համայնքը, ճիշտ է, ուներ այդ նպատակաուղղվածությունն ունեցող իր մի քանի պարբերականները, որոնք լավ-վատ իրենց էջերը տրամադրում էին Լևոն-Կարապետ Պալճյանին, բայց դա իհարկե, ամենևին էլ այն չէր, ինչ սեփական մտքի արգասիք հանդիսացող պարբերական ունենալը, և առավել ևս, սեփական գաղափարախոսություն ու հասարակահայեցությունը տարածող, այդ ոգով ու տրամաբանությամբ գաղութի հասարակական մտքին ձև և ուղղվածություն տվող խոսնակ-ձայնափող ունենալը:

Ինչքան ժամանակ է տևել մտավոր այդ թարթափումները Լևոն-Կարապետ Պալճյանի մոտ այս կապակցությամբ, – որոշակիորեն հայտնի չէ: Առաջին ուշագրավ տեղեկությունը մեզ հաղորդում է Հակոբ-Ճոլոլյան-Սիրունու «Արազ» թերթը: 1936 թվականի նոյեմբերի 1-ին, իր հերթական համարում (452), «Պարբերական մը» խորագրի ներքո թերթը տեղեկություն հրապարակեց այն մասին, որ «մոտ օրեն լույս պիտի տեսնե գիտական-մշակութային ամսաթերթ մը, աշխատակցությամբ Բուխարեստի մի խումբ երիտասարդ մտա–

«Տրանսիլվանիայի և Բուկովինայի միացումը Ռումինիային» (1934 թ. դեկտեմբերի 1, Բուխարեստի «Միսաքյան-Քեսիմյան» հայկական վարժարանում): «Հայրենիքի օրը» (1936 թ. մայիսի 31, Բուխարեստի «Հայ մարմնակրթական ընդհանուր միության դահլիճում): «Խոսք հայրենիքի մասին» (1945 թ. հուլիսի 8, Բուխարեստի «Սլաքա» կինոդահլիճում): «Ինչպես տեսա Հայաստանը» (1945 թ. հուլիսի 22, Կոնստանցա քաղաքի «Հայկական ճակատ» կազմակերպության հավաքում): «Սուրբ Գրիգոր Նարեկացի» (1950 թ. դեկտեմբերի 10, Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք եկեղեցում, ռումիներեն): «Հայ եկեղեցին Խորհրդային Միության մեջ» (1952 թ. հունիսի 2, Բուխարեստի «Ստեփան Շահումյան» մշակութային տան հանդիսասրահում): «Հայաստանի գրական-մշակութային կյանքը» (1953 թ. հոկտեմբերի 4, Կոնստանցայի «Հայ մշակույթի տան» սրահում): «Կրոն և գիտություն» (1954 թ. դեկտեմբերի 29, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում) և բազում ուրիշ՝ հայերեն և ռումիներեն լեզուներով կարդացված զեկուցումները: Հեշտությամբ կարելի է պատկերացնել, թե ինչպիսի անգնահատելի նյութ կմատակարարեին դրանք Լևոն-Կարապետ Պալճյան – Ամենայն Հայոց կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի մտավոր-գիտական կարողությունները է՛լ ավելի խորությամբ բացահայտել կարողանալու, կամ նրա աշխարհայացքային-հասարակական ոգորումներն է՛լ ավելի մանրակրկիտությամբ պարզաբանելու համար: Ցավոք սակայն, հիշատակված (և ուրիշ, չհիշատակված) զեկուցումներից և ոչ մեկը չի պահպանվել, լավագույն դեպքում մեզ են հասել ափի մեծությամբ թղթերի վրա տվյալ նյութի վերաբերյալ հերթական համարակալումով նշված՝ զեկուցողի սեղմ-նշումները: Այսքանը միայն գիտենք, որ այդ զեկուցումները եղել են «խիստ շահեկան», «հարուստ բովանդակությամբ առլեցուն», ունկնդրվել են «մեծավ ուշադրությամբ», որ «հետաքրքիր զեկուցմանը հաջորդած են բազմաթիվ հարցեր», որ «բանախոսությունը տևեց շուրջ երկու ժամ և ունկնդրվեցավ լարված ուշադրությամբ» և այլն:

վորականներու», ապա հաղորդվեց այդ նոր պարբերականի աշխատանքային կարգավիճակի հիմնական սկզբունքները: Խոսքը, ինչպես դժվար չէ մակաբերելը, վերաբերում էր Լևոն-Կարապետ Պալճյանի գլխավորությամբ լույս տեսնելու պատրաստվող ամսագրին, որը, սակայն, աշխարհ եկավ 1937 թ. հունիսին, և ուրեմն «Արազի» հայտնած «մոտ օրենը» տևեց ամբողջ յոթ ամիս: Ինչն էր պատճառը այսպիսի ուշացման, ինչ միջադեպեր եղան ու անցան այս յոթ ամիսների ընթացքում, – ոչինչ որոշակի հայտնի չէ: Այսքանը գիտենք միայն, որ երիտասարդ խմբագիրը զօր ու գիշեր զբաղված էր իր հրատարակելիք պարբերականի հետ առնչվող բազմաթիվ ու բազմաբնույթ հարցերով (թղթակիցների համապատասխան քանակի ապահովում, Ռումինական կառավարության Դավանանքների մինիստրությունից թույլտվություն-արտոնագրի ստացում, հայազգի բաժանորդների՝ հնարավորին չափ մեծ քանակի ապահովում և այլն) և որ այս կապակցությամբ դրսևորելով դիվանագիտական ու կազմակերպչական անառարկելի կարողություններ, կարողացել էր ի վերջո, բոլոր խնդիրները լուծել հօգուտ իրեն: 1937 թվականի սեպտեմբերին, ռումինահայ մտավորականությունը արդեն իր սեղանի վրա ունեցավ Կարապետ Պալճյանի «խմբագրապետությամբ» հրատարակվող «Հերկ» պարբերականը: Պետական-քաղաքական բնույթի նկատառումներից ելնելով, «Հերկը» ներկայացվում էր որպես նույն Բուխարեստում, Մկրտիչ Պոտուրյանի խմբագրությամբ հրատարակվող «Հայ մամուլ» թերթի հավելվածը:[2]

... Շատ էր նորովի, ինքնուրույն և խմբագրի վարած գրական-հրապարակախոսական սկզբունքային քաղաքականության հետևանքով՝ շատ էր յուրահատուկ պալճյանական նորածին «Հերկը»: Եվ անշուշտ դա էր պատճառը, որ սկսած բառացիորեն առաջին իսկ համարից, մինչև ամենավերջինը՝ 12-րդը, այն մտքերի եռանդալից բախում և իրարամերժ կարծիքների աննախադեպ փոթորիկ հարուցեց ռումինահայ (և ոչ միայն ռումինահայ) մտավորականության ամենալայն շրջաններում:

---

[2] Այս կապակցությամբ հետևյալը պատմեց մեզ Վեհափառ Հայրապետը, 1985 թվականի սեպտեմբերի15-ի հարցազրույցի ժամանակ. «Հերկի» լույս աշխարհ գալու հետ կապված բարդություններից մեկն էլ այն էր, որ Ռումինական կառավարությունը շատ էլ չէր խրախուսում այլալեզու պարբերականների հրատարակությունը ընդհանրապես, և մանավանդ, եթե ծրագրված էր այն նոր-նոր հրատարակել: Խնդիրը դրականորեն լուծելու համար դիմեցի Բուխարեստի հայ կաթոլիկների առաջնորդ և իմ լավ բարեկամ Հայր Մկրտիչ Պոտուրյանին և միասին մշակեցինք գործողությունների մի ամբողջ վարքագիծ: Ռումինական կառավարության Դավանանքների մինիստրությանը իմ «Հերկի» հրատարակության վերաբերյալ հայտագիրը ներկայացնելիս, ես նշեցի, որ այն ոչ թե միանգամայն նոր ու ինքնուրույն պարբերական է, այլ հանդիսանում է Մկրտիչ Պոտուրյանի՝ Բուխարեստում վաղուց արդեն հրատարակվող «Հայ Մամուլ» պարբերականի հավելվածը և որ «Հերկում» տպագրվելիք բոլոր նյութերը գտնվելու են նրա հսկողության ներքո: Այս պայմանով էր միայն, որ կառավարությունը արտոնեց «Հերկի» հրատարակությունը և դա էր պատճառը, որ ամսագիրը, իր հիմնական անվանումից բացի, ուներ նաև «Հավելված «Հայ մամուլի» նշումը: Ավելացնեմ նաև, որ իմ ամսագրի հրատարակության, կամ նրանում եղած նյութերը մշակելու ու կարգի բերելու, նորանոր նյութեր հայթայթելու և նման այլ հարցերում, Մկրտիչ Պոտուրյանը բացարձակապես ոչ մի դեր չի ունեցել»:

Տարամետ խորհրդածությունների տեղիք տվող էր նախ՝ առաջին իսկ համարի սկիզ-բը, ժուռնալիստական տերմինաբանությամբ ասած՝ ամսագրի մուտքը: Հնուց անտի, պար-բերականների համար անբեկանելի կարգավիճակ էր դարձել այն գործելաեղանակը, ըստ որի, իր հասարակական կյանքը նոր-նոր սկսող թերթի կամ ամսագրի առաջին էջը պետք է զարդարեն այդ ազգի երևելիների ինքնաձեռագիր գրություն-մաղթանքները, համայնքի հո-գևոր առաջնորդի օրհնանքները, կամ բարի երթ մաղթող ընձայականները: Բուխարեստի պայմաններում դա նշանակում էր, որ Լևոն-Կարապետ Պալճյանը իր նորածին «Հերկի» առաջին իսկ էջերում պետք է զետեղեր ասենք՝ Ռումինահայ թեմի առաջնորդ Հուսիկ Զոհ-րապյանի, Հակոբ Սիրունու, Արտաշես Տիրացյանի, Գրիգոր Զամպաքճյանի, իսկ օտարնե-րից, ասենք՝ Նիկոլա Յորգայի, պրոֆ. Կոստանդին Ռեդուլեսկու-Մոտրուի, պետք է տեղ հատկացներ թեմի ռումինահայ առաջնորդ Ժուստինիանի և ուրիշ-ուրիշների ճանապարհ մաղթող «ուղեկցականներով» և այսպիսով անուն ու հռչակ ապահովեր իր առաջնեկի հա-մար:

Նման բան սակայն, ոչ միայն ամենայն հետևողականությամբ չի նկատվում «Հերկի» ոչ առաջին համարում և ոչ էլ հետագայի առհասարակ որևէ համարում, այլև սկսած հենց սկզբից մինչև վերջ, խմբագիր Կարապետ Պալճյանը իր պարբերականի դռները հիմնավո-րապես փակեց գաղութահայ ազգային-մշակութային մեծանուն գործիչների առջև, ապա-վինելով հիմնականում երիտասարդության ու հոգևոր աշխատանքի բնագավառում դեռ առաջին քայլերն անողներին: Իսկ սա էլ նշանակում էր, որ խմբագիր Կարապետ Պալճյանը սկզբունքորեն հրաժարվել էր մեծամեծ անուններ մուրալով իր ամսագիրը հռչակելու քա-ղաքականությունից, քանզի Սուրբ Գրքի հայտնի պատգամը «Լաւ է մեռանիլ քան մու-րանալ» (Սիրաք. Խ. 29), առավել քան ճիշտ էր այս առիթով: Քանզի քաջ գիտեր, որ իր «Հեր-կը» չի ստեղծվում մեկ օրվա կամ մեկ տարվա համար, այն ընթերցվելու և վերլուծվելու է տասնյակ հետագա տարիներում ու տասնյակ սերունդների կողմից, որոնք հիշյալ խոտելի քաղաքականությանը ծանոթանալու դեպքում, հիմք կունենան կրկնելու Սուրբ Գրքի մյուս կարգախոսը. «Ո՞չ սա էր այն, որ նստերն և մուրանայր» (Հովհ. Թ. 8): Մի քաղաքականու-թյուն էր սա, որի վարելն ինչքան էլ բարդ էր ու պարտավորեցնող, բայց այս դեպքում առա-վել քան արդարացրեց իրեն:

Ոչ քիչ մտորումների նյութ տվեց և իրարամերժ կարծիքների ալեբախում առաջաց-րեց ամսագրի անելիքները նախանշող և նրա գործողության հիմնասյուները մատնացույց անող առաջին համարի «Մտածել» վերնագիրը կրող առաջաբանը: Պատճառն այն էր, որ

առաջաբանի հեղինակ Կարապետ Պալճյանն այստեղ էլ առաջադրել էր խնդիրներ, որոնք միանգամայն նոր էին ու թարմ, մտադրվել էր ամսագրային քննարկման նյութ դարձնել հարցեր, որոնք աննախադեպ էին ռումինահայ գաղութի հին ու նոր պարբերականների հարցում: Որովհետև եթե մենք ունեցել ենք օրինակ, Մաղրասում հրատարակվող «Ազդա–րար» ամսագիրը, որն իր առջև խնդիր էր դնում հաղորդել տարվա կարևոր անցքերը, «հա–րուստներուն քիսեներուն թիվը և մեկալ բաները», եթե ունեցել ենք Զմյուռնիայում հրատա–րակվող «Արշալույս արարատյան» երկշաբաթաթերթը, որն իր «կետ-նպատակն» էր համա–րում «քաղաքական, բանասիրական, առևտրական նյութեր տալ և սակարանի ապրանք–ներուն գիները ցուցունել» և այլն, ապա խմբագիր Լևոն-Կարապետ Պալճյանը համընդդեմ գնալով այդ բոլորին, առաջ էր քաշում մի խնդիր-նպատակ, որը որքան համարձակ էր, այն–քան էլ ինքնատիպ: Այսինքն. «Մտածել: Ահա ինչ-որ կուզենք սորվիլ: Սորվիլ մեր ընթեր–ցողներուն, մանավանդ մեր երիտասարդ ընթերցողներուն հետ: Մտքի «տիսիբլին» ստեղ–ծել, այս է մեր նպատակը: «Հերկը» հրավեր մըն է՝ ուղղված հայ հասարակության և ի մաս–նավորի հայ երիտասարդության անխտիր: Պետք է ազգային-հավաքական մտածումի տի–սիբլին ստեղծել»:

Ի՞նչ եղավ այսպիսի կտրվածքով «ամսագրային» գործունեություն ծավալելու հետևանքը, ի՞նչ արդյունքների հասավ «Հերկ» ամսագիրն ու նրա երիտասարդ խմբագիրը «մտքի տիսիբլին» ստեղծելու իր ծրագիր-նպատակադրումով, բարեմիտ ընթերցողը հեշ–տությամբ կարող է համոզվել կարդալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում վերջերս հրա–տարակված Հայրապետական «Գալիքի տեսիլքով» ժողովածուի առաջին և մանավանդ երկրորդ գրքում զետեղված գրական-հրապարակախոսական հոդվածները: Այստեղ ար–ձանագրենք միայն, որ «Ի՞նչ կը նշանակե ապրիորի», «Ի՞նչ կը նշանակե դիալեքտիք», «Քա–ջազնունին և մենք», «Բնազդ և գիտակցություն» և նման էլի ուրիշ գործերը, որոնցից շա–տերն, ի դեպ, շարունակվում էին ամսագրի մի քանի համարներում, եկան նախ ապացու–ցելու, որ հանձինս Լևոն-Կարապետ Պալճյանի ռումինահայ համայնքն ուներ մտավորա–պես կատարյալ հասունացած, ժամանակի տեսական-հասարակական մտքի բարձրագույն նվաճումներին ի մոտո ծանոթ և դրանց հենքի վրա իր ինքնուրույն տեսակետներն ու մտա–ծողության համակարգն ունեցող մի երիտասարդ մտավորական, և երկրորդ, որ պակաս կարևոր չէր, «մտքի տիսիբլին» ստեղծելու այն ծրագիր-նպատակադրումը, որը «Հերկի» և նրա շուրջ խմբավորված մի բուռ երիտասարդների ջանքերով մտադրվել էր իրականացնել նրա խմբագիրը, հիմնականում տվել էր իր բավարար արդյունքները:

Ավարտելով «Հերկի» և Լևոն-Կարապետ Պալճյանի ծավալած գործունեության այս ամփոփ բնութագրականը, արձանագրենք նաև հետևյալը:

Ամսագրի առաջին իսկ համարը քննադատական, իսկ երբեմն էլ թշնամական գրա–խոսականների մի ամբողջ համախումբ սանձազերծեց իր դեմ: Աթենքում հրատարակվող «Նոր օրն» օրինակ, «Մտածել սորվինք» խորագիրը կրող առաջնորդողում, «խակ և տաք–գլուխ երիտասարդներու» գործ համարեց ամսագիրը, գտավ, որ այնտեղ «լի են հազար ան–գամ ծամծմված մտքեր, արտահայտված կարծիքներ, որք տեղ գտած են պարբերաթերթին մեջ անխնամ կերպով»: Իսկ Փարիզի «Վեմ» երկամսյա հանդեսում Սիմոն Վրացյանը հայ–տարարեց, որ՝ «դեռ սեփական ուղի չունեցող և մտածել սովորելու կարիքը զգացող մար–դիկ, փոխանակ սովորելու, արդեն սկսել են ուրիշներին սովորեցնել»: Թուլամորթ ու եր–կյուղամիտ մեկը լիներ Լևոն-Կարապետ Պալճյանը պետք է որ ընկրկեր, հանդես գար ներողամտություն հայցող «մեղանչականներով», հավաստիացներ իր ընդդիմախոսներին, որ անպայման հաշվի կառնի նրանց դիտողություններն ու ցանկությունները: Այսպես պետք է որ լիներ հիմնականում և ըստ մեր մամուլի պատմության մեջ ընդունված ավան–դակարգի, մինչդեռ ներկա իրադրության պայմաններում եղավ բոլորովին հակառակը: Բավական է կարդալ «Գալիքի տեսիլքով» խորագիրը կրող ժողովածուում զետեղված «Բա–նավիճականները» ակնբախորեն համոզվելու համար, որ Կարապետ Պալճյանը ոչ միայն տրամադիր չէր հեզ ու խոնարհ ականջ դնելու իր ու իր խմբագրությամբ հրատարակվող պարբերականի հասցեին հերյուրվող քննադատականներին, այլև հիանալի տիրապետում էր պատասխանելու (պոլեմիկա) արվեստին: Պալճյանի բանավիճականները խստաշունչ էին, բայց արդարացի, անհրաժեշտության դեպքում զուրկ չէին երգիծական-հումորիկ երանգավորումից, և որ ընդգծելի է, բոլոր դեպքերում խստորեն պահպանվում էր ան–հրաժեշտ մասնագիտական տակտը, իր ընդդիմախոսի գործին ու մտքին, և ոչ թե նրա ան–ձին ու անհատականությանը անդրադառնալու կուլտուրան: Այսպես, օրինակ, պատաս–խանելով «Արազ» թերթում տպագրված Հակոբ Սիրունու՝ հեգնալից ու երգիծական պիտա–կավորումներով առլեցուն հոդվածին, Կարապետ Պալճյանը իր պարբերականի 1938 թ. № 9-ում հետևյալը գրեց: «Մենք միշտ պատրաստ ենք քննադատություններ լսելու և պատաս–խանելու, սակայն միայն լրջամտության սահմաններու մեջ: Հեգնություններով ու բառա–խաղերով մե՛ղք է, որ մեր ժամանակը վատնինք, մե՛ղք է թուղթին ու մելանին, մե՛ղք է նաև ընթերցողին: Ով որ ըսելիքը լրջորեն չի կրնար ըսել, կնշանակե թե իրապես ըսելիք չունի»:

Այսպիսին է սույն ժամանակահատվածի համառոտ վերլուծությունը: Եվ եթե Փարիզի «Մարտկոցը» հայտնաբերեց, իսկ «Հերկը» հիմնավորապես կատարելագործելով՝ որակական և սկզբունքային մի նոր աստիճանի բարձրացրեց Կարապետ Պալճյան-հրապարակախոսին, ապա նույն այդ «Հերկի» էջերում ծնվեց և աստիճանաբար հասունանալով, նոր երևակում ստացավ Կարապետ Պալճյան-պոլեմիստը: Նշանակալի է, որ այդ ժամանակներից սկսած ընդհուպ մինչև իր արգասավոր կյանքի վերջը Կարապետ Պալճյանը, իսկ հետագայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ը, հաստատուն հետևողականությամբ շարունակեց «աշխատել» ժուռնալիստական այդ երկու ուղղություններով, պարգևելով մեր մտավորական կյանքին ոչ քիչ թվով շահեկան հոդվածներ, որոնք չեն հնացել առ այսօր:

Իսկ դեպքերն ու իրադարձությունները իրենց բնականոն ու անքննելի ընթացքով շարունակում էին զարգանալ...

Անտեղի չէր անցել Լևոն-Կարապետ Պալճյանի մտերմությունը ռումինահայ թեմի առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի հետ, որի մասին համառոտակի հիշատակեցինք վերևում: Եվ հետևանքն այն եղավ, ինչը, գոնե սկզբնական շրջանում շատ էլ սպասելի չէր թե Պալճյան ընտանիքի, և թե՛ հենց իր՝ Կարապետ Պալճյանի համար, այսինքըն՝ հոգևոր ծառայության նվիրվելը: Ինչքան է տևել ներքին ինքնաքննության ու ոգորումների այս ժամանակաշրջանը, ինչպիսի անձնական-ընտանեկան ալեբախումների դուռ է բացել Պալճյան-որդու այս մտադրությունը, – հետաքրքիր քննության նյութ է, որը, սակայն, դուրս է մեր խնդիրներից: Այստեղ նշենք միայն, որ Կարապետ Պալճյանի որոշումը վերջնական ու անբեկանելի եղավ և ռումինահայ իրականության պայմաններում հասարակական, կրթական-աշխատանքային, հրապարակախոսական բնույթի առավել քան աշխարհիկ գործունեություն ծավալած «այդ խելացի ու բանիբուն երիտասարդը» (Հ.Ճ. Սիրունի), 1943 թ. սեպտեմբերի 20-ին, տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանի ուղեկցությամբ, Բուխարեստից ճանապարհվեց Հունաստան, վարդապետական ձեռնադրություն ստանալու համար: Սեպտեմբերի 29-30-ին, Աթենքի հայկական «Սուրբ Կարապետ» եկեղեցում, հունահայ թեմի առաջնորդ տ. Կարապետ Մազլըմյանի ձեռքով և ռումինահայ գործիչ Ռուբեն Իսրայելյանի կնքահայրությամբ, տեղի է ունենում Կարապետ Պալճյանի ձեռնադրության արարողությունը, ասես իսկական մարմնացումը հանդիսանալով տեառնընդհիրաման կարգախոսին. «Տէր աջողեաց զճանապարհս իմ» (Ծննդ. ԻԴ. 56): Ըստ այդմ՝ ընդունված ու դարերի պատմությամբ սրբագործված կարգի համաձայն, Լևոն-Կարապետ Պալճյանը

վերստանում է նոր և հայ ժողովրդի բազմադարյա անցյալն ունեցող հոգևոր դասում իր նախորդը չունեցող «Տ. Վազգեն» անունը[3]:

Մեծ ճանապարհի սկիզբը հաջողությամբ դրված էր և հասկանալի է ու բնականոն, որ այն իր հետագա զարգացումը պիտի ունենար: Այդպես էլ եղավ: Նույն թվականի նոյեմբերի 28-ին, հավարտ Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում տ. Վազգեն վարդապետի մատուցած անդրանիկ պատարագի, տեղի հայոց թեմական պատգամավորական ժողովը միաձայնությամբ, նրան ընտրում է ռումինահայ թեմի առաջնորդական տեղապահ, 1942 թ. հոկտեմբերի 23-ին մահացած Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի փոխարեն: Դեկտեմբերի 21-ին, այդ ընտրությունը վավերացնում է Ռումինական կառավարությունը: Այս պարտավորեցնող սկիզբը, սակայն, ի թիվս նորընտիր տեղապահի առջև ծառացած բազում-բազմաթիվ գործերի, մեզ համար ընդգծելի այն կողմն ուներ, որ Վազգեն վարդապետը հետևողականորեն շարունակում էր հայ հանրությանը ներկայանալ ոչ միայն ինքնուրույն ուշագրավ աշխատություններով («Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (Վերլուծական փորձ)», Բուխարեստ, 1940 թ., «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ», 1943 թ. և այլն), այլև ամենատարբեր բնույթ ու նպատակաուղղվածություն ունեցող հրապարակախոսական ոչ քիչ թվով հոդվածներով: Մեր ասածի մեջ համոզվելու համար բավական է ծանոթանալ ներկա «Մատենագիտության» մեջ զետեղված հիշյալ շրջանի նյութերին:

* * *

[3] Իր «Վազգեն» անվան կապակցությամբ, Վեհափառ Հայրապետը 1986 թ. փետրվարի 12-ին հարցազրույցի ժամանակ հետևյալը պատմեց մեզ. «Երբ արդեն հաստատապես որոշել էին հոգևորական դառնալ և պատրաստվում էի մեկնել Հունաստան ձեռնադրվելու համար, կնքահայրս, Ռուբեն Իսրայելյանը մի անգամ հարցրեց. «Լո՛ն, վարդապետ ձեռնադրվելու ժամանակ, մեր եկեղեցու ավանդական կանոնակարգի համաձայն, քո անունը պետք է փոխվի: Դու ի՞նչ անուն ես նախընտրել քո համար»: Պատասխանեցի, որ որևէ անուն ինձ համար տակավին չեմ ընտրել և որ այդ ամենը թողել եմ Կարապետ Մազլըմյանի հայեցողությանը: «Ո՛չ, ո՛չ, այդպես չի կարելի, – ինձ հակաճառեց կնքահայրս, – մի անուն քեզ համար մենք պիտի որոշենք և ես արդեն մտածել եմ այդ մասին: Եթե ես խնդրեմ, դու քեզ համար չե՞ս վերցնի վանեցի նշանավոր ազգային-ազատագրական գործիչ, բանաստեղծ, երգահան Վազգեն Տերոյանի «Վազգեն» անունը: Իմ առաջարկած այս անձնավորությունը այնպիսի համազգային մեծություն է և այնքան լայն ճանաչում ու հեղինակություն ունի ինչպես Հայաստան աշխարհում, այնպես էլ սփյուռքում, որ քեզ համար նրա անունը կրելը շատ գեղեցիկ կդիտվի: Եթե դու սկզբունքորեն համաձայն ես, ես կկարողանամ համոզել տ. Կարապետին»: Առաջարկությունը սկզբում տարօրինակ թվաց ինձ, քանզի «Վազգեն» անունը անսովոր էր և մեր հոգևորական իրականության մեջ նախօրինակը չունեցող, բայց կնքահորս մերժել չէի կարող: Տ. Կարապետ Մազլըմյանն էլ ինչ-որ անընդունելի ու արտառոց բան չգտավ այդ անվան մեջ և վարդապետական ձեռնադրության ժամանակ ինձ այդպես էլ կնքեց. «տեր Վազգեն»: Ավելացնեմ նաև, որ մանավանդ 1955 թվականից հետո, երբ ես, կամքն Աստուծո, ընտրվեցի Ամենայն Հայոց կաթողիկոս, իմ անվան հետևությամբ, մեկից ավելի եղան «տ. Վազգեն» անունով ձեռնադրված հոգևորականները»:

Իսկ պատմա-քաղաքական և հոգևորական-հասարակական դեպքերի անքննելի հոլովույթը պետք է բերեր-հասցներ 1955 թվականի սեպտեմբերի 30-ին, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական ժողովի երկրորդ նիստում, քվեից բացարձակ մեծամասնությամբ (125 կողմ) Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, հավաստելով այսպիսով, Լուսավորչի աստվածակերտ գահի 130-րդ հաջորդը լինելու՝ վերուստ տրված իր բարձր իրավունքը[4]: Ինչպես և ընդունված էր, եղան գովաբանական բազմաթիվ հոդվածներ ու ելույթներ, եղավ շնորհավորական հեռագրերի ու նամակների մեծաքանակ հոսք դեպի Էջմիածին, մեկից ավելի եղան բանաստեղծներ՝ ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում, որոնք չափածո գեղաշուք գործեր ձոնեցին Վազգեն Կաթողիկոսին և այլն: Եվ առաջին հայացքից կարծես անհասկանալի էր նորընտիր կաթողիկոսի՝ հենց այդ ժամանակներին վերաբերվող խոսքը. «Հավատացեք, – գրում էր նա, – թե բոլորովին հեռու էր Մեզմե ցանկությունը գրավելու այն տեղը, որտեղ կգտնվինք Մենք այսօր: Ավելին, ընտրության արդյունքը դիմավորեցինք գրեթե վհատության ու երկյուղի զգացումներով: Անհաղթահարելի մտահոգություններով սկսանք մեր գործը, վասնզի իբրև մեկը, որ ավելի մոտեն ծանոթ էր Մայր Աթոռի ներքին կյանքի կացության, հստակ կերպով կտեսնեինք, թե որպիսի բազմազան դժվարություններու առաջ պիտի գտնվեինք»:

Կաթողիկոսական նման մտքեր կարելի է էլի բերել և սրանք ամեննին էլ սեփական համեստաբարո կեցվածքը ցույց տալու, կամ հավուր պատշաճի ասվող խոսքեր չէին: Դժվարություններն իրոք որ շատ էին և որ կարևորն էր, դրանք թե՛ անձնական, և թե՛ համազգային-հոգևորական բնույթ ու բովանդակություն ունեին:

Նախ՝ մտորումների և կողմ-դեմ կարծիքների համար դուռ էր բանում հետևյալ հանգամանքը: Հայ ժողովուրդը «կաթողիկոսապատումը» անբեկանելի կայունությամբ արձանագրել է, որ հոգևոր այդ բարձրակետին հասած անհատները անպայման ունեցել են արդեն առաջացած և ինչ որ տեղ նույնիսկ ծերունական տարիք: Հռչակավոր Ներսես Աշտարակեցին, օրինակ, կաթողիկոսական գայիսոնը ժառանգեց 73 տարեկան հասակում, եղբամահ Խորեն Մուրադբեկյանը այդ պաշտոնին հասավ, երբ 69 տարեկան էր, Գեորգ 6-րդ Չորեքչյանը կաթողիկոսացավ 77 տարեկան հասակում և այլն: Արդ՝ նորընտիր կաթողիկոս Վազգեն Առաջինը, ի տարբերություն բոլոր հին ու նոր նախորդների, Գրիգոր Լուսավորչի աստվածակառույց գահը ժառանգեց այն ժամանակ, երբ ինքը ընդամենը ... 47 տարեկան

[4] Ավելի մանրամասն տե՛ս «Վազգեն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց. Համառոտ տարեգրություն (1908-1955)». հեղինակեց Սուրեն Շ. Վանեցի. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1986, էջ 317 և հտն.:

էր: Այսպիսի երիտասարդական տարիքը հեշտությամբ դուռ էր բանում այլևայլ բնույթի տարակույսների համար և այս առիթով ծայր առած թեր և դեմ տեսակետների առկայու– թյան փաստը արդեն հասկանալի է:

Ապա. ներքին անբեկանելի մի օրենքի համաձայն, սկսած դեռ ռուսական ցարիզմի ժամանակներից ընդհուպ մինչև մեր օրերը, կաթողիկոսական այդ բարձր պաշտոնի հա– մար խրախուսվում և պաշտպանվում էին հիմնականում այն թեկնածուները, որոնք «այս» կողմից էին, զարգացել ու դաստիարակվել էին «մեր կողմային» գաղափարաբանությամբ, որը և նա, իհարկե, նույնությամբ, պետք է ներդներ իր բոլոր աշխատանքներում: Արդ՝ նոր– ընտիր կաթողիկոս Վազգեն Առաջինը ոչ միայն չէր տեղավորվում հիշատակված կարգա– վիճակի սահմաններում, քանզի նա «այն կողմից» էր ըստ ամենայնի, այսինքն՝ թե՛ կրթու– թյամբ ու դաստիարակությամբ, թե՛ աշխարհայացքով ու մտածողությամբ, թե՛ հոգեկան-հոգեբանական կտրվածքով, այլև, որ պակաս կարևոր չէր, նա Մայր Հայրենիք-Հայաստանը առաջին անգամ տեսել և նրա հետ ի մոտո ծանոթացել էր ընդամենը 1945 թվականին, երբ ինքը 37 տարեկան էր: Այս դեպքում էլ մեծ երևակայություն պետք չէ ունենալ թեր և դեմ մտայնությունները ծնող շարժառիթները ըմբռնելու համար: Եվ եթե այս բոլորին ավելա– ցնենք աշխարհասփյուռ հայկական հոգևոր համայնքներում ծայր առած այլևայլ բնույթի մեծ ու փոքր հակառակությունները, որոնց մեն-միակ նպատակն էր ընդդիմադիր լինել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարած հոգևորական-ազգային քաղաքականությանը և ու– րեմն անբարշտության սեպեր խրել այդ քաղաքականությունն իրականացնող Առաջնորդի գործունեության ճանապարհին, ապա մեր ասելիքը կամբողջանա:

Եվ այսպիսի, առաջին հայացքից անհաղթահարելի դժվարություններին դեմ-հանդի– ման կանգնած երիտասարդ կաթողիկոսը հրաշալիորեն կարողացավ գտնել հոգևոր-ազ– գային գործունեություն ծավալելու միակ ճիշտ ու տրամաբանական ձևը, այն է՝ լայնածա– վալ վերակառուցողական աշխատանքների իրականացում թե՛ Մայր Հայրենիքի, և թե՛ Սփյուռքի՝ իրենց հետ առնչվող խնդիրների բնագավառում և որպես դրա լրացում, այդ ամենը մեծ ու փոքր հոդվածների միջոցով աշխարհին ներկայացնելու, ոչ սակավ դեպ– քերում իրեն այնքան հատկանշական շեշտակի բանավեճերի միջոցով սեփական իրավա– ցիությունն ապացուցելու ձևը: Թե ինչպիսին եղավ Տ.Տ. Վազգեն Առաջինի գործունեությու– նը հոգևոր-ազգային գետնի վրա, դրան անդրադառնալը դուրս է մեր խնդիրներից: Այստեղ արձանագրենք միայն, որ այդ արդյունքները այնքան ակնբախորեն որոշակի և բացահայ– տորեն վիթխարի եղան, որ չթաքցված հիացմունքի օվսաննաներ կորզեցին անգամ ամե– նակայուն պահպանողականներից, իսկ թերահավատներին ու կասկածամիտներին մնաց

սոսկ ընդունել իրենց շաղբաղբ մտքերի ու ճամարտակ կանխագուշակումների անփառունակ պարտությունը: Գալով գրական-հրապարակախոսական գործունեությանը, ապա սկսած 1955 թվականից մինչև իր կյանքի վերջը, չնայած գերագույն զբաղվածությանն ու գիշեր-ցերեկ չճանաչող աշխատանքային կարգաեղանակին, դարձյալ դուլ ու դադար չունեցավ Վազգեն Վեհափառի խնկելի գրիչը, պարգևեց մեզ այնպիսի ինքնատիպ հոդված-ուսումնասիրություններ, որոնք իրենց մշտակայուն տեղն են ապահովել մեր մշակույթի ոսկե ֆոնդում:

Բեյրութի հայ կաթոլիկների համայնքի առաջնորդ հ. Սահակ Կոգյանն օրինակ, հրատարակում է ձախուծուռ մի աշխատություն «Հայոց եկեղեցին» խորագրով և Վազգեն Վեհափառը անհապաղ հանդես է գալիս «Վնասաբեր մի գիրք» շեշտակի գրախոսական-հոդվածով. վերնագիրն արդեն խոսում է հոդվածի էության մասին: Սփյուռքահայ գրող Համաստեղը Բեյրութում տպագրում է «Աղոթարան» անունով «փոքրիկ հատորիկ մը» և Վազգեն Կաթողիկոսի գրախոսականը, տպագրված «Էջմիածին» ամսագրում, ավարտվում է հետևյալ ձևով. «Մենք սիրով ենք ողջունում սփյուռքահայ գրագետներից Համաստեղի «Աղոթարանի» հրատարակությունը»: Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը հրատարակում է «Նշումներ հոգևորականներու ամուսնության և կուսակրոնության մասին» տարօրինակ վերնագրով մի աշխատություն, «որի վրա չեն նշված ո՛չ թվականը և ո՛չ էլ տպագրության վայրը»: Վազգեն Կաթողիկոսը հանդես է գալիս «Սխալ և մերժելի» խորագիրը կրող, և «Էջմիածին» ամսագրում հրատարակված կտրուկ մի հոդվածով. այս դեպքում էլ հոդվածի վերնագիրը արդեն վկայում է նրա բովանդակության մասին:

Էջմիածնի ճեմարանի ուսանողները իրենց ուսանելիք առարկաների համար ունեն անհրաժեշտ ու համապատասխան դասագրքերը, բայց չունեն հոգեբանական դաստիարակության վերաբերյալ և ոչ մի մասնագիտական ձեռնարկ: Վազգեն Կաթողիկոսը անհապաղ գործի է անցնում և 1961 թվականին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրատարակում է «Հոգեբանության դասեր» խորագիրը կրող մի ձեռնարկ, որը մասնագետների միաձայն վկայությամբ, համարվում է իր տեսակի մեջ լավագույնը, և որն այսօր էլ, այսինքն՝ ավելի քան երեսուն տարի, մնում է որպես դասագիրք Մայր Աթոռի (և ոչ միայն Մայր Աթոռի) Հոգևոր ճեմարանի ուսանողության համար:

Էջմիածնի՝ 1969 թվականի Եպիսկոպոսական ժողովի կապակցությամբ, դարձյալ սրվել են հարաբերությունները: Ինչպես և պետք էր սպասել՝ Վազգեն Կաթողիկոսը «Էջմիածին» ամսագրում հանդես է գալիս «Ճշմարտությունը ամբողջ» խորագիրը կրող ընդար–

ճակածավալ մի հոդվածով, որտեղ ջրի երես է հանվում խարդավանքների այն ամբողջ շղթան, որին դիմել են «մյուս կողմայինները»:

Սփյուռքահայության մեջ վերջապես, ամեննին էլ քիչ չեն ընդդիմադիր ուժերը, որոնք, հայ եկեղեցու անաղարտությունը պաշտպանելու կեղծ ու պատիր քարոզչությամբ, փորձում են հակառակություն սերմանել: Եվ Վազգեն Կաթողիկոսը հանդես է գալիս «Ի սեր մեր եկեղեցու միության» հոդվածով, հոգածու և հանգամանորեն բացատրելով, թե որն է մեր եկեղեցու ճշմարիտ միության ուղին և ինչ է անհրաժեշտ անել, այդ ուղին ավելի ամ– րապնդելու համար և այլն, և այլն: Հայրապետական այդ հոդվածները զարմանալիորեն կուռ են, պայմանավորված երկաթե տրամաբանությամբ, ունեն անբավ փաստաթուղթ, որի հենքի վրա էլ արվում են համոզիչ ու հաստատուն եզրակացություններ, ունեն իրենց տեղի համար ճիշտ գտնված բառերի, համապատասխան արտահայտությունների, երբեմն սրա– միտ դարձվածքների ու հումորիկ արտահայտությունների կիրառումներ: Բառերը Վեհա– փառ Հայրապետի մտածողական համակարգում սոսկ միջոցներ են սեփական մտքերն ար– տահայտելու և ոչ թե սեփական մտքերը գեղեցկորեն զարդարելու համար, և գեղապաճույճ խոսքերի շարանով քողարկվելու, դիմացինին բառերի բոմբյուն-կանչվռտոցով խլացնելու, թող ներվի ասել, աշխատաոճը այդպես էլ անընդունելի մնաց նրա համար: Ապացույց՝ Հայ– րապետական ցանկացած հոդվածը, ապացույց՝ Նորին Ս.Օծության տասնյակ տարիների մտքի ու գրչի արգասիք հանդիսացող «Գալիքի տեսիլքով» ընդհանուր խորագիրը կրող երկհատոր ժողովածուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 և 1993 թթ.), որը միանգամայն նոր ծալքեր է բացում Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք, իսկ 1991 թ. Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ Տ.Տ. Վազգեն Ա-ի հոգևոր-ազգային գործունեության անդաստանում:

* * *

Ընթերցող և գիտական հասարակայնությանը ներկայացնելով մեր հոգելույս Վեհա– փառի գրական-հրապարակախոսական ժառանգության սույն «Մատենագիտությունը», նպատակ ենք ունեցել խստիվ ժամանակագրական հաջորդականությամբ տալ մեզ մատ– չելի այն բոլոր նյութերի գիտական նկարագրությունը, որոնք ավելի քան հիսուն տարիների ընթացքում դուրս են եկել Նորին Ս. Օծության խնկելի գրչի տակից: Մեր ամբողջ աշխա– տանքը մշտապես գտնվել է Վեհափառ Հայրապետի հսկողության ներքո: Տրված են տվյալ գործի վերնագիրը, առաջին հրատարակության տեղն ու թվականը, վերահրատարակու– թյունները, տարբեր լեզուներով կատարված թարգմանությունները, անհրաժեշտության

դեպքում բերված են բացատրողական բնույթի որոշ տեղեկություններ: Քանի որ Վեհափառի՝ մանավանդ Մայր Աթոռիս «Էջմիածին» ամսագրում տպագրված հոդվածների մեծ մասը անստորագիր են (զետեղված են «Էջմիածին» ամսագրի խմբագրություն» կամ «Խմբագրական» ընդհանուր խորագրի ներքո), ապա բանասիրական քրտնաթոր աշխատանք պահանջվեց մեզնից, նրանց հեղինակային պատկանելությունը ճշտելու համար. այդ աշխատանքների բովանդակությունը հանգամանորեն տրված է յուրաքանչյուր կոնկրետ հոդվածի առնչությամբ: «Մատենագիտության» սկզբում, նպատակահարմար համարեցինք տալ Նորին Ս. Օծության կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը, որը կարող է օգտակար լինել տվյալ հոդվածի կամ աշխատության գրության հետ առնչվող ժամանակաշրջանը է՛լ ավելի ճիշտ պատկերացնելու համար:Փայփայում ենք այն փոքրիկ հույսը, որ մեր կազմած «Մատենագիտությունը» մի համեստ հուշարձան կլինի Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի մահվան տարելիցի առթիվ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

1908

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Բուխարեստում (Ռումինիա) ծնվեց Կարապետ Աբրահամի Պալճյանը (հետագայում՝ Նորին Սուրբ Օծություն, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգեն Ա): Հայրը՝ Աբրահամ Կարապետի Պալճյան, մասնագիտությամբ կոշկակար, մայրը՝ Սիրանույշ Մարգարի Պալճյան, ուսուցչուհի:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23. – Բուխարեստի հայկական «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում կատարվում է Կարապետ Պալճյանի մկրտությունը: Մկրտվողին տրվում է նաև երկրորդ՝ Լևոն անունը:

1916

ՁՄԵՌ. – Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Պալճյանների ընտանիքը դուրս է գալիս Բուխարեստից և հաստատվում Օդեսայում (Ռուսաստան):

1917

ՍԿԻԶԲ. – Օդեսայում Լևոն-Կարապետ Պալճյանը սկսում է հաճախել Արմեն Շիտանյանի տնօրինության ներքո գտնվող հայկական ամառային նախակրթական դասընթացներին: Տանը, մասնավոր կարգով, ուսման թերին լրացնում է Աշոտ Սպանդարյանը:

1919

ԳԱՐՈՒՆ. – Հավարտ Առաջին համաշխարհային պատերազմի, Պալճյանների ընտանիքը թողնելով Օդեսան, վերահաստատվում է Բուխարեստում:

1920

ՍԵՊՏԵՄԲԵՐ. – Բուխարեստում, Լևոն-Կարապետ Պալճյանը սկսում է հաճախել գերմանական նախակրթարան «Էվանգելիշե շուլե» («Evangelische Schüle»)-ի չորրորդ դասարանը, որտեղ սովորում է չորս տարի:

1924

ՍԵՊՏԵՄԲԵՐ. – Սկսում է հաճախել Բուխարեստի Առևտրական բարձրագույն վարժարանը: Ուսումնառությունը տևում է չորս տարի:

1929

ՍԵՊՏԵՄԲԵՐ. – Աշխատանքի է անցնում Բուխարեստի հայկական Միսաքյան-Քեսիմյան ազգային վարժարանում, որպես օգնական ուսուցիչ և քարտուղար:

1932

ՍԵՊՏԵՄԲԵՐ. – Ուսանող է արձանագրվում Բուխարեստի Պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի առաջին կուրսում:

1933

ՄԱՐՏԻ 10. – Փարիզում հրատարակվող «Մարտկոց» օրաթերթում (№ 73), հրատարակում է իր անդրանիկ՝ «Նոր սերունդին համար» հրապարակախոսական հոդվածը «Կ. Պալճյան» ստորագրությամբ: Գրական-հրապարակախոսական գործունեության սկիզբը:

1936

ՄԻՆՉԵՎ ԱՄԱՌ. – Համալսարանական ուսումնառությանը զուգընթաց, սկսում է գրաբարի մասնավոր դասեր անցնել Հակոբ Սիրունու մոտ:

ՓԵՏՐՎԱՐ. – Պաշտպանելով «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ» վերնագրով իր ավարտաշարադրանքը, ավարտում է Բուխարեստի Պետական համալսարանը, ստանալով ուսուցիչ-մանկավարժի վկայական:

1937

ՀՈՒՆԻՍ. – Բուխարեստում, Լևոն-Կարապետ Պալճյանի խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Հերկ» գրական-մշակութային և հասարակական-քաղաքական ամսագիրը, որտեղ նա հանդես է եկել բազմաթիվ խմբագրականներով ու հոդվածներով, «Կ.», «Կ.Պ.», «Լևոն», «Լ.Պ.», «Լ.Կ.», «Կ.Պալճյան» ստորագրություններով: Տասներկու համար հրատարակվելուց հետո, 1938 թ. մայիսին «Հերկը» դադարում է:

1938

ՀՈԿՏԵՄԲԵՐ. – Բուխարեստում հրատարակվող «Գաղութահայ տարեգրքում» (խմբ. հայր Մկրտիչ Պոտուրյան) լույս է ընծայում «Անձնավորության գաղափարի մասին (մտածումներ)» պատմա-փիլիսոփայական ուսումնասիրությունը «Կ.Պալճյան» ստորագրու– թյամբ:

1940

-Բուխարեստում հրատարակվում է Կարապետ Պալճյանի «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (վերլուծական փորձ)» ուսումնասիրությունը: 62 էջ:

1942

ՍԿԻԶԲ. – Բուխարեստի հայկական համայնքի նախաձեռնությամբ, ստեղծվում է Ռումինիայում գտնվող հայ ռազմագերիներին օգնող կոմիտե, որի կազմում ընդգրկված էր նաև Լևոն-Կարապետ Պալճյանը: Կոմիտեն գոյություն ունեցավ մինչև 1944 թ. օգոստոսի 23-ը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23. – Ռումինահայ Թեմի առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Զոհ– րապյանի մահը Բուխարեստում: (Ծնվ. 1871 թ. Նոր-Նախիջևանի Մեծ Սալա գյուղում):

1943

ԿԵՍԵՐ. – Հոգևորական գործունեության անցնելու նպատակով Լևոն-Կարապետ Պալճյանը ազատվում է Բուխարեստի «Միսաքյան-Քեսիմյան» ազգային վարժարանի ուսուցչի պարտականություններից:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23. – Ռումինահայ թեմական խորհրդի առաջադրանքով՝ Բուխարես– տի հայկական եկեղեցու ավագերեց տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանի ուղեկցու– թյամբ, ուղևորվում է Աթենք, հոգևորական կոչում ստանալու:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-30. – Աթենքում, հայկական «Սուրբ Կարապետ» եկեղեցում, հունահայ թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Մազլըմյանի ձեռքով, կատարվում է Լևոն-Կարապետ Պալճյանի կուսակրոն քահանայության ձեռնադրությունը: Նորընծան վերանվանվում է **տեր Վազգեն**:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 28. – Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում, «ծովածավալ բազմության առջև» տ. Վազգեն վարդապետը մատուցում է իր անդրանիկ պատարագը: ՆՈՒՅՆ ՕՐԸ, հավարտ պատարագի, Բուխարեստի հայոց թեմական պատգամավորական ժողովը նրան ընտրում է թեմի առաջնորդական տեղապահ: ԴԵԿՏԵՄԲԵՐ 21-ին, այդ ընտ–րությունը վավերացնում է Ռումինիայի կառավարությունը:

ՏԱՐԵՎԵՐՋ. – Բուխարեստում, արևմտահայերեն հրատարակվում է Կարապետ Պալճյանի «Խրիմյան հայրիկ որպես դաստիարակ» տեսական-մանկավարժական աշխա–տությունը: 155 էջ:

1944

ՕԳՈՍՏՈՍԻ 23. – ՈՒկրաինական երկրորդ ռազմաճակատի զորամասերը, Ռումի–նական առաջին կամավորական դիվիզիայի հետ համատեղ, մտնում են Բուխարեստ: Ռու–մինիան ազատագրվում է ֆաշիզմի լծից:

1945

ՀՈՒՆԻՍԻ 6. – Առաջին այցելությունը հայրենիք, որպես թեմի պատվիրակության ղեկավար: ՀՈՒՆԻՍԻ 10-ին, Մայր Աթոռում ընդունելություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գեորգ Զ Չորեքչյանի մոտ: Վերադարձ Բուխարեստ ՀՈՒԼԻՍԻ 5-ին:

ԱՇՈՒՆ. – Բուխարեստում արևմտահայերեն հրատարակվում է Վազգեն վարդա–պետ Պալճյանի «Մեր պատարագը» կրոնագիտական աշխատությունը: 104 էջ և «Խոսք հայ–րենիքի մասին (ամփոփում Պուքրեշի եկեղեցվո մեջ և հրապարակային ժողովներու առթիվ արտասանած քարոզներու)» գրական-հրապարակախոսական ժողովածուն: 27 էջ:

1947

ՀՈՒՆԻՍԻ 8. – Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիի այցելությունը Բու–խարեստի հայկական «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցուն: Բարձրաստիճան հյուրին ըն–դունում և բարի գալուստի խոսքով դիմավորում է թեմի առաջնորդական տեղապահ տ. Վազգեն Պալճյանը:

1948

ՄԱՅԻՍԻ 20. – Այցելություն Մայր Հայրենիք, հաջորդ օրը ընդունելություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գեորգ Զ Չորեքչյանի մոտ: ՄԱՅԻՍԻ 23-ին, Մայր Տաճարում վար–

դապետական ծայրագունության աստիճանի տվչություն Կաթողիկոսի ձեռքով: Մեկնում Երևանից՝ ՀՈՒՆԻՍԻ 6-ին:

ՀՈՒԼԻՍԻ 25. – Ռումինահայ թեմական պատգամավորական ժողովը Վազգեն ծայ–րագույն վարդապետ Պալճյանին ընտրում է թեմի առաջնորդ: Ռումինիայի կառավարու–թյունն ընտրությունը վավերացնում է ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ին:

1 9 5 0

ԱՊՐԻԼԻ 23. – Ռումինահայ թեմի առաջնորդ տ. Վազգեն Ծայրագույն վարդապետ Պալճյանի հրամանով, թեմի բոլոր հայկական եկեղեցիներում տեղի է ունենում հոգեհան–գըստի արարողություն նվիրված 1915 թ. ապրիլյան զոհերի հիշատակին:

1 9 5 1

ՄԱՅԻՍԻ 20. – Այցելություն Մայր Հայրենիք: ՀՈՒԼԻՍԻ 8-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գեորգ Զ-ն եպիսկոպոս է ձեռնադրում տ. Վազգեն Ծայրագույն վարդապետին: Մեկնում Երևանից՝ օգոստոսի 8-ին:

1 9 5 2

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7. – Ընտրվում է Ռումինական Ժողովրդական Հանրապետության Խաղաղության պաշտպանության մշտական կոմիտեի անդամ և պարգևատրվում է «Հան–րապետության Աստղ» շքանշանով:

1 9 5 3

ՄԱՅԻՍԻ 22. – Այցելություն Մայր Հայրենիք, մեկնում Երևանից՝ Մոսկվա հուլիսի 1-ին: ՀՈՒԼԻՍԻ 25-ին Մոսկվայում պաշտոնական հանդիպում Ալեքսի պատրիարքի հետ: Մեկնում Բուխարեստ օգոստոսի 10-ին:

1 9 5 4

ՄԱՅԻՍԻ 9. – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում վախճանվում է Ամենայն Հայոց Կա–թողիկոս Տ.Տ. Գեորգ Զ Չորեքչյանը: Ծնվ. 1868 թ. նոյեմբերի 2-ին Նոր Նախիջևանում, Ամե–նայն Հայոց Կաթողիկոս էր ընտրվել 1945 թ. հունիսի 22-ին:

ՄԱՅԻՍԻ 23. – Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ժամանում է Երևան, վախճանյալ կաթողիկոսի հուղարկավորության սգահանդեսին մասնակցելու համար: ՄԱՅԻՍԻ 27-ին

հանդես է գալիս «Հայ եկեղեցվո անփոխարինելի կորուստը» դամբարանականով, ՀՈՒՆԻ–ՍԻՆ՝ ռադիոելույթով: Մեկնում՝ հունիսի 12-ին:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31. – Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ստանձնում է նաև Բուլղարահայ թեմի առաջնորդի պարտականությունները:

- Բուխարեստում, արևմտահայերեն հրատարակվում է Վազգեն եպիսկոպոս Պալճ–յանի «Հայրենի արևին տակ» ուղեգրական աշխատությունը: 112 էջ:

1 9 5 5

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23. – Երևան է ժամանում Ռումինահայ և Բուլղարահայ թեմերի առաջնորդ տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, մասնակցելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության առթիվ գումարվող Ազգային-Եկեղեցական ժողովի աշխատանքներին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30. - Ազգային-Եկեղեցական ժողովի երկրորդ նիստում, քվեից բա–ցարձակ առավելությամբ (125 կողմ: Մյուս թեկնածուն, Գարեգին արքեպիսկոպոս Խաչա–տրրյանը ստացել էր 6 կողմ), տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ընտրվում է Ամենայն Հա–յոց Կաթողիկոս:

ՀՈԿՏԵՄԲԵՐ. – Ռումինական «Օրթոդոքսիա» ամսագիրը հրատարակում է Վազգեն Կաթողիկոս Պալճյանի «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործը» ռումիներեն ուսում–նասիրությունը (“Viata si opera Stintului Grigore din Nareg”), որին հաջորդում է «Մատեան ողբերգութեան» պոեմից կատարված վեց գլուխների ռումիներեն չափածո թարգմանու–թյունը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6. – Էջմիածնի Մայր Տաճարում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ը կատարում է իր առաջին եպիսկոպոսական ձեռնադրությունը:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1. – Հայրապետական անդրանիկ կոնդակը համազգային-եկե–ղեցական վերակառուցում սկսելու, Մայր Աթոռում և սփյուռքում հոգևոր-մշակութային գործունեությանը զարկ տալու և այն առաջ մղելու մասին:

1 9 5 6

ՓԵՏՐՎԱՐԻ 1. – Ուղևորություն արտասահման, մասնակցելու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրությանն ու օծմանը: Ապա՝ Հայրապետական այցելություն Անթիլիասի, Կաhիրեի, Հռոմի, Միլանի, Վենետիկի, Լոնդոնի, Փարիզի և Մանչեստրի հայ եկեղեցիներին,

այդ երկրների հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան առաջնորդներին: ՄԱՅԻՍԻ 5-ին, վե–րադարձ Մոսկվա, ՄԱՅԻՍԻ 12-ին Մոսկվայում մեկ ժամ տևող ընդունելություն ԽՍՀՄ Մի–նիստրների Խորհրդի նախագահ Նիկոլայ Բուլգանինի մոտ, որին ներկայացվում է յոթ կե–տից բաղկացած հուշագիր Մայր Աթոռի գործունեությունը բարելավելու վերաբերյալ և մի այլ հուշագիր՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետությանը միացնելու առա–ջադրանքով: Ժամանում Մայր Աթոռ՝ մայիսի 19-ին:

ՄԱՐՏԻ 5. – Կահիրեում Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի նախագա–հությամբ, իր աշխատանքներն է սկսում Կահիրեի եպիսկոպոսական ժողովը, որը քննարկում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընտրության հարցը: Աշխատանքների ավարտ՝ մարտի 8-ին:

1957

ՀՈՒՆՎԱՐԻ 23. – ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահ Ն.Ա. Բուլգանինի կար–գադրության համաձայն, Վեհարանի նոր շենքը (67 դահլիճ և սենյակ, շուրջ 1920 քառ. մետր տարածք) հանձնվում է ի տնօրինություն Վազգեն Ա Կաթողիկոսի:

ՄԱՅԻՍԻ 17. – Հովվապետական այցելություն Նոր Նախիջևանի և Հյուսիսային Կով–կասի հայկական եկեղեցիներին: Վերադարձ՝ մայիսի 21-ին:

ՀՈՒԼԻՍԻ 5. – Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Մելքիսեդեկ Գ-ի հրավերով այցելություն Թբիլիսի: Վերադարձ՝ հուլիսի 11-ին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի, Համայն Վրաս–տանի Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկ Գ-ի և Համայն Ռուսիո Պատրիարքի ներկա–յացուցիչ Միտրոպոլիտ Սերգեյի համատեղ խաղաղության կոչը՝ պատերազմները կանխե–լու, ատոմային և ջրածնային զենքը արգելելու ու նրանց արտադրությունը դադարեցնելու մասին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18. – Ցավակցական հեռագիր Երևան, հայ գրականության դասական, ակադեմիկոս Ավետիք Իսահակյանի մահվան առթիվ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21. –Մեկնում Երևան, ի այցելություն Վարպետի աճյունին, ՀՈԿ–ՏԵՄԲԵՐԻ 22-ին, հանդիսավոր պատարագ Մայր Աթոռում, ի հանգիստ հոգվո հանգու–ցյալի:

1958

ՄԱՐՏԻ 11. – Հայրապետական շնորհավորական հեռագիր Կահիրե, Միացյալ Արաբական Հանրապետության նախագահ Գամալ Աբդել Նասերին, Հանրապետության նախագահ ընտրվելու առթիվ:

ՄԱՅԻՍԻ 9. – Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի հրավերով մեկնում Մոսկվա, Ռուսական Պրավոսլավ եկեղեցու պատրիարքության վերահաստատման 40-ամյակի հանդիսություններին մասնակցելու համար: ՄԱՅԻՍԻ 13-ին, Հայրապետական ելույթ Զագորսկում, վերադարձ Մայր Աթոռ՝ մայիսի 22-ին:

ՀՈՒԼԻՍԻ 15. – Հայրապետական ՈՒղերձ Ստոկհոլմի խաղաղության համաշխարհային կոնգրեսին, ազգերի խաղաղ գոյակցությունն ու ճշմարիտ բարեկամությունը ամրապնդելու մասին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20. – Աշխատանքային այցելություն Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանին. քննարկվում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ազգային-եկեղեցական հարցեր:

1959

ԱՊՐԻԼԻ 11. – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Հայոց Առաքելական Եկեղեցու Սահմանադրության նախագիծը քննող ժողովը: Աշխատանքների ավարտ՝ ապրիլի 13-ին:

ՄԱՅԻՍԻ 24. – Խաղաղության պաշտպանության Խորհրդային կոմիտեի հրավերով, ուղևորություն Մոսկվա: ՄԱՅԻՍԻ 26-ին, Հայրապետական ելույթ կոմիտեի պլենար նիստում, վերադարձ Մայր Աթոռ, հունիսի 3-ին:

ՀՈՒՆԻՍ. – Խաղաղության պաշտպանության գործին մատուցած անձնվեր ծառայությունների համար պարգևատրվում է «Խաղաղության պաշտպանության համար» շքանշանով:

ՀՈՒԼԻՍԻ 10. – Հայրապետական կոնդակ Եղիշե պատրիարք Դուրյանի ծննդյան հարյուրամյակը հավուր պատշաճի նշելու և համապատասխան հոգևոր ու աշխարհիկ հանդիսություններ կատարելու մասին:

1960

ՓԱՏՐՎԱՐԻ 12.- Ուղևորություն Մոսկվա, Խաղաղության պաշտպանության Խորհրդային կոմիտեի համագումարին մասնակցելու համար: ՓԵՏՐՎԱՐԻ 15-ին, Հայրապետական ելույթ ռուսերեն, վերադարձ՝ փետրվարի 20-ին:

ՄԱՅԻՍԻ 20. – Հայրապետական ուղևորություն արտասահման, այցելություն Միացյալ Նահանգների, Կանադայի, Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Ֆրանսիայի հայկական հոգևոր կենտրոններին: ՀՈՒՆԻՍԻ 20-ին, Վաշինգտոնում այցելություն քաղաքագլուխ Ռոբերտ Մեկլատոնին, ՀՈՒՆԻՍԻ 24-ին՝ Տորոնտոյի նահանգապետին, ՕԳՈՍՏՈՍԻ 23-ին, Բրազիլիայում, Հանրապետության նախագահ Գուբիշեկին, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ին, Լիսաբոնում վարչապետ Անտոնիո Սալազարին, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ին, Փարիզում, Ֆրանսիայի հանրապետության նախագահին, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ին Մոսկվայում՝ ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ Ալեքսեյ Կոսիգինին: Վերադարձ Մայր Աթոռ՝ հոկտեմբերի 3-ին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27. – Հայրապետական հրավերով Սուրբ Էջմիածին են ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին և Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ը: ՆՈՒՅՆ ՕՐԸ, հոգևոր երեք պետերի այցելությունը Հանրապետության Մինիստրների Խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանին:

1961

ՓԵՏՐՎԱՐԻ 2. – Հայրապետական մասնակցություն Երևանում տեղի ունեցող Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի համագումարին, որտեղ և՝ ընդարձակ ելույթ նվիրված աշխարհի խաղաղությանը:

ՀՈՒՆԻՍԻ 13. – Ուղևորություն Պրագա, Խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական առաջին կոնգրեսին մասնակցելու համար: ՀՈՒՆԻՍԻ 14-ին, ելույթ կոնգրեսում «Խաղաղություն և քրիստոնեական արդարություն» թեմայով: Վերադարձ Մայր Աթոռ՝ հունիսի 18-ին:

ՀՈՒԼԻՍԻ 4. – Ուղևորություն Վիեննա, նախագահելու տ. Գարեգին Պատրիարք Խաչատրյանի թաղման արարողությանը: Այցելություն Վիեննայի հայկական համայնքին և տեղի Մխիթարյան միաբանությանը: ՀՈՒԼԻՍԻ 21-ին, Վիեննայում այցելություն Ավստրիայի վարչապետ դոկտ. Գորբախին: Վերադարձ Մայր Աթոռ՝ հուլիսի 27-ին:

ՕԳՈՍՏՈՍԻ 25. – Հայրապետական Կոնդակ հայ գրերի ստեղծող և հայ գրականության սկզբնավորող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15. – Մայր Աթոռի նորաշեն տպարանի բացման հանդիսավոր արարողությունը Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ:

1962

ԱՊՐԻԼ. - «Էջմիածին» ամսագիրը (№ 4) «Խմբագրական» ընդհանուր խորագրի ներքո հրատարակում է Վեհափառ Հայրապետի «Վնասաբեր մի գիրք» անստորագիր հոդվածը:

ԱՊՐԻԼԻ 26. – Հայրապետական նամակ-դիմում Ժնև, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարությանը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին այդ կազմակերպությանն անդամագրելու մասին: ՕԳՈՍՏՈՍԻ 27-ին կայացած նիստում Հայրապետական նամակ-դիմումը հարգվում է միաձայնությամբ:

ՀՈՒԼԻՍԻ 9. – Ուղևորություն Մոսկվա, մասնակցելու ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսին: ՀՈՒԼԻՍԻ 14-ին, Հայրապետական ելույթ «Աստված սեր է և խաղաղություն» թեմայով: Վերադարձ Մայր Աթոռ հուլիսի 14-ին:

ՕԳՈՍՏՈՍԻ 22. – Հայրապետական Կոնդակ Պոլսի հայոց պատրիարքության հաստատման հինգհարյուրամյակի առթիվ: Դրվատված է նրա ազգային-հոգևոր և մշակութային մեծ դերը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30. – Մայր Աթոռում, Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովը: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ին, Հայրապետական զեկույց Ժողովի յոթնամյա գործունեության մասին, աշխատանքների ավարտ հոկտեմբերի 8-ին, «Խաղաղության բանաձևի» ընդունումով:

1963

ՀՈՒՆԻՍԻ 29. – Հովվապետական այցելություն Շիրակի թեմին, ՀՈՒԼԻՍԻ 30-ին՝ Հայրապետական պատարագ և քարոզ Լենինականի «Սուրբ Աստվածածին» եկեղեցում: Վերադարձ՝ հուլիսի 2-ին:

ՀՈՒԼԻՍԻ 13. – Հայրապետական հրավերով Սուրբ Էջմիածին է ժամանում Թուրքիայի հայոց պատրիարք տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը: ՀՈՒԼԻՍԻ 22-ին, եր–

կու հովվապետների այցելությունը ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25. – Հայրապետական հրավերով՝ Սուրբ Էջմիածին է ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին: ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ին, երկու հայրապե– տերին ընդունում է ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Նագուշ Հա– րությունյանը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2. – Հովվապետական այցելություն Երուսաղեմի հայոց պատրիար– քությանը և Լոնդոնի, Եգիպտոսի, Հնդկաստանի հայոց թեմերին: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-ին, Լոն– դոնում հանդիպում արքեպիսկոպոս Մայքլ Ռամզիի հետ: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ին, Երուսա– ղեմում Հայրապետական «Կոչ մեր սիրեցյալ ժողովուրդին» ուղերձի հրապարակում: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ին Ամմանում այցելություն Հորդանանի թագավոր Հուսեին Ա-ին: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ին հանդիպում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ.Տ. Խորեն Ա-ի հետ և պատմական ողջագուրումը: ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ին, Դելիում այցելություն Հնդկաստանի հանրապետության նախագահ Սարվապալի Ռադհակրիշնանին, ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ին՝ վարչապետ Ջավահարլալ Ներուին: Վերադարձ՝ դեկտեմբերի 26-ին:

1964

ՕԳՈՍՏՈՍԻ 17. – Հայրապետական Կոնդակ Ապրիլյան եղեռնի հիսնամյակի առթիվ: Վերլուծվում են ցեղասպանությունը ծնող պատճառները և տրվում են հրահանգներ այդ հիշատակը հավերժացնելու համար:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14. – Հայրապետական ուղերձ Կաթոլիկ եկեղեցու քահանայապետ Պողոս Զ պապին, Քենտրբերիի արքեպիսկոպոս Մայքլ Ռամզիին և Եկեղեցիների համաշ– խարհային խորհրդի նախագահ Վիսերտ դը Հուֆտին, առաջիկա՝ ապրիլի 24-ին կայանա– լիք Եղեռնի սգահանդեսին իրենց հոգևոր մասնակցությունը բերելու մասին:

1965

ՀՈՒՆՎԱՐԻ 12. – ՈՒղևորություն արտասահման, Ադիս Աբեբայում գումարվելիք Արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների հոգևոր պետերի համաժողովին մասնակցելու համար, ապա այցելություն Կահիրեի, Փարիզի, Լոնդոնի հայկական համայնքներին: ՀՈՒՆՎԱՐԻ 20-ին, Ադիս Աբեբայում հանդիպում Եթովպիայի կայսր Հայլե-Սելասիե Ա-ի հետ, ՀՈՒՆՎԱՐԻ 25-ին Կայսեր փոխայցելությունը: ՓԵՏՐՎԱՐԻ 4-ին, Փարիզում այցելու–

թյուն զորավար Անդրանիկի շիրմին, ՓԵՏՐՎԱՐԻ 10-ին, Լոնդոնում՝ Քենտրբերիի արք– եպիսկոպոս Մայքլ Ռամզիին: Վերադարձ՝ փետրվարի 20-ին:

ԱՊՐԻԼԻ 24. – Հրապարակվում է Հայրապետական «Խոսք աղոթքի և ուխտի» խոր– րագիրը կրող ուղերձը Ապրիլյան եղեռնի հիսնամյա սգատոնի առթիվ:

ՀՈՒԼԻՍԻ 10. – Ուղևորություն Հելսինկի, Խաղաղության և ընդհանուր զինաթափ– ման համաժողովին մասնակցելու համար: ՀՈՒԼԻՍԻ 12-ին, Հայրապետական ելույթ հա– մաժողովում, վերադարձ՝ հուլիսի 17-ին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28. – Ապրիլյան եղեռնի հիսնամյա սգատոնի և Տ.Տ. Վազգեն Կաթողի– կոսի գահակալության տասներորդ տարեդարձին նվիրված հանդիսություններ Մայր Աթո– ռում: Ավարտ՝ նոյեմբերի 9-ին:

1966

ՓԵՏՐՎԱՐԻ 23. – Ուղևորություն Մոսկվա, Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի անվանակոչության և հանդիսություններին մասնակցելու համար: ՓԵՏՐՎԱՐԻ 27-ին ող– ջույնի խոսք հոբելյարին՝ ֆրանսերեն: Վերադարձ Մայր Աթոռ մարտի 4-ին:

ՄԱՐՏԻ 11. – Հայրապետական ողջույնի խոսք սփյուռքահայ արձակագիր Համաս– տեղի (Համբարձում Հովհաննեսի Կելենյան) գրական-մշակութային գործունեության հիս– նամյակի և ծննդյան յոթանասունամյակի առթիվ:

1967

ՓԵՏՐՎԱՐԻ 5. – Հայրապետական Կոնդակ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, բա– նասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Առաքել Առաքելյանին, նրա ծննդյան ութսունամյակի առթիվ:

ՄԱՐՏԻ 30. – Հայրապետական հրավերով, Սուրբ Էջմիածին է ժամանում Եկեղեցի– ների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտոր Էոժեն Բլեյկը:

ԱՊՐԻԼԻ 25. – Հայրապետական այցելություն Մոսկվա, Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին: Վերադարձ՝ մայիսի 2-ին:

ՀՈՒԼԻՍԻ 6. – Ուղևորություն Ժնև, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտ– րոն: ՀՈՒԼԻՍԻ 11-ին ելույթ նվիրված միջեկեղեցական հարաբերությունների հարցերին, վերադարձ՝ օգոստոսի 19-ին:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 18. – Հայրապետական Կոնդակ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Տ.Տ. Ալեքսիին, նրա ծննդյան ութսունամյակի առթիվ: Տեղեկացվում է, որ Նորին Սրբությունը պարգևատրվել է Գրիգոր Լուսավորչի Ա Կարգի շքանշանով:

1968

ՀՈՒՆՎԱՐԻ 8. – Ուխտագնացություն Երևան, աղոթելու Ծիծեռնակաբերդի Ապրիլ– յան եղեռնի նահատակների հուշարձանի առաջ:

ԱՊՐԻԼԻ 16. – Ուղևորություն արտասահման, հովվական այցելություն տալու Ավստրիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի և Ֆրանսիայի հայկական համայնքներին: ԱՊՐԻԼԻ 26-ին, Նյու-Յորքում քաղաքագլուխ Ջոն Ֆ. Լինտզիի այցելությունը Վեհափառին, ՄԱՅԻՍԻ 2-ին Հայրապետական այցելություն ՄԱԿ-ի ընդհա– նուր քարտուղար ՈՒ Տանին, ՀՈՒԼԻՍԻ 22-ին, Փարիզում այցելություն քաղաքագլուխ Բեռ– նար Ռոշեին: Վերադարձ Մայր Աթոռ՝ հուլիսի 27-ին:

ՄԱՅԻՍԻ 26. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի կոնդակը «Նոր ավետիս հայության» խորագրով՝ Սարդարապատի ճակատամարտի հիսնամյակի առթիվ:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24. – Մայր Աթոռ է ժամանում գերմանացի արձակագիր, հրապարա– կախոս Արմին Թեոֆիլ Վեգները և արժանանում Հայրապետական ընդունելության:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 9. – Հայրապետական ուղերձ «Օրհնություն Սուրբ Էջմիածնից» խորա– գրով, քաղաքամայր Երևանի 2750-ամյակի առթիվ:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21. – Պատրիարք Ալեքսիի հրավերով՝ աշխատանքային ուղևորու– թյուն՝ Մոսկվա, Միջեկեղեցական Խորհրդակցական ժողովին մասնակցելու համար: Վե– րադարձ՝ դեկտեմբերի 25-ին:

1969

ՀՈՒՆՎԱՐԻ 24. – Հայրապետական Կոնդակ հայ երգարվեստի դասական Կոմիտաս վարդապետի (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան) ծննդյան հարյուրամյակի առթիվ:

ՄԱՅԻՍԻ 17. – Աշխատանքային ուղևորություն Վիեննա, Ալեք Մանուկյանի և Տա–տուր Տատուրյանի հետ հանդիպելու համար: Վերադարձ Մայր Աթոռ՝ մայիսի 24-ին:

ՀՈՒՆԻՍԻ 1. – Հայրապետական կոնդակ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանին, ամսագրի հրատարակության քսանհինգամյակի առթիվ: Դրվատված է խմբագրի և պարբերականի ազգանվեր գործունեությունը:

ՀՈՒԼԻՍԻ 1. – Ուղևորություն Զագորսկ, քրիստոնեական եկեղեցիների և մահմե–դական, հրեական ու բուդդայական կրոնական կազմակերպությունների համագումարին մասնակցելու համար: ՆՈՒՅՆ ՕՐԸ, Հայրապետական ելույթ համագումարում՝ ֆրանսերեն: ՀՈՒԼԻՍԻ 4-ին, ճառ համագումարի փակման առթիվ: Վերադարձ հուլիսի 7-ին:

ՕԳՈՍՏՈՍԻ 30. – Հայրապետական ողջույնի գիր Լոս-Անջելես, ազգային հերոս Սո–ղոմոն Թեհլիրյանի հուշարձանի բացման առթիվ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ – ՆՈՅԵՄԲԵՐ. - «Էջմիածին» ամսագիրը (№ 10-11) արևմտահայերեն «Խմբագրական» ընդհանուր խորագրի ներքո հրատարակում է Վեհափառ Հայրապետի «Սխալ և մերժելի» անստորագիր առաջնորդողը:

1970

ՀՈՒՆՎԱՐԻ 21. – Հայրապետական Կոնդակ Առաքել վարդապետ Դավրիժեցու մահ–վան երեքհարյուրամյակի և այդ առթիվ հավուր պատշաճի նախապատրաստություններ սկսելու մասին:

ՓԵՏՐՎԱՐԻ 13. – Հայրապետական Կոնդակ Ներսես Ե Կաթողիկոս Աշտարակեցու ծննդյան երկուհարյուրամյակի առթիվ: Հրահանգավորում է ըստ պատշաճի նշել նրա արժանավոր հիշատակը:

ԱՊՐԻԼԻ 20. – Ուղևորություն Մոսկվա, մասնակցելու Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիի թաղման սգահանդեսին: ԱՊՐԻԼԻ 21-ին հոգեհանգստի արարո–ղություն հայկական ծեսով, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, վերադարձ՝ ապ–րիլի 22-ին:

ՄԱՅԻՍԻ 3. – Ուղևորություն Հռոմ, այցելելու Նորին Սրբություն Պավղոս Զ Պապին: ՄԱՅԻՍԻ 12-ին Վատիկանում, երկու քահանայապետները ստորագրում են «Համատեղ հայ–տարարություն» ի պաշտպանություն խաղաղության: Ապա՝ այցելություն Վենետիկի

Մխի-թարյաններին և Ֆրանսիայի հայկական համայնքին: Վերադարձ Մայր Աթոռ՝ հունիսի 20-ին:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 26. – Հայրապետական Կոնդակ Մկրտիչ Կաթողիկոս Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ) ծննդյան հարյուրիհիսունամյակի առթիվ: Հոբելյարը բնութագրված է «իբրև խորհուրդ, իբրև կարապետ, իբրև պատգամ»:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28. – Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան հարյուրամյակին: Վերջում հավուր պատշաճի օրհնության խոսքով հանդես է գալիս նա–խագահողը:

1 9 7 1

ՄԱՐՏԻ 10. – Հայրապետական Կոնդակ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանին, Գերմանիայում հայկական կրոնական համայնք կազմակերպելու և այդ կապակցությամբ նախնական պատրաստություններ սկսելու մասին:

ՀՈՒՆԻՍԻ 18. – Հայրապետական ցավակցական հեռագիր Երևան,ականավոր բա–նաստեղծ Պարույր Սևակի (Պարույր Ռաֆայելի Ղազարյան) ողբերգական մահվան առթիվ: ՀՈՒԼԻՍԻ 4-ին Էջմիածնի Մայր Տաճարում կատարվում է հոգեհանգստի մասնավոր պաշ–տոն, որտեղ դամբանականով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

ՀՈՒԼԻՍԻ 9. – Աշխատանքային այցելություն Ժնև, Մայր Աթոռի հետ առնչվող հար–ցերով: ՀՈՒԼԻՍԻ 13-ին Ժնևում այցելություն Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար Էժեն-Կարսոն Բլեյկին, ՀՈՒԼԻՍԻ 26-ին Մոսկվայում՝ Համայն Ռուսիո պատրիարք Պիմենին: Վերադարձ Մայր Աթոռ՝ հուլիսի 27-ին:

1 9 7 2

ՀՈՒՆՎԱՐԻ 28. – Հայրապետական Կոնդակ Մայր Աթոռի տպարանի հիմնա–դրության երկուհարյուրամյակի առթիվ: Դրվատված է հիմնադիր Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի ազգանվեր գործունեությունը և նրա «հիմնարկության» աշխատանքը:

ՄԱՅԻՍԻ 10. – Հայրապետական ցավակցական կոնդակ Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սերգեյի Սարյանի մահվան առթիվ: ՄԱՅԻՍԻ 11-ին հոգեհանգստի մասնավոր պաշտոն Մայր Տաճարում, ի ներկայության Վեհափառ Հայրապետի:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3. - Հայրապետական Կոնդակ Սարդարապատի հերոսամարտում զոհվածների հիշատակը ամեն տարի մայիսի 20-ին սփյուռքի և հայկական բոլոր եկեղեցիներում նշելու մասին:

1973

ՀՈՒՆՎԱՐԻ 16. – Հայրապետական Կոնդակ Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ: 1973 թվականը համարվում է հոբելյանական տարի, տրվում են կոնկրետ հրահանգներ հոբելյանը հավուր պատշաճի նշելու համար:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16. – Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան արարողություն ի հիշատակ ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Սարգսի Իսրայելյանի: Իր դամբանական խոսքում Վեհափառը բարձր է գնահատել հանգուցյալին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5. – Հայրապետական խոսք «Սուրբ Հռիփսիմե» տաճարում, Ներսես Շնորհալի կաթողիկոսի մահվան 800-ամյակի առթիվ: Բարձր է գնահատված «հոգելույս կաթողիկոսի գործն ու արդյունքը»:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25. – Հայրապետական ուղևորություն Մոսկվա, Խաղաղության համաշխարհային համաժողովին մասնակցելու համար: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29 –ին ելույթ համաժողովում՝ ֆրանսերեն, վերադարձ՝ նոյեմբերի 3-ին:

1974

ՄԱՐՏԻ 18. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի Կոնդակը Կիլիկյան Հայաստանի գոյատևման երեքհարյուրամյակը նշելու և 1975 թվականը համարելու Ամենայն Հայոց Հայրապետության Կիլիկյան շրջանի հիշատակի տարի:

ԱՊՐԻԼԻ 4. – Հայրապետական ցավակցական հեռագիր Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժորժ Պոմպիդուի մահվան առթիվ:

ԱՊՐԻԼԻ 24. – Հանդիսավոր սուրբ պատարագ Մայր Տաճարում, Ապրիլյան եղեռնի հիսունիններորդ տարեդարձի առթիվ: Հավուր պատշաճի քարոզով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

ՄԱՅԻՍԻ 19. – Հանդիսավոր սուրբ պատարագ և հոգեհանգիստ Մայր Տաճարում, Տ.Տ. Գեորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսի մահվան քսաներորդ տարելիցի առթիվ: Վերջում, հավուր պատշաճի քարոզով, հանդես է գալիս Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28. - Վազգեն Ա Կաթողիկոսի նախագահությամբ և հավուր պատ–շաճի քարոզով, տեղի է ունենում Ղազարապատի վերակառուցված շենքի հանդիսավոր բացումը:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12. – Հայրապետական ողջույնի գիր դոկտոր-պրոֆեսոր Վազգեն Արտաշեսի Հակոբյանին, «Մեսրոպ Մաշտոցյան» մրցանակի դափնեկրի տիտղոս ստա–նալու առթիվ:

1975

ԱՊՐԻԼԻ 24. – Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի գլխավորությամբ եկեղեցականների և հավատացյալների ստվար թափորը Մայր Աթոռում գտնվող «Նահատակաց հուշարձանի» առջև կատարում է հոգեհանգստի արարողություն:

ԱՊՐԻԼԻ 28. – Վեհափառ Հայրապետի տասներորդ ուղևորությունը արտասահման՝ Ռումինիայի, Բուլղարիայի, Լոնդոնի, Փարիզի, Ամմանի և Երուսաղեմի հայ հավատա-ցյալներին այցելելու համար: ՄԱՅԻՍԻ 6-ին Բուխարեստում պաշտոնական այցելություն Ռումինական եկեղեցու առաջնորդ Ժուստինիան պատրիարքին, ՄԱՅԻՍԻ 17-ին Սոֆիա–յում, Բուլղարական Օրթոդոքս եկեղեցու պետ Մաքսիմ պատրիարքին, ՄԱՅԻՍԻ 28-ին վե–րադարձ Մոսկվա և հաջորդ օրը հանդիպում Տ. Պիմեն պատրիարքի հետ: ՀՈՒՆԻՍԻ 5-ին ուղևորություն Լոնդոն, ՀՈՒՆԻՍԻ 12-ին ժամանում Փարիզ, ՀՈՒՆԻՍԻ 20-ին ժամանում Ամման (Հորդանան): ՀՈՒՆԻՍԻ 21-ին մեկնում Երուսաղեմ, ՀՈՒՆԻՍԻ 24-ին այցելություն Բեթղեհեմ: ՀՈՒԼԻՍԻ 3-ին ժամանում Փարիզ, ՀՈՒԼԻՍԻ 5-ին՝ Մոսկվա: Վերադարձ Մայր Աթոռ՝ հուլիսի 8-ին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28. – Հանդիսություններ Մայր Աթոռում, նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի գահակալության քսաներորդ տարեդարձին:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 9. – Հանդիսություններ Մայր Աթոռում, նվիրված հայ գրականության դասական Ավետիք Իսահակյանի ծննդյան հարյուրամյակին: Մայր Տաճարում հոգեհան–գստի արարողություն և Հայրապետական քարոզ, երեկոյան՝ Վեհափառ Հայրապետի նա–խագահությամբ հոբելյանական հանդիսավոր նիստ:

1976

ԱՊՐԻԼԻ 21. – Վեհափառ Հայրապետի նամակը Վենետիկի Մխիթարյան Միաբանության աբբահայր Պողոս Անանյանին: Հավաստելով «Մայր Աթոռիս համեստ միջոցներեն» հինգ հազար դոլարի առաքումը, դրվատված է Մխիթարյանների ազգանվեր գործունեությունը:

ՀՈՒՆԻՍԻ 26. – Աշխատանքային այցելություն Փարիզ և Ժնև: Հայրապետական այց տեղի հայկական եկեղեցիները, մշակութային կենտրոնները և մտավորական գործիչներին: Վերադարձ՝ հուլիսի 14-ին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25. – Մեռոնօրհնեքի արարողություն և Վազգեն Ա-ի գահակալության քսանհինգամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում: Ավարտ՝ հոկտեմբերի 5-ին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27. – Մայր Աթոռ է ժամանում ամերիկահայ արձակագիր Վիլիամ Սարոյանը և արժանանում Հայրապետական ընդունելության: Տեղի է ունենում շուրջ երկու ժամանոց զրույց, «բացառիկ ջերմ պայմաններում»:

1977

ՓԵՏՐՎԱՐԻ 20. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի Կոնդակը Լոնդոնում հիմնադրված «Հայկական երաժշտական ինստիտուտի» գործունեությունն սկսելու առթիվ: Հայրապետական օրհնություններից հետո, ինստիտուտին բարեմաղթում է աշխատանքային հաջողություններ:

ՀՈՒՆԻՍԻ 4. – ՈՒղևորություն Մոսկվա, Կրոնական Գործիչների Համաշխարհային համաժողովին մասնակցելու համար: ՀՈՒՆԻՍԻ 6-ին, Հայրապետական ելույթ համաժողովում ֆրանսերեն, «Խոսք խաղաղության» թեմայով, վերադարձ Մայր Աթոռ՝ հունիսի 11-ին:

ՕԳՈՍՏՈՍԻ 29. – Հայրապետական Կոնդակ Կ. Պոլսի Հովհաննես Կոլոտ (Բաղիշեցի) պատրիարքի ծննդյան երեքհարյուրամյակի առթիվ: Դրվատված է պատրիարքի ազգանվեր գործունեությունը և նշված են կոնկրետ անելիքներ հոբելյանը հավուր պատշաճի նշելու համար:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29. – Մայր Աթոռ է ժամանում Քենտրբերիի (Անգլիա) արքեպիս–կոպոս, դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանը: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ին երկու հայրապետների «համատեղ հայտարարության» ստորագրումը, նվիրված աշխարհում խաղաղության պաշտպանությանը:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10. – Հայրապետական ողջույնի և օրհնության գիր Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանին, նրա ծննդյան ութսունամ–յակի առթիվ:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13. – ՈՒղևորություն Զագորսկ, Խորհրդային Միության եկեղեցի–ների և կրոնական այլ համայնքների ներկայացուցիչների համաժողովին մասնակցելու համար: ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ին ֆրանսերեն ելույթ «ընդդեմ նեյտրոնային ռումբի արտա–դրության ու գործադրման» թեմայով: Վերադարձ Մայր Աթոռ՝ դեկտեմբերի 15-ին:

1978

ՀՈՒՆՎԱՐԻ 28. – Հայրապետական ուղևորություն արտասահման, այցելելու Իրաքի և Փարիզի հայկական թեմերին: Վերադարձ՝ փետրվարի 21-ին:

ՄԱՅԻՍԻ 27. – Հանդիսավոր պատարագ և հոգեհանգստի արարողություն Մայր Տա–ճարում, ի հիշատակ երգահան Արամ Խաչատրյանի մահվան ութօրեքի: Այս առթիվ Վե–հափառ Հայրապետի դամբանականը:

ՄԱՅԻՍԻ 19. – Հայրապետական հրավերով Մայր Աթոռ է ժամանում Եթովպիայի ուղղափառ եկեղեցու պատրիարք Աբբա Թեքլե Հայմանոթը: ՄԱՅԻՍԻ 22-ին աշխարհի ժո–ղովուրդների միջև խաղաղության կոչի համատեղ ստորագրում:

ՄԱՅԻՍԻ 24. – ՈՒղևորություն Մոսկվա, Ռուսական Պրավոսլավ եկեղեցու վերա–հաստատման վաթսունամյա հանդիսություններին մասնակցելու համար: ՄԱՅԻՍԻ 26-ին Հայրապետական ելույթ ֆրանսերեն, վերադարձ Մայր Աթոռ՝ մայիսի 29-ին:

ՀՈՒՆԻՍԻ 9. – ՈՒղևորություն Լոնդոն, ապա՝ Ժնև, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի աշխատանքներին մասնակցելու համար: ՀՈՒՆԻՍԻ 21-ին Հայրապետական ելույթ Ժնևում, վերադարձ՝ հունիսի 22-ին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19. – Խաղաղության պաշտպանության գործին մատուցած ծառա– յության համար և ծննդյան 70-ամյակի առթիվ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ն պարգևատրվում է «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30. – Հանդիսություններ Մայր Աթոռում, նվիրված Վեհափառ Հայ– րապետի ծննդյան յոթանասունամյակին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3. – Հայրապետական օրհնության խոսք Էջմիածին քաղաքում կանգ– նեցված 1827 թ. Օշականի ճակատամարտում զոհված զինվորների հուշարձանի առջև:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 2. – Վեհափառ Հայրապետի ուղերձը ամերիկահայ արձակագիր Վիլ– յամ Սարոյանին, նրա ծննդյան յոթանասունամյակի առթիվ:

1979

ԱՊՐԻԼԻ 14. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի «Հայտարարությունը» Էջմիածնի «Սուրբ Հռիփսիմե» վանքի պատի տակ հայտնաբերված Հռիփսիմյանց նահա– տակված կույսերի աճյունների մասին:

ՄԱՅԻՍԻ 1. – Հովվապետական այցելություն Ֆրանսիա՝ Փարիզի, Բորդոյի, Նիցցայի, Լիոնի, Սենտ-Էտիենի, Վալանսի և Դեսինի հայկական համայնքներին: Վերադարձ Մայր Աթոռ՝ հունիսի 13-ին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9. – Հայրապետական Կոնդակ ֆրանսահայ նկարիչ Գառզուին (Գառ– նիկ Հարությունի Զուլումյան), նրան «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրե– լու մասին:

1980

ԱՊՐԻԼԻ 11. – ՈՒղևորություն Վրաստան, ըստ հրավերի Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ի: ԱՊՐԻԼԻ 14-ին երկու Հայրապետների միատեղ այցելությունը Բորժոմի և Գորիի հավատացյալներին: Վեհափառի վերադարձը Մայր Աթոռ՝ ապրիլի 15-ին:

ԱՊՐԻԼ - «Էջմիածին» ամսագիրը (№ 4) արևելահայերեն «Խմբագրական» ընդհանուր խորագրի ներքո, հրատարակում է «Հայ ժողովուրդը և իր մայր եկեղեցին» անստորագիր հոդվածը, որի հեղինակն է Վեհափառը:

ՄԱՅԻՍԻ 6. – Հայրապետական ցավակցական հեռագիր Երևան, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, «Էջմիածին» ամսագրի երկարամյա խմբագիր Առաքել Գևորգի Առաքելյանի մահվան առթիվ:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 24. – Երևանում տեղի է ունենում հայրենի երկրի և սփյուռքահայության համատեղ ժողով, որին իր մասնակցությունն է բերում և Հայրապետական բովանդակալից ելույթով հանդես գալիս Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսը:

1 9 8 1

ՓԵՏՐՎԱՐԻ 10. – Հայրապետական ցավակցական հեռագիր Երևան, Գերագույն Հոգևոր խորհրդի նախկին անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր Գրիգոր Արշակի Հակոբյանի մահվան առթիվ:

ԱՊՐԻԼԻ 20. – Հովվապետական այցելություն Վիեննայի, Մյունխենի, Մայնի Ֆրանկֆուրտի և Փարիզի հայկական եկեղեցական համայնքներին: Վերադարձ Մայր Աթոռ՝ մայիսի 2-ին:

ՀՈՒՆԻՍԻ 24. – Հայրապետական Կոնդակ Կ. Պոլսի հայոց պատրիարք Հակոբ Նալյանի ծննդյան երկուհարյուրհիսունամյակի առթիվ: Դրական գնահատելով վերջինիս գործունեությունը, տրվում են կոնկրետ հրահանգներ հոբելյանը ըստ արժանվույն նշելու համար:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22. – Մայր Աթոռում, Վազգեն Կաթողիկոսի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Հայ Եկեղեցու Սահմանադրության նոր նախագծի կազմության հանձնաժողովը: Աշխատանքների ավարտ՝ հոկտեմբերի 29-ին:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20. – Վեհարանի Հանդիսությանց դահլիճում Վեհափառ Հայրապետն ընդունում է Բուխարեստի «Միսաքյան-Քեսիմյան» ազգային վարժարանի իր նախկին քառասունհինգ աշակերտ-աշակերտուհիներին: Հանդիպումն անցել է բացառիկ ջերմ մթնոլորտում:

1 9 8 2

ՄԱՐՏԻ 15. – Հայրապետական ցավակցական հեռագիր Երևան, Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի մահվան առթիվ: «Իբրև հմուտ հայագետ, իբրև առաքինի մարդ, անկրկնելի էր հանգուցյալը»:

ՄԱՅԻՍԻ 10. – Ուղևորություն Մոսկվա, Խաղաղության պաշտպանության կրոնական գործիչների համաշխարհային համագումարին մասնակցելու համար, ՆՈՒՅՆ ՕՐԸ, Հայրապետական ելույթ Մոսկվայում՝ ֆրանսերեն: Վերադարձ՝ մայիսի 15-ին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23. – Հայրապետական ցավակցական հեռագիր Մոսկվա, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանի մահվան առթիվ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2. – Մայր Աթոռ են ժամանում Սփյուռքահայերի քսանհինգ հոգուց բաղկացած ազգային բարերարների խումբը, Ալեք Մանուկյանի գլխավորությամբ: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ին, «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատան հանդիսավոր բացումը և Հայրապետական ողջույնի խոսք այդ առթիվ:

1983

ՀՈՒՆՎԱՐԻ 13. – Հայրապետական ցավակցական հեռագիր պատմական գիտությունների դոկտոր, Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Հայկ Գրիգորի Մելքոնյանի մահվան առթիվ:

ՄԱՅԻՍԻ 3. – Ուղևորություն Լոնդոն և Փարիզ, ի այցելություն տեղի հայկական համայնքներին: ՄԱՅԻՍԻ 8-ին Հայրապետական պատարագ և քարոզ Լոնդոնի հայկական Սուրբ Պետրոս, ՄԱՅԻՍԻ 15-ին՝ Սուրբ Սարգիս և ՄԱՅԻՍԻ 20-ին Փարիզում՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցիներում: Վերադարձ՝ հունիսի 4-ին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27. – Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ծննդյան յոթանասունհինգ, քահանայագործության քառասուն և գահակալության քսանութերորդ եռյակ տարեդարձներին նվիրված հանդիսություններ Մայր Տաճարում:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10. – Հայրապետական Կոնդակ ֆրանսիացի հայագետ, պրոֆ. Ֆրեդերիկ-Արման Ֆեյդիին, վերջինիս «Ս. Սահակ և Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու առթիվ:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17. – Հայրապետական Կոնդակ ականավոր նկարիչ, ԽՍՀՄ Գեղարվեստի Ակադեմիայի իսկական անդամ Գրիգոր Սեպուհի Խանջյանին, «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու առթիվ:

1984

ՄԱՐՏԻ 16. – Հայրապետական ցավակցական հեռագիր Երևան, հայ գրականության դասական Հովհաննես Շիրազի (Հովհաննես Թաղևոսի Կարապետյան) մահվան առթիվ: ՄԱՐՏԻ 25-ին պատարագ և Հայրապետական քարոզ Մայր Տաճարում՝ նվիրված հանգուցյալին:

ԱՊՐԻԼԻ 20. - Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի Կոնդակը Ներսես Պատրիարք Վարժապետյանի մահվան հարյուրամյակը ըստ արժանվույն նշելու մասին: Պատրիարքը բնութագրված է որպես «իր ժամանակի հոգևորական ակնառու դեմքերից մեկը»:

ԱՊՐԻԼԻ 25. – Հովվապետական այցելություն Արգենտինայի, Բրազիլիայի, ՈՒրուգվայի և Ֆրանսիայի հայկական թեմերին: Հայրապետական պատարագներ ու քարոզներ Ս. Գրիգոր Լուսավորիչ (Բուենոս-Այրես, ԱՊՐԻԼԻ 30), Սուրբ Խաչ (Ֆլորանս, ՄԱՅԻՍԻ 1), Սուրբ Ներսես Շնորհալի (Մոնտեվիդեո, ՄԱՅԻՍԻ 13), Սուրբ Հովհաննես (Փարիզ, ՀՈՒՆԻՍԻ 4) հայկական եկեղեցիներում, բազմաթիվ հանդիպումներ կրոնական-պետական ականավոր գործիչների հետ: Վերադարձ՝ հունիսի 19-ին:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 24. – Հայրապետական այցելություն Թբիլիսի, Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ին: ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ին պատարագ և քարոզ Թբիլիսիի հայկական Սուրբ Գևորգ եկեղեցում, վերադարձ՝ նոյեմբերի 27-ին:

1985

ՀՈՒՆՎԱՐԻ 3. – Հայրապետական Կոնդակ Երկրորդ համաշխարհային պատերազմում Խորհրդային Միության տարած հաղթանակի քառասունամյակի առթիվ: Հրահանգվում է մայիսի 9-ի մոտակա կիրակին նշել պատշաճ հոգևոր հանդիսությամբ:

ԱՊՐԻԼԻ 16. – ՈՒղևորություն Մոսկվա, ԽՍՀՄ Եկեղեցական և Կրոնական ներկայացուցիչների համաժողովին մասնակցելու համար: ԱՊՐԻԼԻ 18-ին ելույթ Զագորսկում, նվիրված Հայրենական Մեծ Պատերազմի հաղթական ավարտի քառասնամյակին (ֆրանսերեն): Վերադարձ Մայր Աթոռ՝ ապրիլի 20-ին:

ՀՈՒՆԻՍԻ 14. – Հայրապետական Կոնդակ Ժնևի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» հաստատությանը, նրան կից «Հայկական մտավոր կենտրոն» հիմնելու առթիվ:

ՀՈՒԼԻՍԻ 22. – ՈՒղևորություն Մոսկվա՝ մասնակցելու Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի ծննդյան յոթանասունամյակի առթիվ կայանալիք հանդիսություննե– րին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26. – Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության երեսնամյակի առ– թիվ, տեղի է ունենում «Վարդանանք» գոբելենի հանդիսավոր բացումը (հեղինակ՝ Գրիգոր Խանջյան, մեկենաս՝ Վիոլետա Արսլանյան): Արարողության վերջում Հայրապետական բո– վանդակալից խոսք այդ առթիվ:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի նախագահու– թյամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի արտահերթ նիստ, նվիրված ջրհեղեղի հետևանքով Վե– նետիկի Մխիթարյան միաբանությանը պատճառված վնասների մասին: Որոշվում է որպես օգնություն տրամադրել քանիհինգ հազար դոլար:

1986

ՓԵՏՐՎԱՐԻ 10. – Հայրապետական Կոնդակ Հալլեի (ԳԴՀ) Ազգային համալսարանի տնօրինությանը, գերմանացի հայագետ, հայասպահպան գործիչ Հովհաննես Լեպսիուսի ծննդյան վաթսունամյակը նշելու առթիվ:

ՓԵՏՐՎԱՐԻ 20. – Հայրապետական Կոնդակ Կիպրոսի Մելքոնյան կրթական հաս– տատության վաթսունամյակի առթիվ: Բարձր է գնահատված «լուսատու այդ փարոսին» ազգանվեր գործունեությունը:

ՄԱՅԻՍԻ 17. – Վեհափառ Հայրապետի օրհնության գիրը գրական-մշակութային գործիչ, գրող, քննադատ Վահե Վահյանին (Սարգիս Հակոբի Աբդալյան), ծննդյան յոթանա– սունամյակի առթիվ:

ՄԱՅԻՍԻ 21. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի ցավակցական հեռագի– րը Չեռնոբիլի ատոմակայանում տեղի ունեցած վթարի առթիվ: Տեղեկացնում է, որ Մայր Աթոռը աղետյալների օգտին տրամադրել է հիսուն հազար ռուբլի:

ՀՈԿՏԵՄԲԵՐ. - «Էջմիածին» ամսագիրը (№ 10) արևելահայերեն, «Խմբագրական» ընդհանուր խորագրի ներքո, հրատարակում է «Ի սեր Մեր Եկեղեցու միության» անստո– րագիր հոդվածը, որի հեղինակը Վեհափառ Հայրապետն է:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17. – Հայրապետական ուղևորություն Զագորսկ, Խորհրդային Միու– թյունում գործող եկեղեցիների և կրոնական հարանվանությունների պետերի հերթական հավաքին մասնակցելու համար: Հայրապետական ելույթ Զագորսկում ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ին, վերադարձ՝ նոյեմբերի 20-ին:

1987

ՓԵՏՐՎԱՐԻ 10. – Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը Թբիլիսի՝ Վրա– ցական ԽՍՀ-ում պատահած տարերային աղետի՝ երկրաշարժի վերաբերյալ: Տեղեկացվում է, որ Մայր Աթոռը այս առթիվ տրամադրել է հարյուր հազար ռուբլի:

ՓԵՐՏՎԱՐԻ 11. – ՈՒղևորություն Մոսկվա, Միջազգային համաժողովին մասնակ– ցելու համար: ՓԵՏՐՎԱՐԻ 15-ին հանդիսավոր պատարագ ու ողջույնի խոսք հավատաց– յալներին, Մոսկվայի հայկական եկեղեցում: ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ Հայրապետական ելույթ համա– ժողովում: Վերադարձ՝ փետրվարի 18-ին:

ՄԱՅԻՍԻ 16. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի դիմումնագիրը Ստրասբուրգ, Եվրոպական Պառլամենտի նախագահությանը, 1915-1916 թվականների հայկական ցեղասպանությունը միջազգային մակարդակով ճանաչելու մասին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Էջմիածնում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում բազմամարդ հանդիսություն, նվիրված Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու նորակառույց զանգակատան բացմանը: Հավարտ հանդիսության, Հայրապետական օրհ– նության խոսք:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5. – Հայրապետական այցելություն Ամերիկայի Միացյալ Նահանգնե– րի և Կանադայի հայկական համայնքներին: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ին օրհնության խոսք Նյու- Յորքի Սուրբ Վարդան հայկական եկեղեցում, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ին հանդիպում ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պերես դե Կուելյարի հետ: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ին, Վաշինգտոնում հանդիպում պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանի հետ, ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ Հայրապետական խոսք Վաշինգտոնի հայկական եկեղեցում: ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ին, Լոս-Անջելեսում Հայրապետա– կան բացօթյա պատարագ ի ներկայության շուրջ տասնհինգ հազար հայերի: ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ին վերադարձ Մոսկվա, ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ին՝ Մայր Աթոռ:

1988

ՓԵՏՐՎԱՐԻ 5. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի հեռագիրը ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին: «Խնդրում ենք ձեզ, որ Լեռնային Ղարաբաղի հարցը Հայաստանին միանալու վերաբերյալ, արդար և օրինավոր լուծում ստանա»:

ՄԱՐՏԻ 13. – Հայրապետական սգո խոսք Մայր Տաճարում, Սումգայիթի զոհերի հի–շատակին նվիրված հանդիսավոր հոգեհանգստի ժամանակ: «Մենք ողբում ենք մահը բոլոր զոհյալների՝ անպաշտպան խաղաղ բնակիչների, աշխատավոր մարդիկ, նաև կանայք և երեխաներ»:

ՄԱՅԻՍԻ 2. – ՈՒղևորություն Ռուստով, մասնակցելու Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետների ժողովին: ՄԱՅԻՍԻ 4-ին Հայրապետական ելույթ ժողո–վում, ՆՈՒՅՆ ՕՐԸ, տարբեր դավանությունների հինգ հոգևոր պետերի հետ միասին խա–ղաղության ուղերձի ստորագրում: Վերադարձ Մայր Աթոռ մայիսի 4-ին:

ՀՈՒՆԻՍԻ 4. – ՈՒղևորություն Մոսկվա, մասնակցելու համար ռուս պրավոսլավ եկեղեցու հազարամյակին նվիրված հանդիսություններին: ՀՈՒՆԻՍԻ 10-ին ելույթ Պետա–կան օպերայում կայացած հանդիսավոր նիստում, վերադարձ Մայր Աթոռ՝ հունիսի 13-ին:

ՀՈՒԼԻՍԻ 17. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի նամակը ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին, «Լեռնային Ղարաբաղի հարցի արդար լուծման մասին»:

ՕԳՈՍՏՈՍԻ 1. – Հայրապետական ուղևորություն Մոսկվա, Պ.Մ. Դեմիչևի հետ պաշ–տոնական հանդիպման համար: Մեկ ժամ տևած հանդիպման ընթացքում քննարկվել են Լեռնային Ղարաբաղի հետ առնչվող մի քանի հիմնահարցեր:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի ծննդյան ութսուն և գահակալության երեսուներեք ամյակների առթիվ հանդիսությունների սկիզբը Մայր Աթոռում: ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ին հանդիսավոր Սուրբ պատարագ Մայր Տաճարում և հա–վուր պատշաճի Հայրապետական քարոզ:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի ցավակցական խոսքը Երևանի հեռուստացույցով, ուղղված «սգակիր հայ ժողովրդին» դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի կապակցությամբ:

1989

ՓԵՏՐՎԱՐԻ 1. – Հայրապետական ուղևորություն Ամերիկայի Միացյալ Նահանգներ, «տեղում ապահովելու համար» երկրաշարժի աղետյալներին ցույց տրվող հանգանակության գործը: ՓԵՏՐՎԱՐԻ 3-ին ժամանում Նյու-Յորք և գործարար հանդիպումներ ամերիկահայ հոգևոր դասի հետ: ՓԵՏՐՎԱՐԻ 6-ին, Նյու-Յորքում գործարար հանդիպումներ «Ամերիկայի և ամերիկահայ բիզնեսմեններու» հետ: ՓԵՏՐՎԱՐԻ 9-ին պաշտոնական հանդիպում ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշի հետ: Վերադարձ Մայր Աթոռ՝ փետրվարի 14-ին:

ՄԱՐՏԻ 2. – ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշի նամակը Վաշինգտոնից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ին: Ցավակցում է «ավերիչ երկրաշարժի առթիվ» և հավաստում իր երկրի պատրաստակամությունը օգնելու աղետյալներին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21. – Հայրապետական Կոնդակ «վաստակաշատ գրական մշակ» Զարեհ Խրախունուն: Դրվատվում է վերջինիս քառասնամյա գրական-բանասիրական և մշակութային գործունեությունը:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի նամակը Մոսկվա, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Միխայիլ Գորբաչովին: Անսքող հույս է հայտնվում, որ «Լեռնային Ղարաբաղի հարցը կհանգի արդար լուծման»:

1990

ՄԱՐՏԻ 3. – Հայրապետական Կոնդակ Մեծ եղեռնի յոթանասունհինգամյակի առթիվ: Ողբերգության բնութագրական տալուց հետո, անդրադառնալով Արցախյան հարցին հավելվում է, որ՝ «Արցախի հայերի ազգային ազատ ինքնորոշման իրավունքը թե՛ արդար է, թե՛ օրինական»:

ՄԱՅԻՍԻ 14. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի և Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ-ի համատեղ ստորագրությունը կրող ուղերձը Խորհրդային

Միության նախագահ Գորբաչովին: Հույս է հայտնվում, որ «արդարացի լուծում կստանա Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության արդարացի պահանջը»:

ՀՈԿՏԵՄԲԵՐ. – Սուրբ Էջմիածնի Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագա–հությամբ, տեղի է ունենում «Սուրբ գրոց հայկական ընկերության» հիմնադրման հանդի–սավոր արարողությունը: Ընկերությունն իր նպատակն էր համարում «Աստուծո խոսքին սպասավորության և տարածման գործը»:

1 9 9 1

ՄԱՐՏԻ 20. – Մայր Աթոռում տեղի է ունենում Վեհափառ Հայրապետի հանդիպումը հայրենի մտավորականության ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը հրավիրված էին «շուրջ վաթսուն ներկայացուցիչներ՝ գրողներ, արվեստագետներ, մշակույթի և գիտության անվանի գործիչներ»:

ԱՊՐԻԼԻ 30. – Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադե–միայի նախագահության որոշումը. իր կանոնադրության հիման վրա, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ին Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ ընտրելու մասին: Դիպլոմի պաշտոնական հանձնումը՝ նույն թվա–կանի հուլիսի 21-ին:

ՀՈՒՆԻՍԻ 5. – Երևանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ը միաձայնու–թյամբ ընտրվում է Հայկական Հանրապետության՝ Հայկական իմաստասիրական ընկերու–թյան պատվավոր անդամ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18. – Հայրապետական շնորհավորական հեռագիր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Երևան, Լևոն Տեր-Պետրոսյանին, Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվելու առթիվ: «Ձեր ազգանվեր գործակիցների հետ ձեռք ձեռքի տված՝ շարունակեք անվարան առաջ ընթանալ անկախության ճամփով»:

1 9 9 2

ՄԱՅԻՍԻ 28. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի հրահանգը հայ առաքե–լական եկեղեցու թեմակալ առաջնորդներին «Հայաստան» հայկական հիմնադրամի ստեղծման գործին իրենց գործուն մասնակցությունը բերելու մասին:

ՕԳՈՍՏՈՍԻ 11. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի նամակը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Ժնև, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոյին: Տեղեկացնելով, որ Ադրբեջանն արդեն բացահայտ պատերազմ է սկսել Հայաստանի դեմ, դիմում է «Մեծահարգ խորհրդին»՝ հայցելով նրա օգնությունը:

1 9 9 3

ՀՈՒՆՎԱՐԻ 20. – Աշխատանքային այցելություն Մոսկվա, Հայաստանի հետ առնչվող սոցիալ-տնտեսական հարցերի քննարկման համար: ՆՈՒՅՆ ՕՐԸ – պաշտոնական հանդիպում Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չերնոմիրդինի, ՀՈՒՆՎԱՐԻ 12-ին, Ռուսաստանի փոխնախագահ Ալեքսանդր Ռուցկոյի հետ: ՆՈՒՅՆ ՕՐԸ – Համատեղ հայտարարության ստորագրում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի հետ: Վերադարձ Մայր Աթոռ՝ հունվարի 23-ին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. - Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ.Տ. Վազգեն Ա-ի ծննդյան ութսունամյակի առթիվ հանդիսություններ Մայր Աթոռում: Ստացվում է ավելի քան երկու հարյուր շնորհավորական բացիկ ու հեռագիր ինչպես Սփյուռքի, այնպես էլ Մայր Հայրենիքի ամենատարբեր գործիչներից ու կազմակերպություններից:

1 9 9 4

ՀՈՒԼԻՍԻ 29. – Հայաստանի Հանրապետության Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագիրը. Ազգային և հոգևոր արժեքների պահպանության ու զարգացման գործում դրսևորած անձնուրաց նվիրումի և մատուցած բացառիկ ծառայությունների համար Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ.Տ. Վազգեն Առաջինին «Հայաստանի Ազգային հերոս» բարձրագույն կոչումը շնորհելու մասին:

ՕԳՈՍՏՈՍԻ 18. (ժամը 07.15) – Երևանում, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, վախճանվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Վազգեն Առաջինը: Թաղումը՝ օգոստոսի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Այս առթիվ Մայր Աթոռում ստացվում է ավելի քան հազար ցավակցական հեռագիր ու նամակ:

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Նոր սերունդին համար» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան»: «Մարտկոց» շաբաթաթերթ, Փարիզ, 1933 թ., № 73, մարտի 19: Տպագրվել է որպես առաջնորդող: Որոշ կրճատումներով զետեղված է Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 213-214), որտեղ ի դեպ, վերջում զետեղված «Մատենագիտական տեղեկություններ» բաժնում «Մարտկոցի» հրատարակության տեղը սխալմամբ նշված է «Պուքրեշ»: Վեհափառ Հայրապետի գրական երախայրիքն է: Ինչպես հայտնի է, մինչև իր վարդապետական ձեռնադրությունը և նոր՝ «Վազգեն» անվամբ վերամկրտելը, Նորին Ս. Օծությունը ստորագրում էր ավազանի իր անուն ազգանունով:

«Հայուն պայքարը» - ունի «գրեց Կ.Պալճյան» ստորագրությունը: «Մարտկոց» շաբաթաթերթ, Փարիզ, 1933, № 83, ապրիլի 12: Տպագրվել է որպես առաջնորդող:

> «Այսօր Երևանեն մինչև Փարիզ, կա **մեկ** անբաժանելի ոգեկան միավոր: Այդ հայու գիտակցությունն է, որ կիշխե բոլորիս վրա և ժամանակի, և տարածության մեջ կզարգանա ինք իր մեջ հակասություններ ստեղծելով, ձգտելու դեպի իրագործումը հայ հավաքականության պահանջներուն ու իրավունքներուն»:

«Մեր ապագան» - ունի «գրեց Կ.Պալճյան» ստորագրությունը: «Մարտկոց» շաբաթաթերթ, Փարիզ, 1933, № 94-95, մայիսի 10-12: Տպագրվել է որպես առաջնորդող: Որոշ կրճատումներով վերահրատարակվել է Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 215-218): Այստեղ, ի դեպ, վերջում զետեղված «Մատենագիտական տեղեկություններ» բաժնում պարբերականի հրատարակության տեղը սխալմամբ նշված է «Պուքրեշ»:

> «Անշուշտ մեր կուսակցություններեն յուրաքանչյուրը իր ծրագրով ու գործունեությամբ, մեր ժողովրդին ապագան ապահովել կձգտի: Սակայն սխալ պիտի ըլլար անոնց վստահիլ ու ալ հանգիստ քնանալ: Անոնք մեր այսօրվան իրական վիճակին առնչությամբ կմնան հոգի չունեցող խոսքեր և մեռյալ տառ: Մեր պատմության համար իրագործիչ ուժեր ըլլալե դադրած են»:

«Նոր սերունդի խնդիրը» - ունի «Կարապետ Պալճյան. Պուքրեշ» ստորագրությունը: «Մարտկոց» շաբաթաթերթ, Փարիզ, 1933, № 109-110, օգոստոսի 13-15: «Մարտկոցում» տպագրված այս չորս հոդվածների կապակցությամբ կրքոտ պատասխան-հոդվածաշարով Բուխարեստում հրատարակվող «Արազ» երկշաբաթաթերթում հանդես եկավ նրա խմբագիր Հակոբ Ճ. Սիրունին (Տես «Արազ», 1933, № 99, «Երեսուն արծաթի համար», № 103 «Հինեբուն մտավախությունը», № 104, «Զազ մը առջևեն» և հտն):

ՊԱԼՃՅԱՆԻ ՀՈԴՎԱԾԻՑ. «Մեր կարծիքով երիտասարդությունը ինք մինակ ապարեզ պետք է իջնէ հույսը դրած այն քանի մը հիներուն վրա, որոնք սկսած են զգալ իրենց սերունդին սխալը, հույսը դրած մանավանդ ինքն իր վրա: Եվ բնականաբար այս մուտքը պիտի ըլլա պայքարով, ան պիտի հարձակի հիներուն վրա, պիտի խլէ անոնց ձեռքէն ազգային նավին ղեկը, պիտի պարզէ առագաստները և վերստին զայն շարժման մեջ դնէ ճամբան շարունակելու համար: Եվ երբ կատարվի, այն ատեն կարելի է ըսել, որ նոր հոգևոր սերունդը ծնած է, ու սկսած է զարգանալ»:

1937

«Մտածումներ» - 1937 թվականի սկզբներից Լևոն-Կարապետ Պալճյանը պարբերաբար սկսում է գրի առնել կրոնա-աստվածաբանական և ազգային-հասարակական բնույթի իր աֆորիստիկ «դատումները», որոնց գրականագիտական ծավալը տատանվում է փոքրիկ պարբերությունից մինչև մեկ կարճառոտ նախադասությունը: Դրանց առաջին փունջը (110 անուն) «Մտածումներ (անտիպ)» խորագրի ներքո, հրատարակվել է Վազգեն Ա Հայրապետ Հայոց, «Գիրք երրորդ. կոնդակներ, քարոզներ, ճառեր, ելույթներ» ժողովածուում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1976, էջ 283-297): «Մտածումների» երկրորդ փունջը (40 անուն) հրատարակվել է Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրի 1968 թ. № 8-9-ում «Մտածումներ» քաղված Վեհափառ Հայրապետի 1968 թվականի ուղևորության ելույթներից» ընդհանուր խորագրի ներքո: Երկու փնջերը միավորված ձևով՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 144-161):

«Մտածումներից» - «Միայն մարդկային օրգանական իրականություն մը կրնա իրական մշակույթ մը ստեղծել, իսկ մարդկային ընկերության օրգանական իրականությունները ազգերն են»:

1937

«Ամեն զերեզմանաքար մահվան դեմ թումբ մըն է»:

1947

«Եթե մերժենք Աստուծո առաջ խոնարհիլ, ստիպված կլինենք մարդկանց առջև խոնարհելու»:

1950

«Մի՛ նմանիք անոնց, որոնք Ավետարանի պատգամները վերածած են ուրիշներուն վաճառելի ապրանքի»:

1974

«Հերկ» - գիտական, մշակութային, տնտեսական ու հասարակագիտական ամսագիր, սկսել է հրատարակվել Բուխարեստում, **1937 թ. հունիսից**, արևմտահայերեն լեզվով, Կա–րապետ Պալճյանի խմբագրությամբ (տեխնիկական վերահսկիչ՝ Ժ. Գարագաշյան): Խմբա–գիրը ամսագրում բացի իր՝ «Կ. Պալճյան» ստորագրությունից, հանդես էր գալիս նաև «Պ.», «Լեւոն», «Լ.Կ.», «Կ.Պ.», «Պ.» և «Կ» կեղծանուններով, միևնույն համարում հաճախ հանդես գալիս ամենատարբեր բնույթի ու բովանդակության 4-5 անուն գործերով: 1938 թ. մայիսին հրատարակելով իր հերթական 12-րդ համարը, «Հերկը» դադարում է «նյութական դժվա–րությունների պատճառավ»:

Ամսագրի ճակատին առկա «Հավելված «Հայ մամուլի» նշումը ունի հետևյալ պատ–մությունը: Քանի որ Ռումինական կառավարությունը շատ էլ չէր խրախուսում այլալեզու պարբերականների հրատարակությունը, առավել ևս ծնունդը, ապա հետագա բարդու–թյուններից խուսափելու համար ամսագրի խմբագիր Կարապետ Պալճյանը դիմում է Բու–խարեստում հրատարակվող «Հայ մամուլ» թերթի խմբագիր Մկրտիչ Պոտուրյանին, խնդրելով, որ նա տա իր համաձայնությունը, «Հերկը» որպես իր թերթի հավելված դիտելու մասին: Պոտուրյանը սիրով տալիս է իր համաձայնությունը և ըստ այդմ՝ «Հերկը» պաշ–տոնապես սկսվում է դիտվել որպես հավելված «Հայ մամուլի», թեև նրա հետ կապված ոչ մի հարցում Մկրտիչ Պոտուրյանը ոչ մի դեր չի ունեցել: Այդ վերտառությունը, սակայն, պահպանվում է ամսագրի ամբողջ հրատարակության ընթացքում:

Ելնելով այն բանից, որ «Հերկը» Մայր Հայրենիքում խիստ սակավագյուտ էր, արդեն մեր օրերում, 1990 թվականի կեսերին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի բարե–հաճ կարգադրությամբ, իրականացվեց պարբերականի երկրորդ անփոփոխ վիմատիպ հրատարակությունը, որը և բաժանվեց հայրենիքի գրական-մշակութային կենտրոններին: Կարապետ Պալճյանի՝ «Հերկում» տպագրված հոդվածներից ութը արտատպվել է Հայրա–պետական «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, 330 էջ), որտեղ սակայն, ծանոթագրություններում նշված է, որ նյութերը «զետեղվել են խիստ ընտրությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև որոշ կրճատումներով ու սրբագրություններով» (էջ 326): Վերոհիշյալ խորագիրը կրող ժողովածուի Բ գրքում (1993 թ., 107 էջ), «Հերկից» արտատպված հոդվածների վերաբերյալ պահպանվել է աշխատանքային նույն քաղաքականությունը: Հոդվածների ընտրությունը, նրանց կրճատումներն ու սրբա–գրությունները կատարել է Վեհափառ Հայրապետը:

> **«Հերկի» ազդարարությունից. «Հերկը»** հայ մտավորականին, հայ երիտասարդին ու առհասարակ մտավոր կյանք ապրող հայ մարդուն ու կնոջ ամսաթերթն է. «Հերկի» նպատակն է հայ ընթերցողին ներկայացնել առարկայորեն ներկա քաղաքակիրթ աշխարհի գիտական, մշակութային, ընկերային, տնտեսական կյանքի արժեքները, մտածումները, հոսանքներն ու խմորումները: «Հերկը» կուզե նաև դիտել հայ կյանքը և հայ հայրենիքը ու ապրիլ անոնց ներկային ու ապագային հետ կապված խնդիրներով: «Հերկը» կձգտի միաժամանակ դաստիարակչական դեր կատարել նոր սերունդի շարքերուն մեջ ազգային-հավաքական ուղղությամբ: «Հերկը» գրական-գեղարվեստական բաժին չունի»:

[Մտածել] – (Վերնագիր չունի, բերված է առաջին տողը). ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 1, հունիս, էջ 1: Ամսագրի առաջնորդողն է և պարզում է նրա խնդիրներն ու նպատակները:

> «Մտածել: Ահա ինչ որ կուզենք սորվիլ: Սորվիլ մեր ընթերցողներուն, մանավանդ մեր երիտասարդ ընթերցողներուն հետ: Մտքի «տեսիբլին» ստեղծել, այս է մեր նպատակը: «Հերկի» շուրջ հավաքված քանի մը երիտասարդներ, իրենց համեստ ուժերով, կուզեն մտածել ու ապրիլ նոր ժամանակներու մտածումներով ու խնդիրներով, և նաև հայ ժողովուրդի ներկայի և ապագայի հետ կապված հարցերով: Պետք է ազգային հավաքական մտածումի տեսիբլինը ստեղծել: Որովհետև մանավանդ հետ այսու, ազգովին մտածելով միայն, կարելի է ազգովին ապրիլ»:

«Ապագա ունի՞նք» - ստորագրություն «Կ. Պալճյան». «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 1, հունիս, էջ 4-6: Նույնը որոշ կրճատումներով՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 219-223): Նույնը համառոտ՝ «Երկիր ավետյաց» շաբաթաթերթում (մանրամասնությունները ճշտել չենք կարողացել): Այստեղից էլ՝ ռուսերեն թարգմանությամբ. "Имеем ли будущее?", "Зеркало", 1992, № 35, 2-8 сентября. Որպես նախաբան, "О чем писал полвека назад католикос всех армян" խորագրի ներքո՝ «Հերկի» գործունեության բնութագիրը:

> «Հայ ժողովուրդը կյուրացնե ընկերավարությունը ու կվերածե միաժամանակ ազգային շարժման մը: Ընկերավարությունը կդառնա հայ ժողովուրդի ծոցին մեջ խորքով ազգային, ձևով՝ ընկերվարական: Այս երևույթին մեջ անգամ մը ևս հստակորեն կերևա հայ ժողովուրդի բնազդի ու հոգիի ուժը իր ինքնուրույնությունը պահելու՝ ընթանալով արևմուտքի կյանքի թափին հետ, ի խնդիր սեփական ապագայի մը, ի խնդիր պատմական նոր առաքելության մը իրականացման:

«Ի՞նչ կը նշանակե Dialectique» - ստորագրություն «Կ. Պ.» (իմա՛ Կարապետ Պալճյան): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 1, հունիս, էջ 12-13 (ամսագրի նյութերի ցանկը ներկայացնող «Բովանդակությունում» հոդվածն ունի միայն "Dialectique " վերնագիրը):

Նույնը՝ Վեհափառ Հայրապետի կատարած որոշ կրճատումներով՝ Վազգեն Ա Կաթողիկոս «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 103-106:

> «Ըստ Մարքսի, ընկերային կյանքն ալ իր դիալեկտիկը ունի. քաղքենի (bourgeois) դասակարգը թեզն է, որ ծնունդ կուտա իր հակառակորդ բանվոր դասակարգին (անտիթեզ), որ կուզա ժխտել, ոչնչացնել քաղքենի դասակարգը. այդ հակամարտութենեն ու հակասութենեն պիտի ծնի երրորդ վիճակը, որպես համադրության (սենթեզ) այն էլ, մարդկային առանց դասակարգի ընկերակցությունը: Անշուշտ այս տեսությունը ոչինչ ունի գիտական ու մտածումի պատմության մեջ անցած է շատոնց»:

«Նոր գիրք Խորհրդային Միության մասին» - անստորագիր. «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 1, հունիս, էջ 13: Հոդվածի հատկանշական գրելաձևը, միայն Կարա– պետ Պալճյանին բնութագրական լեզվա-ոճական առանձնահատկությունները, ինչպես նաև թեման, որը մշտապես եղել է նրա հետաքրքրությունների ոլորտում, հեղինակի ով լի– նելու վերաբերյալ որևէ կասկած բացառում են: Գրախոսված է Վիկտոր Սերժի «Հեղափո– խության մը ճակատագիրը» ուսումնասիրությունը և այդ հենքի վրա արված են պատմա– սոցիոլոգիական բնույթի ուշագրավ եզրակացություններ:

«Նշմարներ» - անստորագիր (Կարապետ Պալճյանի գրչի արգասիք լինելը ճշտվում է «Հերկի» երկրորդ վիմատիպ հրատարակության (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1990 թ.) սկզբում զետեղված ծանոթագրության օգնությամբ): «Հերկ», Բուխարեստ, 1937, № 1, հունիս, էջ 16:

> Վերլուծաբար ներկայացված է «իր երկրորդ տարեշրջանը թևակոխած «Անի» պարբերականի գործունեությունը, տրված է գովազդ ռումինահայ «Կո– միտաս» երգչախմբի և «իր տասնամյա հոբելյանը բոլորող» կրթական-մշակու– թային «Ոխսանողական միության» մասին:

«Ինչի՞ կը հավատանք» - ստորագրություն «Պ.» (իմա՛ Կարապետ Պալճյան): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 2, հուլիս, էջ 1-3: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա. Կաթողի– կոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածու, գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 224-226 և նույն խորագիրը կրող ժողովածուի Բ գրքում, 1993, էջ 13-15:

«Ռուսահայ, թրքահայ» - ստորագրություն «Պ.» (իմա՛ Կարապետ Պալճյան): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 2, հուլիս, էջ 3: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Հայրապետ Հայոց «Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ» ժողովածուում (Մայր Աթոռ Սուրբ Էջ–

միածին, 1958, էջ 22-23), նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա. Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածու, գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 16:

«Տեքարթի այժմեությունը» - ստորագրություն «Կ. Պալճյան». «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 2, հուլիս, էջ 6-8: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, «Գալիքի տեսիլքով» ժողովածուում, գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 227-231: Հոդվածը գրվել է փիլիսոփա-մաթեմատիկոս, ֆիզիկոս Ռընե Դեկարտի "Discours de la methode" («Ճառ մեթոդի մասին») աշխատության հրատարակության 300-ամյակի առ–թիվ:

> «Այո՛, տեքարթյան հեղափոխություն մը միայն կրնա իրերը դեպի իրենց բնականոն հունը առաջնորդել: Այդ հեղափոխությունը պիտի ըլլա սակայն: Ինչքան ալ հոռետես ըլլանք, պետք է ընդունինք, որ աշխարհի վրա դեռ կան ժողովուրդներ, որոնք ուշ կամ կանուխ, եթե ոչ այսօր, սակայն վաղը անպայ–ման, կիհաջողին ձեռք բերել իրենց սեփական, հավաքական գոյության ան–հրաժեշտ միավորությունը ու ճշմարտություններու ամբողջություն մը»:

«Լավ հայերեն չենք գիտեր» - ստորագրություն «Լեոն», որը Կարապետ Պալճյանի կեղծանուններից է: «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 2, հուլիս, էջ 12: Որոշ կրճա–տումներով՝ Վազգեն Ա Հայրապետ Հայոց, գիրք երրորդ «Կոնդակներ, քարոզներ, ճառեր, ելույթներ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1976, էջ 171-172:

> «Աթենք հրատարակվող «Նոր օր» թերթը «Հերկը» քննադատելով, որպես մեծ մեղք մեր երեսին կզարնե հեգնական շեշտերով, լավ հայերեն չգիտնալ–նիս: Կուզենք լրջորեն անդրադառնալ առանց քաշքշուկի, առանց հեգնանքի, առանց իսկ անարդար և անբարեխիղճ քննադատության մը պատասխանելու դիտումով: Անմիջապես ըսենք, որ այո՛, ճիշտ է թե մենք կատարյալ հայերեն չենք գիտեր: «Հերկի» շուրջ բոլորված երիտասարդներեն գրեթե բոլորը հայ նախակրթարան իսկ չեն ավարտած: Այն հայերենը որ գիտեն, ինքնաշխա–տությամբ սորված են: Ո՞վ սակայն և ո՞ր բարեխիղճ ու իսկական հայ մտավո–րականը կրնա մեզ դատապարտել ասոր համար»:

«Ի՞նչ կը նշանակե a priori» - ստորագրություն «Պ.» (իմա՝ Կարապետ Պալճյան): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 2, հուլիս, էջ 13:

> «A priori ուրեմն, ունի բնածինի իմաստ: Ըստ Կանտի a priori գաղափար–ները բնածին են մարդկային սեռի համար, որոնք մարդկային մտքին հիմքերն են ի սկզբանե: Ըստ ժամանակակից մտածողներու սակայն, մարդկային սեռը այդ գաղափարներուն տիրացած է, այդ դատողությունները կազմած է բազ–մաթիվ սերունդներու փորձերեն ու ժառանգաբար փոխանցված են պատմա–կան մարդուն, որ այժմ իր ծնունդեն, ունի այդ մտածման հիմունքները»:

«Նշմարներ» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 2, հուլիս, էջ 16: Իր «Ապագա ունի՞նք» հոդվածի առթիվ բանավիճում է Բուխարեստի «Պահակ» թերթում հրատարակված պ. Ա.Տ.-ի անհարգալի ու կոպիտ «քննադատականի» դեմ, առաջ քաշելով նախ «դիալեկտիկա» բառի, ապա հայ ազգի ծագումնաբանության հետ կապված իր տեսակետները:

[**«Ըտողներ կան...»**] – (անվերնագիր է, բերված են առաջին տողի առաջին բառերը): Ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, №3-4, օգոստոս-սեպտեմբեր, էջ 1-2: Ամսագրի այդ համարի առաջնորդողն է և պատասխանելով ընդդիմախոսներին, մեկնաբանում է իրենց գործունեության հիմնական նշանաձողերը:

> «Ճամբա ելած ենք **ոգեպաշտ** մեկնակետե մը: Սեփական դիմագծություն ու ոգի կառուցանելու մեր ճանապարհը պիտի շարունակենք միևնույն ոգեպաշտ հավատքով, այդ ճանապարհին մեջ պարփակելով համադրաբար, հայ կյանքի ու հոգիի բոլոր երեսները, բոլոր հորիզոնները, մեջը ըլլալով նաև քաղաքականը: **Մենք կդավանինք ուրեմն ոգեպաշտ սկզբունքը ու ազգային-հասարակական կյանքը դիտելու համադրական տեսակետը**»:

«Ո՞Իր ես, Լուսավորիչ» - ստորագրություն՝ «Լևոն», որը Կարապետ Պալճյանի կեղծանուններից է: «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 3-4, օգոստոս-սեպտեմբեր, էջ 3: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա. Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 11-12:

> «Արվեստը, հայ հոգիի բոլոր գեղեցկություններուն և արժեքներուն մարմնացումը, արվեստը, հայ ազգային դիմագծի ու ոգիի գոյության վերջին հնաբավորությունը, արվեստը, որուն շնորհիվ հայը **ինքզինքնին պահեց**, - և պահեց որպես մշակութային ու քաղաքակրթիչ արժեք, – այդ արվեստը այսօր մեր հայրենիքի մեջ ազատ չէ, ու կախում ունի Քրեմլինի գրիչի շարժումեն: Իսկ այդ արվեստի ամենամեծ ծառաները կյանքեն քշված կամ բանտարկված են, իսկ անոնց գրականությունը պարզապես խաչված»:

«Ռամկավար կուսակցությունը ապրի՞լ կուզե» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 3-4, օգոստոս-սեպտեմբեր, էջ 8: Բնութագրված է այդ կուսակցության՝ ազգային և հասարակական-քաղաքական գործունեության բնագավառում թույլ տված թերությունները:

«Ի՞նչ կը նշանակե "Bourgeois" - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 3-4, օգոստոս-սեպտեմբեր, էջ 12-16: Նույնը, Վեհափառ Հայրապետի

կատարած որոշ կրճատումներով՝ Վազգեն Ա. Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 106-112:

Հիմք ունենալով «ժամանակակից մեծագույն տնտեսագետ և ընկերաբան» Վերներ Զոմբարտի համբավավոր "Der Bourgeois" աշխատությունը և «ռումեն ընկերաբան» Շթեֆան Զելեթի «Ռումեն քաղքենիության ծնունդը» ուսումնասիրությունը, ուրվագծված է քաղքենի դասակարգի ծագումը, դարերի ընթացքում նրա կրած պատմա-հասարակական էվոլյուցիան և կանխորոշված է նրա համար սպասվելիք ապագան:

«Նշմարներ» - անստորագիր (Կարապետ Պալճյանի գրչի արգասիք լինելը ճշտվում է «Հերկ» ամսագրի երկրորդ վիմատիպ հրատարակության (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1990 թ.) սկզբում զետեղված կարճառոտ ծանոթագրության օգնությամբ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 3-4, օգոստոս-սեպտեմբեր, էջ 24:

Գովազդված է Էդինբուրգի կրոնական համագումարը, Ռումինահայ գաղութում ծայր առած նախաձեռնությունը՝ Րաֆֆու ծննդյան հարյուրամյակը տոնելու մասին, «Գաղութիս ամենահամակրելի միություններեն՝ «Կոմիտաս» երգչախմբի օր-ավուր աշխուժացող գործունեությունը»: Տեղեկացվում է, որ «Հերկի» խմբագրության նախաձեռնությամբ ստեղծված է «ուսմանց շրջանակ մը, մտավորական կյանք ապրիլ ուզող հայ երիտասարդներու համար»:

«Մտերիմ նամակներ հայ ծնողքներուն» - ստորագրություն՝ «Կ.Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Արազ» եռօրյա անկախ պարբերական (խմբ. Հակոբ Ճոլոլյան-Սիրունի), Բուխարեստ, 1937, № 546 (սեպտեմբերի 29) և № 554 (նոյեմբերի 7): Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա. Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 136:

Ելնելով երկու հոդվածների ներքին տրամաբանությունից, ինչպես նաև «տասնհինգ օրը մեկ ծնողքներու հետ խոսակցություն սկսելու» հեղինակի արած հավաստիացումից, պետք է մակաբերել, որ Կարապետ Պալճյանը մտադրվել էր հանդես գալ գիտա-մանկավարժական բնույթի մի ամբողջ հոդվածաշարով, նվիրված «հայազգի մանկտիների» դաստիարակության հարցերին: «Արազ» պարբերականի՝ 1937 թվականից հետո հրատարակված համարները սակայն, Երևանի գրապահոցներում գտնելը տարաբախտաբար անկարելի եղավ, որի հետևանքով էլ, հնարավոր չեղավ պարզել, թե Կարապետ Պալճյանը հիշյալ երկու հոդվածներից բացի, ուրիշները գրել է, թե՝ ոչ: Կարողացանք ճշտել միայն, որ «Արազը» հրատարակվել է մինչև 1944 թվականը:

«1937-ի հայը» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ), «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 5, հոկտեմբեր, էջ 1-2, տպագրվել է որպես առաջնորդող: Նույնը որոշ վերամշակումներով, Վազգեն Ա Հայրապետ Հայոց, «Կոնդակներ, քարոզներ, ճառեր, ելույթ– ներ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1976, էջ 123-124: Նույնը աննշան կրճատումներով և նոր՝ «Հայ ըլլալ» վերնագրով, «Գալիքի տեսիլքով» ժողովածու, գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 232-234: Հոդվածը հրատարակելու հետ կապված բոլոր փոփոխումները կատարել է Վեհափառ Հայրապետը:

> «Նույնանալ ցեղին հետ որպես **կենսաբանական էակ**, նույնանալ ազգին պատմության և մշակույթին հետ որպես **բարոյական-ոգևոր** էակ, նույնանալ հայրենիքի հողին ու ջուրին հետ, որպես **աշխատող-ստեղծագործող էակ**, վերջապես նույնանալ հայ պետությանը ամրացնող և անոր ապագան պսա– կող իդեալներուն հետ որպես **կամեցող և կառուցանող քաղաքական էակ**: Ահա՛ մեր կարծիքով ճշմարիտ պատկերը ամբողջական հայուն»:

«Ընկերային գիտության այժմեականությունը» - ստորագրություն՝ «Կ.Լ.» (իմա՛ Կարապետ-Լևոն: Կարապետ Պալճյանի գրական կեղծանուններից մեկն է), «Հերկ» ամսա– գիր, Բուխարեստ, 1937, № 5, հոկտեմբեր, էջ 3-4:

> «Մեր հայրենիքը, Հայաստանը, ընկերային (իմա՛. սոցիոլոգիական. Ս.Շ.) փորձի մը դրության մեկ մասնիկն է. աշխարհի ամենահամարձակ փորձերեն մեկը կկատարվի հոն, նոր մարդ, նոր բարոյական մը ստեղծելու փորձը կըլլա հոն: Ինչ որ ալ ըսվի, խորհրդային սահմաններեն ներս կատարվողը մարդկա– յին հոգեկան հսկա ճիգ մըն է, պրոմեթեական խոյանք մը՝ բարոյական նոր աշխարհ մը ստեղծելու»:

«Քաջանզնունին և մենք» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հերկ» ամսագիր, Բու– խարեստ, 1937, № 5, հոկտեմբեր, էջ 5-8: Նույնը, Վեհափառ Հայրապետի կատարած որոշ կրճատումներով, Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 31-36:

«Ի՞նչ կը նշանակե ոգի» - ստորագրություն՝ «Կ.Պ.» (իմա՛. Կարապետ Պալճյան), «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 5, հոկտեմբեր, էջ 10-12: Նույնը նոր՝ «Հոգի» վերնա– գրով, Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 235-238: Նույնը՝ նախկին վերնագրի վերականգնումով, Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 113-119: Այս վերա–

հրատարակության ժամանակ Վեհափառ Հայրապետը կատարել է մասնակի կրճատում–ներ:

> Սկզբից արձանագրելով այն փաստը, որ «ոգի բառին իմաստը կշփոթվի հաճախ, - և մանավանդ մեզ մոտ, – հոգի բառին հետ» հավելվում է, որ հոդվա–ծում քննության առարկա է դարձվելու «հոգեկան ապրումներու աշխարհը», որը ըստ իր ներքին բովանդակության «յուրահատուկ աշխարհ մըն է, զոր ճանչնալու, հասկնալու և մեկնաբանելու համար կարելի չէ նյութական կամ օրգանական աշխարհներու չափերով ու օրենքներով մոտենալ»:

«Այսօրվա երիտասարդությունը» - անստորագիր: Ինչպես հավաստեց Վեհափառ Հայրապետը 1993 թ. մայիսի 20-ին մեզ հետ կայացած հարցազրույցի ժամանակ, հոդվածի հեղինակն ինքն է: «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 5, հոկտեմբեր, էջ 12-14:

> «Ընդհանուր պատերազմը ծնունդ տված զարհուրելի խորխորատի մը...: Երիտասարդության առջև մնաց հոգեկան անհուն պարապություն մը, հորի–զոն մը լի անհամար կարելիություններով: Ոչ մեկ ամուր կապ անցյալի հետ, որ զայն առաջնորդե դեպի ստույգ ապագա մը: Ամեն բան պետք էր ծայրեն սկսվեր, ամեն մարքի մեջ պետք էր նորը ստեղծել»:

«Նշմարներ» - անստորագիր (Վեհափառ Հայրապետի գրչի արգասիք լինելը ճշտվում է «Հերկ» ամսագրի երկրորդ վիմատիպ հրատարակության (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1990 թ.) սկզբում զետեղված կարճառոտ ծանոթագրության օգնությամբ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 5, հոկտեմբեր, էջ 15-16:

> Տեղեկացվում է վիպասան Րաֆֆու ծննդյան հարյուրամյակի առթիվ «հայ գաղութներուն մեջ տարվող նախապատրաստական աշխատանքներու մա–սին», բնութագրված է Բուլղարական ՀՄԸՄ-ի գործունեությունը, մանրամաս–ներ է հաղորդված «Հերկի» խմբագրության նախաձեռնությամբ իր գործունե–ությունն սկսած «ՌԻսմանց շրջանակի» վերաբերյալ: Հայտնվում է, որ «Թարգ–մանչաց տոնը» պաշտոնապես վերանվանվել է «Հայ մշակույթի օր» և որ այն ըստ արժանվույն նշելու աշխատանքները գաղութում բարձիթողի է արված:

«Ներքին քաղաքականություն» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 6, նոյեմբեր, էջ 3-6: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գա–լիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 37-43:

«Միայն մարդկային օրգանական իրականություն մը կրնա իրական մշակույթ մը ստեղծել. իսկ մարդկային ընկերության օրգանական իրականությունները ազգերն են: Ահա մեր տեսակետը, մեր ոգեպաշտ սկզբունքն ու ըմբըռնումը, որով կմոտենանք կյանքին, Խորհրդային Հայաստանի իրականության, մեր ազգային կազմակերպություններն ու կուսակցությունները գնահատելու գործին»:

«Ի՞նչ կը նշանակէ ոգի» - ստորագրություն՝ «Կ.Պ.» (իմա՛. Կարապետ Պալճյան), «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 6, նոյեմբեր, էջ 12: Չնայած հանդիսանում է նույն խորագիրը կրող հոդվածի շարունակությունը (տես վերն), բայց ինքնուրույն արժեք ու նշանակություն ունի: Վերահրատարակության ժամանակ Վեհափառ Հայրապետը այս հոդվածը միացրել է նախորդին և կատարել որոշ կրճատումներ: Տե՛ս Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 113-118:

«Նշմարներ» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ), «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 6, նոյեմբեր, էջ 15-16: Նույնը որոշ կրճատումներով և նոր՝ «Նշմարներ Էջմիածնի մասին» խորագրով՝ Վազգեն Ա, Հայրապետ Հայոց, «Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1958, էջ 332-333: Նույնը՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 139-141: Այս վերահրատարակության համար, պահպանելով հանդերձ վերջին՝ «Նշմարներ Էջմիածնի մասին» վերնագիրը, հիմք է ընդունված ամսագրային տարբերակը:

Գովազդված է «Էջմիածնա Ամենայն Հայոց Կաթողիկոսի» Կոնդակը հայկական եկեղեցու բարենորոգության մասին և այս առթիվ մի քանի նկատումներ: Մասնավորապես ընդգծում է, որ «Նոր հոգևորականությունը զինված պիտի լինի նորագույն գիտությամբ, ունենա փիլիսոփայական և քրիստոնեական լայն աշխարհայացք»:

«Մեր հայրենիքը» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան»: «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 7, դեկտեմբեր, էջ 3-6: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 17-23:

«Եթե Հայաստան երթալը անհնար է, պահանջը կը զգանք գեթ հեռուեն հայրենիք մը ունենալու, հոգեպես անոր կյանքին մեջ զգալու ինքզինքնիս, անկե հոգի առնելու, անոր հոգի տալու: Այսօր ազգ ենք, Հայաստան մը ունինք: Բայց Հայաստանը ազգին կենտրոնը չէ: Կամ ինքզինքը մեր կենտրոնը չի նկատեր և ահա մենք, իրապես անհայրենիք մը կը զգանք ինքզինքնիս: Եթե մեր մեջ դեռ կենդանի է Հայաստանը, այդ մեր **անհատական** ճիգն է, մեր վերացական հայրենասիրության մը ուժն է»:

«Ի՞նչ կը նշանակէ Synthèse» - անստորագիր: Ելնելով այն բանից, որ հոդվածի հատ– կանշական ոճն ու գրելաձևը կատարյալ «պալճյանական» է և նկատի ունենալով այն հան– գամանքը, որ «Հերկ» ամսագրում հրապարակված համանման խորագիրն ունեցող հոդ– վածները ունեն «Կ.Պալճյան» ստորագրությունը (տես ներկա հատորը), ապա տարակույս չի մնում, որ սույն հոդվածի հեղինակը Կարապետ Պալճյանն է: «Հերկ» ամսագիր, Բուխա– րեստ, 1937, № 7, էջ 11:

«Մենդելի օրենքը» - ստորագրություն՝ «Լ.», իմա՛. «Լևոն» - Կարապետ Պալճյանի գրական կեղծանուններից մեկն է: «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 7, էջ 14-15:

> «Մենդելը գերմանացի վանական մը եղած է, որ Բրյունի վանքին մեջ փոր– ձեր կատարած է բույսերու վրա, անցյալ դարու կեսերին: Իր բոլոր հաստա– տածները հրատարակած է 1826-ին Բրյուն լույս տեսնող գիտական հանդեսի մը մեջ, ուր թաղված մնացած են մինչև 1900, երբ նոր գիտնականներ աշխար– հին ծանոթացուցած են վանականին գիտական աշխատանքը ու անոր հաս– տատածները»:

«Նշմարներ» - անստորագիր (Կարապետ Պալճյանի գրչի արգասիք լինելը ճշտվում է «Հերկ» ամսագրի երկրորդ՝ վիմատիպ հրատարակության (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1990 թ.) սկզբում զետեղված կարճառոտ ծանոթագրության օգնությամբ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1937, № 7, դեկտեմբեր, էջ 15:

> Դրվատական խոսքով ներկայացված են Փարիզում հրատարակվող «Զվարթնոց» ամսագրի և Թեհրանում լույս տեսնող «Նավասարդ» հանդեսի հերթական համարները, ռումինահայ կրթական-մշակութային մի քանի միու– թյունների («Ռումինահայ միություն», «Ռաֆֆի» Մշակութային միություն, Բու– խարեստի «Հայ մարմնակրթական ընդհանուր միություն») ծավալած գործու– նեությունը: Տեղեկացվում է «Հերկի» նախաձեռնությունը ստեղծված ու ռումի– նահայության մեջ տարածվող հարցաթերթիկի մասին, որի նպատակն է պար– զել գաղութահայության վերաբերմունքը երիտասարդության նկատմամբ և ըստ այդմ՝ ճշգրտել ամսագրի անելիքները:

1938

«Հայրենասիրություն» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 8, հունվար, էջ 1-3: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթո– ղիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 24-26:

«Հայ քաղաքական միտք:

Հոն, մեր հայրենիքին մեջ քեզ թողած են ու այն գլուխը, որուն ուղեղին մեջ կայծի մը նման կը զարթնիս, ուսերուն վրա չի մնար: Աղին, զաղութներուն մեջ քաղաքական կուսակցություններն իսկ քեզ կպահեն իրենց դարակներուն մեջ ու կանտեսեն որ սերունդին քաղաքական մտածումը մը մշակման հարցը:

Այո՛, ավելի քան երբեք հայ ժողովուրդը պետք ունի քեզի: Որովհետև լավ գիտնանք, որ քաղաքական գիտակցութենեն ու կամեցողութենեն կը սկսի իրական և գործնական հայրենասիրությունը»:

«Դեպի ոգեպաշտություն» - Ռումինացի սոցիոլոգ-փիլիսոփա Գ. Ռըդուլեսկու-Մոդռուի "Romanismul" գրքից քաղվածաբար կատարված մի հատվածի՝ բնագրից արևմը–տահայերեն թարգմանությունն է: Թարգմանությունն անստորագիր է, սակայն ինչպես հա–վաստեց Վեհափառ Հայրապետը 1993 թ. մայիսի 20-ին մեզ հետ կայացած հարցազրույցի ժամանակ, թարգմանիչը եղել է ինքը: «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 8, հունվար, էջ 3-4:

«Ի՞նչ կը նշանակե Idealisme**»** - ստորագրություն՝ «Կ.Պ.» (իմա՛. Կարապետ Պալճյան): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 8, հունվար, էջ 13-14: Նույնը որոշ փոփոխություն–ներով՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 119-122:

«Նշմարներ» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 8, հունվար, էջ 15-16:

Անդրադառնում է «ՀՕԿ»-ի (իմա՛. «Հայաստանին օգնության կոմիտե») մա–սին եղած բազմաթիվ նպաստավոր ու աննպաստ կարծիքներին, համառոտա–կի քննում դրանք, հանգելով հետևյալ եզրակացությանը. «Բոլորս ալ, ինչ տե–սակետե ալ մեկնենք, կհասնինք նույն եզրակացության, այսինքն՝ **հավատք** մեր հայրենիքին վրա, և **հույսը** ավելի լավ օրերու»:

«Աճման թերությունները» - անստորագիր: «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 9, փետրվար, էջ 12: Ռումինացի պատմաբան, հայագետ Նիկոլա Յորգայի՝ այդ խորագիրը կրող դասախոսության «քանի մը հատվածներն են», որտեղ քննարկված են «ռումեն նոր սե–րունդի և անոր աճման ու ոգևոր զարգացման հետ կապված թերություններու» հետ առնչ–վող հարցերը: Դասախոսության հատվածները ռումիներենից արևմտահայերեն է թարգ–

մանել և հրատարակության է պատրաստել Կարապետ Պալճյանը. մի բան, որը հավաստեց Վեհափառ Հայրապետը 1993 թ. մայիսի 20-ին մեզ հետ կայացած հարցազրույցի ժամանակ:

«Բնազդ և գիտակցություն» - ստորագրություն՝ «Կ.Պ.» (իմա՛. Կարապետ Պալճյան): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 9, փետրվար, էջ 13-14: Նույնը որոշ կրճատումնե–րով՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 99-102:

«Մարդը ոչ կենդանի է, ոչ Աստված: ՈՒ հոս է մարդուն և՛ փառքը, և՛ ողբեր–գությունը»:

«Նշմարներ» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ. տես նաև Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 326): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 9, փետրվար, էջ 15-16:

Ազդարարված է «Հայրենիք» ամսագրի հունվարյան համարի ստացումը, արտատպված են հատվածներ Կոստան Զարյանի «Զվարթնոց» պարբերա–կանի № 3-ում տպագրված էսսեներից, բնութագրված է Հայկ Ազտերյանի, Քրիստիա Ալլաչի, օր. Արաքս Սվաճյանի ազգային-հասարակական գործու–նեությունը: Անանուն բանավեճ է մղված «Հերկը» վարկաբեկողների հետ, քանզի «հեգնություններով ու բառախաղերով մե՛ղք է, որ մեր ժամանակը վատնենք, մե՛ղք է թուղթին ու մելանին, մե՛ղք է նաև ընթեցողին»:

«Մարքսիստը» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան»: «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 10, մարտ, էջ 6-10: Նույնը՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 123-132:

«Մարքսի սխալը հոն եղած է, որ որոշ ընկերության մը, որոշ պատմաշրը–ջանի մեջ տեսած երևույթներեն եզրակացուցած օրենքները ընդհանրացնել փորձած է: Ակներև է, որ հոս Մարքսը գիտական չէ: Որովհետև գիտության մեջ օրենք մը օրենք մնալու համար անհրաժեշտ է, որ անփոփոխ մնան նույն երևույթները, նույն պայմանները, որ ոչինչ պակսի ու ոչինչ ավելնա անոնց վրա: Մարքսի տեսությունը պարզապես գիտական վարկած մըն էր և ինչպես ամեն վարկած, արժեք մը կրնար ներկայացնել փորձնական կիրառումե մը հետո միայն: ՈՒ հանցանքը Մարքսինը չէ, որ եվրոպական բուն գիտական ոգիին օտար հոգեբանության տեր ժողովուրդ մը, վարկածը վերածեց դոգմի ու հասավ հոն, ուր հասած է այսօր»:

«Նշմարներ» - անստորագիր (Վեհափառ Հայրապետի գրչի արգասիք լինելը ճշտվում է «Հերկ» ամսագրի երկրորդ վիմատիպ հրատարակության (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին,

1990 թ.) սկզբում զետեղված կարճառոտ ծանոթագրության օգնությամբ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 10, մարտ, էջ 14-16:

Տեղեկացվում է երգիչ Կիրակ Սազգըլյանի առաջիկայում տրվելիք երգա–հանդեսի մասին, բնութագրված է «երիտասարդ արձանագործ» Հ. Թորոսյանի նորաբաց ցուցահանդեսը Բուխարեստում: Ներկայացված են «Արևագալ» ամ–սագրի և «Հայ-Բույժ» պարբերականի նոր լույս տեսած համարները և այս առիթով հայտնված են որոշ նկատառումներ:

«Ապրիլ 24» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 11, ապրիլ, էջ 1-2: Տպագրվել է որպես առաջնորդող: Նույնը անփո–փոխ, Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 244-245:

«Ապրիլի 24, լույսի օր:

«Մուսա լեռի» ժողովուրդը փրկվեցավ, որովհետև գիտցավ միաբանիլ, կար–գապահ ըլլալ, կազմակերպվիլ և չհուսահատիլ մինչև վերջին կաթիլը ուժին:

Այդ հույսի, հավատքի և պայքարի ժողովուրդը փրկվեցավ... Մենք ևս կհա–վատանք փրկության: Փրկության նավը կու գա, կը բավե, որ հավատանք և տոկանք...

«Մուսա լեռը» մեզ կը ներշնչե ու հավիտյան պիտի ներշնչե...

Որովհետև ան, առասպել դարձած մեր ժողովուրդի հոգիին հրաշքներեն մին է...»

«Քրիստոնյա ըլլալ» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան»: «Հերկ» ամսագիր, Բուխա–րեստ, 1938, № 11, ապրիլ, էջ 3-5: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տե–սիլքով», գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988, էջ 246-249, նույնը՝ համանուն խորա–գիրը կրող ժողովածուի Բ գրքում, 1993, էջ 27-30:

«Կարելի չէ քրիստոնյա ըլլալ «ըստ սովորության», «ըստ ավանդության» ու այսպիսով եկեղեցին վերածել բրածո իրականության մը: Լուրջ մարդու գործ չէ այդ»:

«Քրիստոնեությունը անբաժանելի է եվրոպական մշակույթեն: Առանց քրիստոնեական բարոյականի և ոգիի, արևմտյան մշակույթը կմեռնի իր հիմ–քեն ու կը սկսի բարբարոսությունը»:

«Առանց քրիստոնեության ոգիի, հնարավոր չէր կրնար ըլլալ Ֆաուստի տի–պարը, որը նորագույն արևմտյան մարդը առաջնորդող պատկերն է»:

«Ի՞նչ կը նշանակէ ընկերային» - անստորագիր. «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 11, ապրիլ, էջ 12-13:

Հանդիսանում է «նորագույն ֆրանսացի ընկերաբան Էմիլ Դյուրքհեյմի "Régle de la methode sociologiaue" (իմա՛. «Սոցիոլոգիական մեթոդի աշխատա– կարգը». Ս.Ծ.Վ.) հռչակ հանած գրքի» այն հատվածի՝ ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն համառոտված թարգմանությունը, որտեղ քըն– նարկված են հիշատակված՝ ընկերային բնույթ ունեցող խնդիրները: Հատ– վածը հրատարակության պատրաստելու հետ կապված հիշատակված աշ– խատանքները կատարել է Կարապետ Պալճյանը. այդ մասին 1993 թ. մայիսի 20-ին մեզ հետ կայացած հարցազրույցի ժամանակ հավաստեց Վեհափառ Հայրապետը:

«Նշմարներ» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 11, ապրիլ, էջ 15-16:

Քննադատված է «Հայաստանի կոչնակ»-ի 1938 թ. մարտի 12-ում տպա– գրված Միհրան Արևյանի հոդվածը, որը որակված է «թեթևսոլիկ, գռեհիկ ճաշակով և աղքատ հոգիով գրված մը»: Տեղեկացվում է Բուխարեստի «Դալլես» դահլիճում Րաֆֆու հարյուրամյակին նվիրված մեծ հանդիսության, նրա մասին Միքայել Վարանդյանի՝ 144 էջանոց «մեկ ուսումնասիրության» և ռումինահայ երգչուհի Արաքս Սվաճյանի՝ Բուխարեստում տրվելիք երկու ռադիոհամերգների մասին:

«Քսան տարի հետո» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 12, մայիս, էջ 1-3: Տպագրվել է որպես առաջնորդող: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջ– միածին, 1993, էջ 7-10:

«Այսօր վեր կենալ ու հայհոյել թուրքին, որովհետև հարձակվեցավ Հա– յաստանի վրա, հայհոյել ռուսին, որ չպաշտպանեց Հայաստանի անկախ Հան– րապետությունը, հայհոյել դաշնակիցներուն, որովհետև օգնության չհասան հայերուն, անիծել ճակատագիրը կամ հանցավորներ ու պատասխանատու– ներ փնտռել հայ ղեկավարներու մեջ, առնվազն միամիտի գործ է: Պետք է չկորսնցնենք իրատեսության զգացումը»:

«Նոր աշխարհը» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան»: «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 12, մայիս, էջ 8-12: Նույնը որոշ կրճատումներով՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 49-55: Գրախոսված է «Ֆրանսիացի համայնավար բանվոր» Իվոյի՝ Խորհրդային միությանը նվիրված աշխատությունը և այդ հենքի վրա արված են հասարակական-սոցիոլոգիական բնույթի մի շարք ինքնատիպ եզրակացություններ:

«Նշմարներ» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հերկ» ամսագիր, Բուխարեստ, 1938, № 12, մայիս, էջ 15-16:

> Քաղվածաբար ներկայացված է «Յառաջ» թերթում հրատարակված Մանիկ Պերպերյանի հոդվածը, գովազդված է Գրիգոր Նշանյանի «Կորնթյան նամականի» աշխատությունը և երգչուհի Մաննիկ Սվաճյանի դերակատարումները: Բացասաբար է գնահատված Բուխարեստում հրատարակվող «Պահակ» թերթի «երկու հաջորդական խմբագրականները», որտեղ «ոչինչ գտանք դրական, ոգեպնդիչ ու շինիչ: Գտանք ծանր ամբաստանություններ երիտասարդության և մասնավորաբար մեր հասցեին»:

«Մեր վարժարանը» («Օրվան հարցեր» ընդհանուր խորագրի ներքո). ստորագրություն՝ «Կ. Պալճյան»: «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1938, № 8 (197), հոկտեմբերի 9, № 9 (198), հոկտեմբերի 16:

> Քննարկված է այն իրողությունը, որ Բուխարեստի Հայկական Ազգային վարժարանի «աշակերտության հարյուրին 10-12-ը լիսե երթալու համար կհեռանա վարժարանեն»: Այս հոդվածի, ինչպես նաև գաղութահայ երիտասարդության դաստիարակությանը նվիրված՝ «Հերկ» ամսագրում լույս տեսած Կարապետ Պալճյանի մի քանի «դատումներու» դեմ խստաշունչ երկու խմբագրականներով հանդես եկավ Հակոբ Սիրունին, Բուխարեստի «Պահակ» շաբաթաթերթում (1938 թ. մայիս):

«Հայ մամիկներու դասը» - («Նշմարներ» ընդհանուր խորագրի ներքո). ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ): «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1938, № 9 (198), հոկտեմբերի 16: Նկարագրում է բուլղարական Ռոդոստո քաղաքի հայազգի մի խումբ «մամիկներու» հետևողական պայքարը տեղի հայկական եկեղեցին այլևայլ ոտնձգություններից պահպանելու համար:

«Սո՛ւտ է» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան»: «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1938, № 19 (208), դեկտեմբերի 25: Նույնը՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993, էջ 60-62:

Անդրադառնում է ռումինիայում ծնված ու մեծացած հայազգի երեխաներին հայեցի դաստիարակություն տալու հետ կապված հարցերին, գտնելով որ այն ճշգրտորեն իրականացնելու համար «կա լուրջ աշխատանք, կա մշակումը մտքին ու զգացումին, կա աշխատանքը գաղափարին, կա գործը»:

«Իմ պատասխանը Պ.Ա.Տ.-ին» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբա–թաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1938, № 44 (183), ապրիլի 19: Որոշ կրճատումներով արտատպվել է Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 91-95):

Բանավիճելով «Պ.Ա.Տ.»-ի, այսինքն պարոն Արտաշես Տիրացյանի հետ, հե–ղինակը պաշտպանում է «Հերկ» ամսագրի № 6-ում տպագրված իր «Ներքին քաղաքականություն» հոդվածում զարգացրած տեսակետները, ապա անդրա–դառնում է «Պ.Ա.Տ.»-ի երկու «անվայելուչ» խմբագրականներին, որոնք նա հրատարակել է Բուխարեստի «Պահակ» թերթում:

«Դարձյալ «Պ.Ա.Տ.»-ին» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթա–թերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1938, № 46 (185), հուլիսի 3:

Շարունակում է բանավեճը «Պ.Ա.Տ.»-ի հետ (տես նախորդ ծանոթագրու–թյունը), այս անգամ անդրադառնալով Մայր Հայրենիքի և սփյուռքահայ երի–տասարդության փոխհարաբերության հարցերին:

1939

«Նորը» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1939, № 20-21, հունվարի 6: Նույնությամբ արտատպվել է Վազ–գեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուում (գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմի–ածին, 1993 թ., էջ 56-59):

Նոր տարվա առթիվ արտահայտում է ինչպես Մայր Հայրենիքի, այնպես էլ սփյուռքահայության մոտակա ու հեռավոր ապագայի վերաբերյալ իր նկա–տառումները:

«Կենդանի Հայաստանը» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթա–թերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1939, № 34-35, ապրիլի 9: Նույնությամբ ար–տատպվել է Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 60-61):

> «Անշուշտ արդի Հայաստանը, – Խորհրդային Հայաստանը, – փոքր երկիր մըն է: Կասկածե դուրս է, որ հայ ժողովուրդի և պատմական և ազգագրական բացարձակ իրավունքն է ավելի մեծ երկիր մը ունենալ: Հետևաբար ամեն հա–յու արդար իրավունքն է ցանկանալ, որ Հայաստանը դառնա ավելի մեծ»:

«Իմաստուն մարդ մը» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթա–թերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1939, № 44 (233), հունիսի 11, նույնությամբ արտատպված է Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 62-64):

Ներկայացնում է անգլիացի պատմաբան Դաֆ Կուպերի «վերջերս լույս տե–սած» «Շառլ Մորիս Թալեյրան» մենագրությունը և այս հենքի վրա կարևորում «ֆրանսացի այդ մեծ քաղաքական դեմքի» ծավալած գործունեությունը մանա–վանդ փոքր ազգերին օգնելու և ինքնուրույն պետական կարգավիճակի հաս–նելու հարցում:

«Մաղթանք Հ.Մ.Ը.Մ.-ին» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթա–թերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1939, № 57 (246), նոյեմբերի 26: Նույնու–թյամբ արտատպված է Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 69-71):

Արձանագրում է «Հայ մարմնակրթական ընդհանուր միության» Բուխա–րեստի մասնաճյուղի հերթական տարեդարձի կատարման փաստը և նշում անելիքների այն համախումբը, որն անհրաժեշտ է ներդնել այդ կազմակեր–պության աշխատանքներում: Որից հետո միայն նա կկարողանա գոչել, «Հա–զար շեփոր հնչե՛ն թող այս առավոտ»:

«Անձնավորության գաղափարի մասին (մտածումներ)» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Գաղութահայ տարեգիրք» (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Ա տարի, Բուխարեստ, 1939, էջ 33-50: Նույնը անփոփոխ՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 15-31): Գրվել-ավարտվել է Բուխարեստում, 1938 թ. հոկ–տեմբերին:

«Ամենեն իրական ազատություն տրված է հավաքականության մը սահ–մաններեն ներս»: «Ազգային կարգապահություն ըսվածը ուրիշ բան չէ, եթե ոչ հավաքական անձնավորություն գիտակցությունը»: «Նկարագիրը իր լրիվ ու ճշմարիտ իմաստին մեջ ուրիշ բան չէ, եթե ոչ միայն արահետը, որ կտանի դե–պի անձնավորություն»: «Որովհետև թե՛ արվեստի գետնին վրա, թե՛ գիտու–թյան ու տնտեսության մեջ, ինչպես և պատերազմի դաշտին վրա, հաղթա–նակները նկարագրով կը շահվին»:

1 9 4 1

«Ինչպես կը սկսինք» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1941թ., № 23 (343), նոյեմբերի 30: Նույնությամբ արտատպվել է Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 65-66):

Բնութագրում է «Հայ մամուլ» պարբերականի գործունեությունը առաջիկա 1942 թվականին, ընդգծելով որ՝ «թերթիս նոր խմբագրությունը հավակնու–թյունը չունի բացառիկ շարժում մը ստեղծելու, կամ նոր ուղի մը բանալու մեր կյանքին մեջ», որ պարբերականը «պիտի նվիրվի մեր երիտասարդական կազ–մակերպությանց առօրյա հոգերուն, ունենալով միայն մեկ նպատակ. դրական, շինիչ ազդեցություն մը ունենալ մեր համայնքի գործերուն վրա»:

«Հո՜ն, հեռուն...» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1941, № 24 (344), դեկտեմբերի 7: Նույնը՝ բանասեր Սու–րեն Քոլանջյանի մատենագիտական կարճառոտ տեղեկանքով (շարադրված է հոդվածի հայտնաբերման բանասիրական պատմությունը): «Էջմիածին» ամսագիր, 1987 թ., № 1, հունվար, էջ 48-49: Նույնը՝Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 250-251):

Հոդվածը գրվել է այն ժամանակ, երբ ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակից թագավորական Ռումինիայի բանակները հաղթականորեն առաջ էին շարժվում ամբողջ Խորհրդային Միության տարածքով և երբ հասարակական կյանքի շատ ականավոր մասնագետների կարծիքով «Սովիեթին պարտությունը» հաշված օրերի և ժամերի խնդիր է: Այս պայմաններում առնվազն քաղաքացիական սխրանք էր և անկասելի վտանգներով իղի Կարապետ Պալճյանի՝ բոցաշունչ հայրենասիրությամբ լի նման գործը, որտեղ որոշակիորեն կոչ էր արվում «կենդանի ու կորովի մնալ», գոյատևել «մինչև որ մեր փակ բաղդին դուռը կբացվի», քանզի «Ինչքան վտանգը ավելի մեծ ըլլա, մենք, ավելի քան երբեք հավատանք մեր վերջնական հաղթանակին և փրկության»: Հավելենք, որ հոդվածը վերևից 23-րդ տողից հետո ունի «մեր հայրենի հողին ու գերեզմաններուն առաջ» տողը, որը հետագա վերահրատարակությունների ժամանակ դուրս է մնացել:

«Նշմարներ» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Պալճյան Կարապետ), «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1941, № 24 (233), դեկտեմբերի 7: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 74-76):

«Հայրենասիրություն:

Մեր հայրենասիրությունը **երազված զգացում** մըն է միայն: Ցնորքի ու կենդանի որոնումներու խառնուրդ մը: Անծանոթ, սակայն մտերիմ զգացումներու, անորոշ, սակայն ազնիվ մտածումներու, անկարող, սակայն հարատև ճիգերու հանդիման վայր մը, որտեղ կհյուսիվի երազը մեր բոլորին...: Մեր հայրենասիրության մեջ Դոն Քիշոտի ողբերգութենեն բան մը կա, բայց այս ալ ապրելու ձև մըն է:

Եթե կուզեք, բանաստեղծորեն ապրելու ձև մը»:

«Փոթորիկ» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1941թ., № 25 (345), դեկտեմբերի 14: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 44-45):

«Հայ ժողովուրդը բարեկամ չունի: Այս չի նշանակեր սակայն, որ պետք է քեն ընենք աշխարհին: Ո՛չ: Այդ ալ ուրիշ ծայրահեղություն մը պիտի ըլլար: Թող մինչև հիմակվանը մեզի համար դաս մը եղած ըլլա. կյանքը և մարդիկ ճանչնալու դաս մը, որ Եվրոպան տվավ: Հետևաբար առանց երեսս դարձնելու

կյանքին ու աշխարհին, ըլլանք զգույշ, ըլլանք չափավոր, ըլլանք հավասարակշիռ, բայց ըլլանք նաև արթուն և շարժուն դեպքերու ընդմիջեն մեր շահերը հետապնդելու համար»:

«Նշմարներ» - ստորագրություն՝ «Պ.» (իմա՛ Կարապետ Պալճյան): «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1941, № 26 (346), դեկտեմբերի 21: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 74-76):

«Ամենուս Հ.Մ.Ը.Մ.-ը» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1941թ., № 26 (346), դեկտեմբերի 21: Նույնությամբ արտատպվել է Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 96):

Ներկայացված է 1918-ի վերջերին Պոլսում իր գործունեությունն սկսած «Հայ մարմնակրթական ընդհանուր միության» ծավալած աշխատանքները Սփյուռքի հայկական գաղութներում: Ընդգծված է, որ «Հ.Մ.Ը.Մ.-ին ծնունդ տվին ոչ թե գաղութներուն համար, այլ մեր մայր երկրին՝ Հայաստանին համար»:

1 9 4 2

«1942-ին» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1942թ., № 27 (347), հունվարի 1: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Բ գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 76-77): Նույնը որպես ռադիոհաղորդում Նոր տարվա առթիվ Երևանի ռադիոյի «Բյուրակն» հաղորդաշարով, 1994 թ. հունվարի 6-ին: Հաղորդումը եթերի համար պատրաստել էր Սուրեն Շտիկյան-Վանեցին:

«Մեր անհատական գիտակցութենեն անդին գտնվող անտեսանելի ուժերով, մենք կհավատանք արդարության ու ազատության գալուստին: Մեր մեջ, մեր անցողական էության մեջ, մեր ցեղն ու մեր պատմությունն է, որ կհավատա:

Որովհետև մարդ ենք: Ավելին, որովհետև հայ ենք»:

«Ղազարոս Կռնիկյան» - ստորագրություն՝ «Կ. Պալճյան», «Հայ մամուլ» շաբաթաթերթ (խմբ. Մկրտիչ Պոտուրյան), Բուխարեստ, 1942թ., № 28 (348), հունվարի 8:

Մահախոսական է, գրված «հանկարծամահ եղած Ազգային վարժարանի ավագ ուսուցիչ Ղազարոս Կոնիկյանի» մահվան առթիվ: Հանգուցյալը բնու– թագրված է որպես «ռումինահայ գաղութին նվիրված ուսուցիչ, որն իր ամբողջ կյանքը նվիրած է հայ բազմաթիվ սերունդներու դաստիարակության»:

1945

«Զատիկ» - ստորագրություն՝ «Վազգեն վրդ.» (իմա՛. Վազգեն վարդապետ Պալճյան), «Պահակ» ազգային քաղաքական և գրական շաբաթաթերթ (խմբ. Հարություն Պողոսյան), Բուխարեստ, 1945 թ. № 2, մայիսի 6:

ՌԻնի «2 մայիս 1945 թ.» նշումը, որով և պարզվում է գրության ճիշտ ժամանակը: Գրության շարժառիթը և նրա ջերմաշունչ բնույթը հասկանալու համար պետք է հիշել, որ շուրջ մեկ տարի առաջ, այսինքն՝ 1944 թ. օգոստոսի 31-ին Բուխարեստն ազատա– գրվել էր ֆաշիզմի լծից: 1945 թ. մայիսյան տոնն այսպիսով, առաջինն էր, որն ազա– տության պայմաններում տոնում էր ամբողջ Ռումինիան, հարկավ նաև նրա մայրա– քաղաքը և, որն ընդգծելի է, մայրաքաղաքի հայազգի բնակչության ջերմ ոգևորության պայմաններում:

«Սիրելի հայրենակիցներ» - ստորագրություն՝ «տ. Վազգեն վարդապետ»: (Զետեղ– ված է «Հայաստանյայց փառահեղ ճակատի միտքը» ընդհանուր խորագրի ներքո): «Պա– հակ» ազգային, քաղաքական և գրական շաբաթաթերթ (խմբ. Հարություն Պողոսյան), Բու– խարեստ, 1945 թ. № 15, հուլիսի 15:

Ռումինահայ թեմի առաջնորդական տեղապահ տ. Վազգեն վարդապետ Պալճ– յանի ճառն է, որը նա կարդացել էր 1945 թ. հուլիսի 8-ին, Բուխարեստի «Սլաքա» կի– նոդահիճում, շուրջ երկու հազար հայազգիների ներկայությամբ: Ճառի ներքին մեծ ոգևորությունը պայմանավորված էր այն բանով, որ ռումինահայ թեմի՝ տաս հոգուց բաղկացած պատվիրակությունը, առաջնորդական տեղապահի գլխավորությամբ, ըն– դամենը մի քանի օր առաջ՝ 1945 թ. հուլիսի 5-ին վերադարձել էր Մայր Հայրենիքից: Սա տ. Վազգեն վարդապետի առաջին այցելությունն էր Հայաստան:

«Եկեղեցվո օրհնությունը» - ստորագրություն՝ «Տ. Վազգեն վարդապետ, Պուքրեշ»: «Պահակ» ազգային, գրական և քաղաքական շաբաթաթերթ (խմբ. Հարություն Պողոսյան), Բուխարեստ, 1945 թ. № 45, նոյեմբերի 29:

Հոդվածը գրվել է Հայաստանի խորհրդայնացման 25-րդ հոբելյանական տարե–դարձի առթիվ, որը Ռումինիայի՝ հիտլերյան ֆաշիզմի լծից ազատվելուց հետո, նշվում էր առաջին անգամ: Ի դեպ, այն նշվեց պատշաճ հանդիսավորությամբ, հայկական համայնքի մեծ ոգևորության պայմաններում:

1 9 4 6

«Ներգաղթը և մեր պարտականությունը» - ստորագրություն՝ «Վազգեն վրդ.» (իմա՛. Վազգեն վարդապետ Պալճյան): «Պահակ» ազգային, գրական և քաղաքական շաբաթաթերթ (խմբ. Հարություն Պողոսյան), Բուխարեստ, 1946 թ. № 54, փետրվարի 3:

«Երևանյան պատկերներ» - ստորագրություն՝ «Վազգեն վրդ.» (իմա՛. Վազգեն վար–դապետ Պալճյան): «Պահակ» ազգային, գրական և քաղաքական շաբաթաթերթ (խմբ. Հա–րություն Պողոսյան), Բուխարեստ, 1946 թ. № 72, հունիսի 16: Նույնը՝ անփոփոխ և նոր՝ «Կարոտ հայրենի» խորագրով Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածու, գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 46-48:

Ակնարկը գրվել է հեղինակի Մայր Հայրենիքում առաջին անգամ գտնվելու տարեդարձի առթիվ:

1 9 4 7

«Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա կաթողիկոսի ծննդյան 80-ամյակը» - ստո–րագրություն՝ «Վազգեն վարդապետ»: «Հայաստանյան ճակատ» դեմոկրատական շաբաթա–թերթ (խմբ. Հարություն Պապոյան), Բուխարեստ, 1947, № 71, նոյեմբերի 16: Հոդվածին, «Վե–հափառ Գարեգին Ա Կաթողիկոսի հոբելյանական հանդեսը Պուքրեշի մեջ» խորագրի ներ–քո, նախորդում է այդ բնույթի կարճառոտ մի տեղեկատվություն: Նույնը՝ հոդվածի վերնա–գրի որոշ փոփոխությամբ («Տանն Կիլիկիո Հայրապետ Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի 80-ամ–յակը), «Էջմիածին» ամսագիր, 1948 թ., № 3-4 (մարտ-ապրիլ), այստեղից էլ՝ միայն հոդվածը առանց կարճառոտ տեղեկատվության և Վեհափառ Հայրապետի կատարած որոշ սրբա–գրումներից հետո՝ Վազգեն Ա Հայրապետ հայոց, «Կենսագրություն, կոնդակներ, քարոզ–ներ» գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1958 թ., էջ 350-351): Նույնը՝ Վազգեն Ա Կաթո–ղիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, 1993 թ., էջ 83-85):

1947 թ. նոյեմբերի 11-ին Բուխարեստի «Հայ մշակույթի տան» կենտրոնա–կան դահլիճում հանդիսավորաբար նշվել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս,

ականավոր հայագետ-արվեստաբան Գարեգին Ա Հովսեփյանի ծննդյան 80-ամյա հոբելյանը, որի կյանքի և հոգևորական-գիտական գործունեության մա– սին զեկուցումներով հանդես են եկել թեմի առաջնորդական տեղապահ տ. Վազգեն Պալճյանը և դոկտոր Արտաշես Տիրացյանը: Հիշյալ հոդվածը այդ հանդիսության ժամանակ կարդացված ելույթն է:

«Ելույթ Հայաստանում Խորհրդային կարգերի 27-րդ տարեդարձի առթիվ» - ստորագրություն՝ «Վազգեն վարդապետ Պալճյան»: «Հայաստանյան ճակատ» դեմոկրատա– կան շաբաթաթերթ (խմբ. Հարություն Պապոյան), Բուխարեստ, 1947, № 79, դեկտեմբերի 7: Նույնը անփոփոխ և նոր վերնագրով («Նոյեմբերի 29-ին, Հայաստանյան ճակատի՝ Պուքրե– շում կազմակերպված փառատոնին արտասանած ուղերձը»), «Էջմիածին» ամսագիր, 1948 թ., № 1-2 (հունվար-փետրվար):

1948

«Ռումինահայ թեմը երեկ և այսօր» - ստորագրություն՝ «Վազգեն ծ[այրագույն] վար– դապետ Պալճյան»: «Էջմիածին» ամսագիր, 1948 թ. № 7-9 (հուլիս-սեպտեմբեր), էջ 66-70: Ինչպես հավաստում է հոդվածին հաջորդող թվականը, այն գրվել է Բուխարեստում, 1948 թ. հունվարի 10-ին: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 267-274:

«Ռուս ժողովուրդը իր տանը մեջ» - ստորագրություն՝ «Վազգեն ծ[այրագույն] վար– դապետ»: «Հայաստանյան ճակատ» դեմոկրատական շաբաթաթերթ (խմբ. Հարություն Պա– պոյան), Բուխարեստ, 1948թ. (պարբերականի այդ համարը ձեռքի տակ չունենալու պատ– ճառով, ամսաթվային մանրամասնությունները ճշտել չենք կարողացել): Նույնը անփոփոխ՝ «Լրաբեր» երկշաբաթաթերթ (ԱՄՆ), 1948 թ., № 41, հոկտեմբերի 14: Հոդվածին երկշաբաթա– թերթում նախորդում է խմբագրության կարճառոտ ծանուցումը, որտեղ մեկնաբանվում են նրա գրության և արտատպության շարժառիթները:

Հոդվածը արգասիքն է Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյանի՝ Մայր Հայրենիք կատարած երկրորդ ուղևորության (1948 թ. մայիսի 8-հունիսի 10): Այս ժամանակահատվածում՝ շուրջ տաս օր (մայիսի 8-15 և հունիսի 6-10) նա և իր ուղեկից Հարություն Պապոյանը անց են կացրել Մոսկվայում: Դրվա– տանքով ներկայացված է հասարակ ռուս մարդու «հոգեկան ծով բարությունը և մարդասիրությունը», իր աշխատանքի նկատմամբ նրա ցուցաբերած «հաս–

տատակամությունն ու լավատեսությունը»: Վերջում եզրակացվում է. «ՌԻ այս ժողովուրդը դեռ ըսելիք ունի մարդկության»:

«Ուղևորություն դեպի Էջմիածին» - ստորագրություն՝ «Վազգեն վարդապետ Պալճ– յան»: «Հայաստանյայց եկեղեցի (Ամերիկայի հայ լուսավորչական եկեղեցու պաշտոնական ամսագիր)» 1948 թ. № 9, սեպտեմբեր: Հրատարակված է «Սիրելի սրբազան հայր» ընդհա– նուր խորագրի ներքո:

Հոդվածին նախորդում է խմբագրության հետևյալ ծանոթությունը. Ռումա– նիո առաջնորդ տ. Վազգեն ծ. վարդապետ մայիս ամսուն կատարած է ուղևո– րություն մը դեպի Էջմիածին, որու միջոցին այցելած և ունկնդրություն ունե– ցած է Ամենայն Հայոց Հայրապետին հետ: Այս առիթով հետևյալ հոդվածին մեջ Վազգեն վարդապետը կուտա իր ընդհանուր տպավորությունները Հա– յաստանի և Մայր Աթոռի մասին, մասնավորապես շեշտելով Էջմիածնի հո– գևոր ճեմարանի շուրջ ստեղծված խանդավառությունը»:

1950

«Մեր հարազատ լեզուն» - ստորագրություն՝ «Վազգեն ծ[այրագույն] Պալճյան»: «Հա– յաստանյան ճակատ» դեմոկրատական շաբաթաթերթ (խմբ. Հարություն Պապոյան), Բու– խարեստ, 1950, № 183, փետրվարի 5: Նույնը անփոփոխ՝ «Էջմիածին» ամսագիր, 1950 թ. №3-4, մարտ-ապրիլ: Նույնը՝ նույն ամսագրում, 1959 թ. № 2, փետրվար (վերջինն ունի փոք– րիկ ընծայական): Նույնը՝ Վազգեն Ա Կաթողիկոս «Գալիքի տեսիլքով» ժողովածուում, գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 263-266:

1948 թ. հունիսին, Ամերիկայի հայ լուսավորչական եկեղեցու պաշտոնա– կան «Հայաստանյայց եկեղեցի» ամսագիրը հանդես է գալիս «Հայերենը Ամե– րիկայի մեջ» խորագրով խմբագրական անստորագիր մի հոդվածով, որտեղ «ապացուցվում է», որ Ամերիկայի պայմաններում հայոց լեզուն պահպանելն անկարելի է և որ այն իր եկեղեցու հետ միասին ի վերջո «անհետացումի է դա– տապարտված»: Կրքոտ պատասխանով, որն ունի «Մի ծանրակշիռ խնդրի շուրջ» վերնագիրը, հանդես եկավ Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագիրը (1949 թ., № 3-4), և բացահայտելով հիշյալ դատողությունների ամբողջ սնանկությու– նը, ցույց տվեց հարցի քննության ճշմարիտ ուղիները: Իր հոդվածում Վազգեն ծայրագույն վարդապետը բերելով նորանոր փաստարկներ, հավաստում է

(Էջմիածնի» դիրքորոշման ճշմարտացիությունը, եզրակացնելով, որ՝ «Սփյուռ–քի մեջ հայ լեզուն, հայ հոգին... վառ պահելու նվիրական գործը հայ եկեղեցի–ին ու անոր բոլոր սպասավորներուն պատմական սեպուհ պարտականու–թյունն է»:

«Խոսք վասն խաղաղության» - ստորագրություն՝ «Վազգեն ծ[այրագույն] վարդապետ Պալճյան»: «Հայաստանյան ճակատ» դեմոկրատական շաբաթաթերթ (խմբ. Հարություն Պապոյան), Բուխարեստ, 1950, № 154, ապրիլի 23:

Ռումինահայ թեմի առաջնորդ տ. Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճ–յանի քարոզն է, որը նա կարդացել է Բուխարեստի հայկական Սուրբ Հրեշտա–կապետաց եկեղեցում, ի պաշտպանություն խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի մշտական կոմիտեի կոչին, ատոմային զենքն արգելելու մասին: Հրատարակության հանձնելու կապակցությամբ հեղինակը կատարել է որոշ խմբագրումներ:

«Ելույթ Բուխարեստում կայացած խորհրդակցության ժամանակ» - ստորագրու–թյուն՝ «Վազգեն ծ[այրագույն] վարդապետ Պալճյան»: «Նոր կյանք» դեմոկրատական շաբա–թաթերթ, Բուխարեստ, 1950 թ., № 31, դեկտեմբերի 24:

Դեկտեմբերի 19-ին, Բուխարեստի ռումինական օրթոդոքս եկեղեցու պատ–րիարքարանում, Ժուստինյան սրբազան պատրիարքի նախագահությամբ, տեղի է ունենում Ռումինական հանրապետության տարածքում գործող բոլոր դավանանքների հոգևոր առաջնորդների խորհրդակցություն, որտեղ և ելույ–թով հանդես է գալիս Ռումինահայ թեմի առաջնորդ տ. Վազգեն Պալճյանը: Այդ ելույթն է ահա, որը լեզվա-ոճական բնույթի որոշ շտկումներից հետո, հե–ղինակը նպատակահարմար է գտել հրատարակել:

«Ելույթ նվիրված խաղաղության պաշտպանությանը» - առաջին անգամ ռումիներեն լեզվով հրատարակվել է ռումինական դեմոկրատական «ՌՒնիվերսուլ» օրաթերթում, 1950 թ. դեկտեմբերին: Նույնը՝ հեղինակի արևմտահայերեն թարգմանությամբ, «Նոր կյանք» դե–մոկրատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1951 թ., № 33, հունվարի 7: Ռումիներեն օրա–թերթը, որտեղ տպագրված է եղել Վազգեն Պալճյանի սույն հոդվածը, գտնել չենք կարողա–ցել:

1951

«Կոչ ի պաշտպանություն Բեռլինի դաշնագրի» - ստորագրություն՝ «Վազգեն ծ[այ–րագույն] վարդապետ Պալճյան»: «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթ, Բուխա–րեստ, 1951 թ., № 47, ապրիլի 15:

> 1951 թ. փետրվարին Բեռլինում գումարված Խաղաղության Համաշխարհա–յին խորհրդի կոնգրեսում ընդունվեց ուղերձ ուղղված աշխարհի հինգ մեծ պե–տություններին, և կոչ արվեց նրանց խաղաղության ուխտագիր կնքել: Կոչը լայն արձագանք գտավ ամենուրեք, հարկավ նաև՝ Ռումինիայում: Այդ դեմո–կրատական տրամադրությունների արձագանքն է հանդիսանում նաև Վազ–գեն վարդապետի վերոհիշյալ հոդվածը:

«Նամակ Հայաստանեն» - ունի «Վազգեն ծայրագույն վարդապետի նամակը Հայաս–տանեն» ընդհանուր խորագիրը, որի օգնությամբ էլ ճշտվում է հեղինակային պատկանե–լությունը: «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1951 թ., №55, հունի–սի 10:

> ՌԻնի խմբագրության հետևյալ ծանոթությունը. «Ստորև քաղվածաբար կուտանք Ռումինահայ թեմի առաջնորդ տ. Վազգեն ծ. վարդապետի՝ մայիս 25 թվակիր նամակը, զոր Երևանեն ուղղած է Ռումանահայ թեմական խորհըր–դին»: Ըստ այդմ պարզվում է, որ շաբաթաթերթը հրատարակել է նամակը ոչ թե ամբողջությամբ, այլ «քաղվածաբար»: Նամակի ամբողջական բնագիրը գտնել չհաջողվեց:

«Նամակ Հայաստանեն» - ունի «Վազգեն ծայրագույն վարդապետի մեկ նոր նամակը Երևանեն» ընդհանուր խորագիրը, որի օգնությամբ էլ ճշտվել է հեղինակային պատկանե–լությունը: «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1951 թ., №56, հունի–սի 17:

> ՌԻնի խմբագրության հետևյալ ծանոթությունը. «Հունիսի 2-ի թվակիրով Ռումանահայ թեմի առաջնորդ տ. Վազգեն վարդապետ, Երևանեն նամակ մը գրած է իր մոր, որմե կքաղենք հետևյալ շահեկան մասերը»: Ըստ այդմ՝ պարզ–վում է նամակի գրության թվականը և այն, որ խմբագրությունը նամակը հրա–

տարակել է քաղվածաբար: Նամակի ամբողջական բնագիրը գտնել չենք կարողացել:

«Շողակաթ լուսո խորան Էջմիածին» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս»: «Էջմիածին» ամսագիր, 1951 թ. № 7-8 (հուլիս-օգոստոս): Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Հայրապետ հայոց, «Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ» ժողովածուում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1959 թ., էջ 336-337: Նույնը՝ Վազգեն Ա Կաթողիկոս «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 67-69:

> «Ահա թե ինչու միայն Հայաստանյայց Եկեղեցվո ծոցին մեջ, միայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կենարար լույսի մեջ հայ հավատացյալը կգտնե աղբյուրը երկնային շնորհներուն, և ստեղծագործ հանճարին: Հայ ժողովուրդն ու հայ եկեղեցին, գրեթե միասին ծնած որպես հոգեկան-մշակութային իրականություններ, միասին ապրեցան դարեր շարունակ, միասին աճեցան ու ծաղկեցան, միասին հյուսեցին մեծափառ երգը հայոց աշխարհի կյանքին: Եվ միասին ալ կուրծք տվին ճակատագրի ահավոր հարվածներուն, միասին տառապեցան երկար ու մարտիրոսացան...»:

«Նոթեր Մայր Հայրենիքեն» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս»: «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1951 թ., № 66 (օգոստոսի 26) - № 69 (սեպտեմբերի 17): Նույնը՝ հեղինակի կատարած լեզվա-ոճական բնույթի որոշ փոփոխումներով, «Էջմիածին» ամսագիր (Մայր Աթոռի պաշտոնական պարբերական), 1951 թ, № 9-10 (սեպտեմբեր-հոկտեմբեր) և 11-12 (նոյեմբեր-դեկտեմբեր):

> Հանդիսանում է թեմի առաջնորդի՝ երրորդ անգամ Մայր Հայրենիք կատարած ուղևորության (1951 թ. մայիսի 20-օգոստոսի 10) տպավորությունների գրառումը: Այս ուղևորության նշանակալից իրադարձությունն այն եղավ, որ 1951 թ. հուլիսի 8-ին, անձամբ Տ.Տ. Գեորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսի ձեռքով (Եզակի դեպք Մայր Աթոռում) և «խուռն բազմության ներկայությամբ» Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյանին շնորհվեց եպիսկոպոսական աստիճան:

1952

«Ոգի Հայաստանյայց» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս»: «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1952 թ., № 121, սեպտեմբերի 14: Հոդվածի վերնագիրը Ղևոնդ Ալիշանի բանաստեղծությունների «Նուագք» խորագիրը կրող հինգհատորյա ժողովածուի երրորդ՝ «Հայրունի» հատորում տպված գրաբար բանաստեղծության անվանումն է (Վենետիկ, 1867 թ., էջ 166-167), իսկ հոդվածում եղած աշխարհաբար ցիտատը

բերված է նույն Ղևոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» ընդհանուր խորագրի ներքո հրատարակված «Հայ հանճար» բանաստեղծությունից:

1 9 5 3

«Նոր տեղեկություններ Խորհրդային Հայաստանեն» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս» (իմա՛. Պալճյան): «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1953 թ., № 160 (հունիսի 21):

Սույն նամակ-ուղեգրական ակնարկը հեղինակը գրել է Երևանում, 1953 թ. մայիսի 20-ին և առաքել է Բուխարեստ իր մորը՝ Սիրանույշ Պալճյանին: Շաբաթաթերթն այն հրատարակել է «քաղելով շահեկան մասերը»: Նամակ-ակնարկի լրիվ բնագիրը գտնել չենք կարողացել:

«Նոթեր ռումանահայ կյանքի մասին» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս»: «Էջմիածին» ամսագիր, 1953 թ. № 6 (հունիս): Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Հայրապետ Հայոց, «Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1958 թ., էջ 345-349:

«Նամակ Երևանեն» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս» (իմա՛. Պալճյան): «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1953 թ., № 161 (հունիսի 28):

Սույն նամակ-ակնարկը հեղինակը գրել է Երևանում, 1953 թ. հունիսի 10-ին և առաքել է Բուխարեստ իր մորը՝ Սիրանույշ Պալճյանին: «Նոր կյանքը» այն հրատարակել է քաղվածաբար, լրիվ բնագիրը գտնել չենք կարողացել:

1 9 5 4

«Հայ եկեղեցվո անփոխարինելի կորուստը» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս Պալճյան»: «Էջմիածին» ամսագիր, 1954 թ. № 6, հունիս: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա, Հայրապետ Հայոց, «Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1958 թ., էջ 353:

Նույնը անփոփոխ՝«Վազգեն եպիսկոպոս Պալճյան (առաջնորդ ռումինահայ թեմի)» ստորագրությամբ և խմբագրության կարճառոտ ծանոթությամբ (տեղեկացվում է, որ արտատպությունը կատարվում է «Երջանկահիշատակ Տ.Տ. Գեորգ Զ Կաթողիկոսի մահվան քառներորդ տարելիցի առթիվ), «Էջմիածին» ամսագիր, 1974 թ. № 5, մայիս, էջ 35:

1954 թ. մայիսի 9-ին Մայր Աթոռում իր մահկանացուն կնքեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գեորգ Զ Չորեքչյանը և մայիսի 27-ին տեղի ունեցավ հոգելույս կաթողիկոսին հողին հանձնելու արարողությունը: Ի թիվս հոգևոր դասի մյուս բարձրաստիճան ներկայացուցիչների, դամբանական խոսքով հանդես է գալիս նաև Վազգեն եպիսկոպոս Պալճյանը: Այդ դամբանականն էլ, որոշ վերամշակումներից հետո, հեղինակը հանձնել է հրատարակության:

«[Մաղթանք]» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս» (իմա՛. Պալճյան): «Էջմիածին» ամսագիր, 1954 թ. № 6, հունիս:

Կաթողիկոս Տ.Տ. Գեորգ Զ Չորեքչյանին հողին հանձնելուց հետո, տեղապահ Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը հանձնարարում է ռումինահայ թեմի առաջնորդ տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանին գրելու հավուր պատշաճի մի մաղթանք, որտեղ բնութագրվի հանգուցյալ Հայրապետի գործն ու գործունեությունը: 1954 թ. հունիսի 5-ին, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Եպիսկոպոսական համատեղ ժողովում, Վազգեն եպիսկոպոսը ընթերցում է իր գրած մաղթանքը, որը մեկ-երկու աննշան դիտողություններից հետո, միաձայնությամբ վավերացվում է: Այդ էլ, ահա, հանձնարարվում է տպագրության և իրավական փաստաթղթի ուժ է ստանում:

«Ռումինահայ թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյանի ելույթը» - («Սովետական Հայաստանում արտասահմանյան հյուրերի ռադիոելույթները» ընդհանուր խորագրի ներքո): Ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս», «Էջմիածին» ամսագիր, 1954 թ. № 7-8, հուլիս-օգոստոս: Նույնը անփոփոխ և նոր՝ «Ելույթ Երևանի ռադիոյից» խորագրով, Վազգեն Ա, Հայրապետ Հայոց, «Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1958 թ., էջ 254-256:

«Բուլղարահայ գաղութը այսօր» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս Պալճյան, առաջնորդ Ռումինահայ թեմի»: «Էջմիածին» ամսագիր, 1954 թ. № 12, դեկտեմբեր, էջ 50-55: Գրվել է Բուխարեստում, 1954 թ. հոկտեմբերի 12-ին: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 275-285:

1955

«Էջմիածնի վերանորոգությունը» - Ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս» (իմա՛. Պալճյան)։ «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1955 թ., № 3, հուն–վարի16, № 8, փետրվարի 20։

> Նամակին նախորդում է շաբաթաթերթի հետևյալ ծանոթությունը. «Վազգեն եպիսկոպոսի նամակեն. Երևանեն, Ռումանահայ թեմական խորհուրդին ուղղված նամակով մը, թեմական առաջնորդ տ. Վազգեն եպիսկոպոս Պալճ–յան կհաղորդե հետևյալ տեղեկությունները»։ Ըստ այդմ, պարզ է դառնում, որ հրատարակված է Վազգեն սրբազանի նամակը ոչ թե ամբողջությամբ, այլ նրա համառոտությունը։ Լրիվ բնագիրը գտնել չենք կարողացել։

«Խորհրդային Հայաստան 1955-ին» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս Պալճյան»։ Սկսում է հրատարակվել թերթոնի ձևով Բուխարեստի «Նոր կյանք» դեմոկրա–տական շաբաթաթերթում, սկսած 1955 թ. ապրիլի 8-ից (№ 17)։ № 20-ից (մայիսի 13) հուշա–պատումը շաբաթաթերթում ստանում է նոր՝ «Ճամբորդական նոթեր» խորագիրը և շա–րունակվում է մինչև № 23-ը (հունիսի 3)։ Նույնը՝ Վեհափառ Հայրապետի կատարած լեզվա-ոճական որոշ ուղղումներով և երկրորդ մասի «Ճամբորդական նոթեր» վերնագիրը օգտա–գործված ամբողջ գործի համար՝ Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 301-322։

> «Ճամբորդական նոթերը» հանդիսանում է Վազգեն եպիսկոպոսի՝ Մայր Հայրենիք կատարած վերջին ուղևորության արգասիքը։ Նա նորից Հայաստան եկավ 1955 թ. սեպտեմբերի 23-ին, Ազգային-Եկեղեցական սրբազումար ժողո–վին իր մասնակցությունը բերելու համար, իսկ սեպտեմբերի 30-ին, ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս։

"Viata si opera sfintului Grigore din Nareg" - (իմա՛. «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործը») – ստորագրություն՝ "Vask en I, Patriarhul suprem si Catolicos al tuturor armenilor" (իմա՛. «Վազգեն Առաջին, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց»)։ "Orto–doxia" ամսագիր, Բուխարեստ, 1955 թ. № 10, հոկտեմբեր, էջ 166-177։ Հոդվածին հաջորդում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի Գ (գ), ԺԲ (դ), ԽԱ (ա), ԾԵ (գ), ՀԱ (բ) և ՁԱ (ա) գլուխներից վերցված վեց հատվածների՝ գրաբարից ռումիներեն կատարված չափածո թարգմանությունները, որը կատարել է նույն հեղինակը։ Հոդվածը Սարգիս Ժամ–

կոչյանի՝ ռումիներեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածուում, գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 191-209: Սկզբնական, ավելի համառոտ ռումիներեն նախօրինակը կարդացվել է որպես զեկուցում Բուխարեստի Սուրբ Հրեշտակապետք հայկական եկեղեցում 1950 թ. դեկտեմբերի 10-ին, Գրիգոր Նարեկացու ծննդյան հազարամյակին նվիրված հոբելյանական հանդիսության ժամանակ: Այստեղ էլ, զեկուցումից առաջ, զեկուցողը կարդացել է Նարեկացու «Մատ–յան...»-ից իր կատարած՝ վերոհիշյալ ռումիներեն թարգմանությունները:

«Հայաստանյայց Եկեղեցին Խորհրդային Միության մեջ» - ստորագրություն՝ «Վազ–գեն եպիսկոպոս Պալճյան»: «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթ, Բուխարեստ, 1955 թ., № 26 հունիսի 17:

> Հոդվածին նախորդող՝ շաբաթաթերթի ծանոթությունից իմանում ենք, որ այն «Ռումինահայ թեմի առաջնորդ Վազգեն սրբազանի ելույթն է, զոր այն ունեցած է հունիսի 2-ին, Բուխարեստի «Ստեփան Շահումյան» մշակութային տան հանդիսադահլիճում:

«Ճամբորդական նոթեր Ժողովրդական Ռեսպուբլիկա Բուլղարիայեն» - ստորա–գրություն՝ «Վազգեն եպիսկոպոս» (իմա՛. Պալճյան): «Նոր կյանք» դեմոկրատական շաբա–թաթերթ, Բուխարեստ, 1955 թ., № 3, հունվարի 16, № 8, փետրվարի 20: Սկսում է հրատա–րակվել որպես թերթոն Բուխարեստի «Նոր կյանք» դեմոկրատական շաբաթաթերթում, 1955 թ. հուլիսի 29-ից (№ 31) սկսած: Ավարտ՝ նույն թվականի սեպտեմբերի 2-ին (№ 36), որի ընթացքում լույս է տեսնում վեց հատված, որոնցից յուրաքանչյուրն ինքնուրույն վերնագիր ունի («Ճամբորդական նոթեր Ժ.Ռ. Բուլղարիայեն», «Բուլղարահայ համայնքներու ներքին կազմությունը», «Երևան մշակութային միության արդյունավոր գործունեությունը», «Բուլղարահայ վարժարանները» և «Բուլղարահայերը աշխատանքի մարզին մեջ»:

1 9 6 1

«Վնասաբեր մի հրատարակության առթիվ» - ստորագրություն «Էջմիածին ամսագրի խմբագրություն»: «Էջմիածին» ամսագիր, 1961 թ. № 2, փետրվար, էջ 22-23:

> Հոդվածի՝ միայն Վեհափառին բնորոշ մտածողական համակարգը, հատ–կանշական լեզուն ու ոճը և մանավանդ այն հանգամանքը, որ Նորին Սուրբ Օծությունը շուրջ մեկ տարի հետո հանդես էր գալու գրեթե նույն վերնագիրն

ունեցող մի այլ հոդվածով (տես ներկա հատորը, «Վնասաբեր մի գիրք»), որ–տեղ քննարկելու էր հենց այն հարցերը, որոնց անդրադարձել էր այստեղ, հե–ղինակային պատկանելության վերաբերյալ որևէ կասկած բացառում են:

«Սրբությամբ պահպանենք եկեղեցական արվեստի մեր ավանդները» - անստորագիր, զետեղված է «Խմբագրական» ընդհանուր վերտառության ներքո (Վեհափառ Հայրապետի գրչի արգասիքը լինելու մասին, տես՝ «Մատենագիտություն «Էջմիածին» ամ–սագրի, կազմեց Սեդա Կոծինյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1975 թ., էջ 155): «Էջմիա–ծին» ամսագիր, 1961 թ. № 3, մարտ, էջ 3-6:

1962

«Վնասաբեր մի գիրք» - ունի «Խմբագրություն» ստորագրությունը: «Էջմիածին» ամ–սագիր, 1962 թ. № 4, ապրիլ: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա. Կաթողիկոս, «Գալիքի տեսիլ–քով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 70-77:

Հոդվածի՝ միայն Վեհափառ Հայրապետին բնորոշ մտածողական համա–կարգը, հատկանշական շարադրանքը, լեզվա-ոճական բնույթի առանձնա–հատկությունները ոչ մի կասկած չեն թողնում նրա հեղինակային պատկանե–լության մասին. մի բան, որը 1990 թ. դեկտեմբերի 18-ի հարցազրույցի ժամա–նակ հաստատեց նաև Նորին Սուրբ Օծությունը: Գրախոսված է Բեյրութի հայ–կական կաթոլիկ համայնքի առաջնորդ Հայր Սահակ եպիսկոպոս Կոգյանի «Հայոց եկեղեցին» խորագիրը կրող աշխատությունը (Բեյրութ, 1961 թ., 792 էջ) և այն բացասաբար է գնահատված:

1965

«Խոսք աղոթքի և ուխտի» - ստորագրություն՝ «Վազգեն Ա, Սուրբ Էջմիածին, 24 ապ–րիլ, 1965»: «Էջմիածին» ամսագիր, 1965 թ. № 2-3-4, փետրվար–մարտ–ապրիլ, էջ 3-5:

Վեհափառ Հայրապետի հոդվածի ձեռագիր նկարահանությունն է (ֆաքսի–միլյե), որը գրվել է Եղեռնի 50-ամյակի առթիվ:

«Այսօր, Մեծ եղեռնի հիսնամյակին, նայեցե՛ք մեր ժողովուրդին: Ան, կեն–դանության հուրով վերստին բոցավառ, իր ազատ կամքով անսասան կանգ–

նած հայրենական սուրբ հողին վրա, հպարտ ու կենսուրախ, կկառուցանե իր զարուն ներկան ու ճամբա կբանա դեպի գալիքը ոսկի փառքերու»:

1966

«Ողջո՜ւյն Համաստեղին» - («Համաստեղի հիսունամյա հոբելյանը» ընդհանուր խո– րագրի ներքո) - ստորագրություն՝ «Վազգեն Ա, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, 11 մարտ,1966 թ.,Սուրբ Էջմիածին»: «Էջմիածին» ամսագիր, 1966 թ. № 5, մայիս, էջ 35: Հոբելյարը բնութագրված է որպես «Հայ գրականության երկնակամարին վրա միշտ բարձրացող աստղ»:

1968

«Նոր ավետիս հայության» - ստորագրություն՝ «Վազգեն Ա, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, 28 մայիսի 1968թ., Սուրբ Էջմիածին»: «Էջմիածին» ամսագիր, 1968 թ. № 5, մայիս, էջ 3:

> Գրված է Սարդարապատի հաղթության հիսնամյակի առթիվ: «Ավարայր և Սարդարապատ կխորհրդանշեն հայ ժողովրդի պայքարը իր գոյատևման, իր հայրենիքին ու իր ազատության համար: Այս իմաստով Ավարայրի և Սարդա– րապատի ճակատամարտերը նույն մարտն են, որ տևապես մղված է ու կմղվի հանուն ազգին ու հայրենիքին»:

«Օրհնություն Սուրբ Էջմիածնից» - ստորագրություն՝ «Վազգեն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց, Սուրբ Էջմիածին, 9 հոկտեմբերի,1968 թ.»: «Էջմիածին» ամսագիր, 1968 թ. № 10, հոկտեմբեր, էջ 1:

> «Երկու հազար յոթ հարյուր և հիսուն տարիների բարձունքից, մեր ժողո– վուրդը արդար հպարտությամբ ողջունում է այսօր իր վերածնված քաղաքա– մայրը, նոր ու շքեղ Երևանը, լույսերի մեջ ծփացող»:

1969

«Միսալ և մերժելի» - անստորագիր, զետեղված է «Խմբագրական» ընդհանուր խո– րագրի ներքո: «Էջմիածին» ամսագիր, 1969 թ. № 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 105-114: Հոդվածի՝ միայն Վեհափառ Հայրապետին բնորոշ գրելաոճը, մտածողության հատկանշա– կան առանձնահատկությունները, ինքնատիպ շարադրանքը կասկած չեն թողնում, որ նրա հեղինակը Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ն է. մի բան, որը 1991 թ. փետրվարի 6-ի մեր հարցազրույցի ժամանակ հավաստեց նաև ինքը՝ Նորին Ս. Օծությունը: (Տես նաև.

«Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի, կազմող՝ Սեդա Կոծինյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1975 թ., էջ 208):

Գրախոսված է Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի «Նշումներ հոգևորականներու ամուսնության և կուսակրոնության մասին» աշխատությունը (131 էջ), «որի վրա չեն նշված ոչ թվականը և ոչ էլ տպագրության վայրը» և այն բացասական է գնահատված:

1970

«Ճշմարտությունը ամբողջ» - Անստորագիր, զետեղված է «Խմբագրական» ընդհանուր խորագրի ներքո: «Էջմիածին» ամսագիր, 1970 թ. № 6-7, հունիս-հուլիս, էջ 3-10: Հոդվածին նախորդում է Վեհափառ Հայրապետի և Մեծի Տանն Կիլիկիո Տ.Տ. Խորեն Ա-ի միջև տեղի ունեցած նամակագրությունը և մեկնաբանվում են այդ նամակագրության մի շարք կարևոր կետերը: Նույնը նույն թվականին հրատարակվել է որպես առանձնատիպ, վերնահիշյալ վերնագրով: Հոդվածի՝ միայն Վեհափառին բնորոշ գրելաոճը, լեզվա-ոճական բնութագրական առանձնահատկությունները, նրա հեղինակային պատկանելության վերաբերյալ որևէ կասկած բացառում են, մի բան, որը հավաստեց նաև Նորին Ս. Օծությունը 1992 թ. փետրվարի 20-ին մեզ հետ կայացած հարցազրույցի ժամանակ: (Տես նաև. «Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի, կազմող՝ Սեդա Կոծինյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1975 թ., էջ 215):

Քննարկված է Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջև եղած հարաբերությունների հարցերը, ապա արված է հետևյալ եզրակացությունը. «Այնքան ժամանակ, որ Անթիլիասը կշարունակի այս հակաեկեղեցական ու հակաազգային քաղաքականությունը, իր կանոնադրությամբ իսկ հռչակված, բոլորս մեր նվիրական պարտքը պետք է նկատենք պաշտպանել հայ եկեղեցու միությունը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գերագույն հեղինակությունը, իբրև կենտրոն և գլուխ Հայաստանյայց եկեղեցու»:

«Վեհափառ Հայրապետի պատգամներից» - անստորագիր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, «Էջմիածին» ամսագիր, 1970 թ. № 10, հոկտեմբեր, էջ 13-28:

Վեհափառ Հայրապետի գահակալության ամենատարբեր տարիներին տրված քանինն անուն կոնդակներից, հավատացյալների մոտ խոսված այլ-

նայլ քարոզներից, զանազան առիթներով ասված ողջույնի խոսքերից, աղոթքի և ուխտի պատգամներից կազմված ինքնատիպ մի հավաքածու է, որն ընդգրկում է 1955 թ. դեկտեմբերի 1-ից, մինչև 1970 թ. ապրիլի 24-ը ընկած ժամանակահատվածը: Հավաքածուն կազմված է այն սկզբունքով, որ առավել կարեվորվի Հայրապետական գործունեության ազգային-հայրենասիրական կողմը: Նախորդող կարճառոտ ներածականում (ունի «Խմբագրություն» ստորագրությունը) կարդում ենք՝ «Հայոց Հայրապետի գահակալության տասնհինգամյակի բարեբաստիկ առիթով, ստորև «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում 1955-1970 թվականներին գրված մտածումի և գաղափարի սույն գեղեցիկ քանդակ-ծաղկեփունջը, որպես միշտ ներշնչող, միշտ թարմ ու սրտառուչ, հստակ մտածումով, հավատով ու հույսով զեղուն Հայրապետական խոսք ու պատգամ, ապրում ու տեսիլք»:

1980

«Հայ ժողովուրդը և իր մայր եկեղեցին» - ունի «Խմբագրություն» ստորագրությունը: «Էջմիածին» ամսագիր, 1980 թ. № 4, ապրիլ: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա. Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 70-82: Հոդվածի՝ միայն Վեհափառին բնորոշ մտածողական համակարգը, լեզվա-ոճական բնութագրական առանձնահատկությունները նրա հեղինակային պատկանելության վերաբերյալ որևէ կասկած բացառում են, մի բան, որը 1990 թ. մարտի 25-ի հարցազրույցի ժամանակ հավաստեց նաև Նորին Ս. Օծությունը:

1984

«[Սուրբ Էջմիածնի լույս բարձունքներից...]» - (բանաստեղծությունը վերնագիր չունի, նմանահանություն է, բաղկացած է երկու տնից, բերված է առաջին տան առաջին տողը): Ստորագրություն՝ «Վազգեն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց»: Ստորագրությանը հաջորդում է «Նոր տարի, 1984 թ.» նշումը: Նշենք, որ Վեհափառ Հայրապետի առաջին և միակ տպագիր բանաստեղծությունն է, որը Նորին Սուրբ Օծությունը հրատարակել է իր գիտակցական ամբողջ կյանքի ընթացքում: «Արարատ» ալբոմ (լուսանկարիչ Սարգիս Համբարձումյան, ծաղկող՝ Սարգիս Կարազյան), Ֆինլանդիա, հրատարակություն «Էրեբունի», 1984 թ., էջ 2: Նույնը՝ երգչուհի Մարի Պողապալյանի ձայնագրությամբ, մեկ ձայնի (սոլո) կա–

տարման համար, նույնը՝ վերածված քառաձայն կատարման, «Շարական» անսամբլի ղեկավար Դանիել Երաժշտի (Գրիգոր Դանիելյան) կողմից:

1985

«Ծաղկաքաղ Վեհափառ Հայրապետի մտածումներից» - «Էջմիածին» ամսագիր, 1985 թ., № 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 55-98:

Վեհափառ Հայրապետի գահակալության երեսնամյակի առթիվ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը պատրաստում է Նորին Սուրբ Օծության՝ տարբեր ժամանակների քարոզներից, հավատացյալներին ուղղված հայրապետական խոսքերից, ճառերից ու պատգամներից, զանազան անձանց գրված նամակներից բաղկացած մի հավաքածու-ծաղկաքաղ, որը և, հիշված խորագրի ներքո հրատարակվում է ամսագրում: Ընդգծված գրեթե բոլոր նյութերը ներկայացված են ավել կամ պակաս համառոտումներով: «Ծաղկաքաղ...»-ը բաղկացած է վեց ինքնուրույն գլուխներից («Աստված և մարդը», «Քրիստոնեական», «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ մտքի հսկաներ», «Պատգամներ» և «Ձայն խաղաղության»), որոնցից յուրաքանչյուրն իր հերթին նույնպես ունի ենթաբաժիններ:

1986

«Ի սեր մեր եկեղեցու միության» - ունի «Խմբագրական» ստորագրությունը: «Էջմիածին» ամսագիր, 1986 թ. № 10, հոկտեմբեր: Նույնը անփոփոխ՝ Վազգեն Ա. Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով», գիրք Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., էջ 86-90:

Այն հանգամանքը, որ անստորագիր սույն հոդվածը զետեղված է Հայրապետական վերոհիշյալ ժողովածուում, – մի ժողովածու, որը մեր կողմից պատրաստվելու ամբողջ ընթացքում մշտապես գտնվում էր Նորին Սուրբ Օծության անմիջական հսկողության ներքո, – արդեն լուծում է նրա հեղինակի ով լինելու հարցը: Ավելացնենք, որ այս փաստը 1992 թ. հունվարի 8-ի՝ մեզ հետ կայացած հարցազրույցի ժամանակ հավաստեց նաև ինքը՝ Նորին Սուրբ Օծությունը: Քննարկված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր-հասարակական ու ազգային գործունեության հետ առնչվող մի քանի անկյունաքարային հարցեր:

1 9 8 7

«Ի սեր կարգ ու կանոնի» - անստորագիր, հրատարակված է «Խմբագրական» ընդ–հանուր խորագրի ներքո, որպես առաջնորդող: «Էջմիածին» ամսագիր, 1987 թ. № 1, հուն–վար, էջ 3-7:

Դատելով միայն Վեհափառ Հայրապետին բնորոշ մտածողական համա–կարգից, հատկանշական լեզվա-ոճական առանձնահատկություններից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ քննարկված է հարցերի այն համա–խումբը, որին անդրադարձել էր Նորին Սուրբ Օծությունն իր նախորդ՝ «Ի սեր մեր եկեղեցու միության» հոդվածում (տես ներկա հատորը, 1986 թ.), - ընդ–գծենք այստեղ նաև վերնագրերի ընդհանրությունը, – ապա կասկած չի մնում, որ այս խմբագրականի հեղինակը Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Առաջինն է:

«Աղմուկ վասն ոչնչի» - անստորագիր, զետեղված է «Խմբագրական» ընդհանուր խորագրի ներքո: «Էջմիածին» ամսագիր, 1987 թ. № 5-6, մայիս-հունիս, էջ 3-4:

Սույն հոդվածի՝ Վեհափառ Հայրապետի գրչին պատկանելու հանգամանքը հավաստել է «Էջմիածին» ամսագրի նախկին խմբագիր պ. Երվանդ Մելքոն–յանը: Ավելացնենք նաև լեզվա-ոճական և մտածողական բնութագրիչ առանձ–նահատկությունները, որոնք այնքան հատկանշական են Նորին Սուրբ Օծու–թյանը: Քննարկված են «Եկեղեցին կազմական մի կանոնադրությամբ օժտե–լու» հետ առնչվող հարցերը և «արտասահմանյան որոշ հայ թերթերի» այս կա–պակցությամբ բարձրացրած «անդրադարձումները»:

1 9 9 2

«Մի ոժբախտ «Թուղթ շրջաբերական» - անստորագիր, զետեղված է «Խմբագրական» ընդհանուր խորագրի ներքո, որպես առաջնորդող: «Էջմիածին» ամսագիր, 1992 թ., № 8, օգոստոս, էջ 3-5:

Հոդվածի՝ Վեհափառ Հայրապետի գրչին պատկանելու մասին հավաստել է «Էջմիածին» ամսագրի նախկին խմբագիր պ. Երվանդ Մելքոնյանը: Ներկա–յացված և բացասական է գնահատված «Հովհաննես-Պետրոս կաթոլիկ հայոց սրբազան պատրիարքի «Թուղթ շրջաբերականը»՝ «Վերադարձ Հայաստան»

վերնագրված, 7 հունիս, 1992 թվակիր, Պատրիարքի հոր ստորագրությունը կրող»:

ԱՌԱՆՁԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (վերլուծական փորձ)» - Հեղինակ՝ Կարապետ Պալճյան, Բուխարեստ, 1940 թ., 62 էջ:

Նախապես որպես զեկուցում կարդացվել է Բուխարեստի «Հայ ուսանող-ների միության» հերթական նիստերից մեկի ժամանակ, 1936 թվականի հուն-վարին: Ներկաների կողմից զեկուցումն ընդունվել է դրվատանքով ու քաջա-լերանքով, բայց և՝ եղել են դիտողություններ ու առաջարկություններ: Հրա-տարակության պատրաստելով իր աշխատությունը, Կարապետ Պալճյանը հաշվի է առել դիտողությունները: Նույնը՝ Մ. Դարբինյան-Մելիքյանի ռուսե-րեն համառոտ թարգմանությամբ (մեկնաբանված է Վեհափառ Հայրապետի ազգանվեր գործունեությունը և բնութագրված է «ընթերցողներին ներկայաց-վող սույն աշխատությունը»), "Дружба народов" ամսագիր, 1987 թ., № 8, օգոստոս, էջ 227-234: Նույնը՝ հայերեն բնագրից կատարված ֆրանսերեն հա-մառոտ թարգմանությամբ և թարգմանչի ընծայականով, Փարիզ, 1987 թ., 43 էջ): (ՈՒնի Garabed Baldjan (Catolicos Vasken I-er) "Les Armeniens du Moussa-Ler" վերնագիրը տիտղոսաթերթի վրա՝ "Les Armeniens du Moussa – Ler, dans le ramon de Franz Werfel"): Նույնը հայերեն՝ հատվածաբար, Փարիզի «Հառաջ» օրաթերթում, 1987 թ., № 16 (546), օգոստոսի 7-ից սկսած: Նույնը՝ Հայրապե-տական որոշ շտկումներով, «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա գրքում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 35-79):

«Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» - ստորագրություն «Կ[արապետ] Պալճյան» Պուքրեշ, 1943 թ., 158 էջ: Աշխատությունը հեղինակը ձոնել է իր ծնողներին («Նվեր ծնող-քիս»), գրվել է 1942-1943 թթ. ընթացքում, գրաքննությունն այն տպագրության է թույլատրել 1943 թ. ապրիլի 20-ին: Աշխատությունն ունի նաև ռումիներեն անվանաթերթ ու բովանդա-կության ցանկ, որտեղ խորագրից հետո կա ենթավերնագիր «ՌՒսումնասիրություն XIX

դարու հայոց գերագույն պատրիարքի ու կաթողիկոսի հասարակական-մանկավարժական հայացքների». այս ենթավերնագիրը հայերեն բնագիրը չունի:

Նույնը անփոփոխ՝ 1987 թ., Նյու-Յորք, 158 էջ, «Ս. Վարդան» մատենաշարով, Ամերի– կայի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսի հրամանով և «Վերահրա– տարակության առթիվ» խորագիրը կրող փոքրիկ առաջաբանով: Վերահրատարակության շարժառիթը հեղինակի՝ այսինքն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի, Միացյալ Նահանգներ կատարած Հովվապետական այցելությունն էր և Մկրտիչ Կաթողիկոս Խրիմ– յանի մահվան ութսունամյակը: Հրատարակիչները անվանաթերթի վրա նախ՝ դրոշմել են հեղինակի աշխարհական անուն-ազգանունը՝ «Կարապետ Պալճյան», ապա փակագծում՝ «Տ.Տ. Վազգեն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Նույնը անփոփոխ, Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տեսիլքով» ժողովածուում, գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 75-188: Արտատպված է առաջին հրատարա– կության բնագիրը, ուղղելով նկատված վրիպակները:

Աշխատության 7-րդ՝ «Հողի սեր» գլուխը, խմբագրության կարճառոտ ծանոթությամբ և «Վազգեն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց» ստորագրությամբ: «Էջմիածին» ամսագիր, 1957 թ., № 11, նոյեմբեր, էջ 29-33:

Աշխատության առաջաբանը խմբագրական կարճառոտ ծանոթագրությամբ և «Վազ– գեն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց» ստորագրությամբ, նույն ամսագրում, 1971 թ., № 2, փե– տըրվար, էջ 5-10:

> **Հեղինակի առաջաբանից**. - «Սույն աշխատությունը զոր կը հրատարակենք, զուտ գիտական գործ մը չէ բնականաբար: Մեր նպատակն է երևան հանել ու համադրական ձևով մը ներկայացնել Խրիմյանի դաստիարակչական մտքերը, տալով անոնց այն «այժմեականության» արժեքը, որուն իրապես արժանի են անոնք: Ձեռքի տակ ունեցանք «Պապիկ և թոռնիկը», «Դրախտի ընտանիքը», «Սիրաք և Սամվելը» ու իր շրջաբերականներն ու կոնդակները: Դժբախտա– բար մեր ձեռքին տակ չկրցինք ունենալ իր բոլոր շրջաբերականներն ու կոն– դակները և ոչ ալ իր հոդվածները, զոր զետեղած է իր ժամանակի մամուլի էջերուն մեջ: Հետևաբար մեր ներկա աշխատությունը կը տուժե այն չափով, ինչ չափով որ այդ գրությունները ևս անհրաժեշտ էին»:

«Խոսք Հայրենիքի մասին (Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության սրբազան տեղակալի վերջին շրջաբերական-կոնդակով)». – ստորագրություն՝ Վազգեն վարդապետ Պալճյան. Պուքրեշ, 1945 թ., 27 էջ:

Սկզբում (էջ 5-11), զետեղված է Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր տե–ղապահ տ. Գեորգ Չորեքչյանի «Գաղութահայ իմ սիրելի ժողովուրդ» շրջաբերական-կոն–դակը, տրված 1944 թ. սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որը Բուխարես–տում ստացվել է 1945 թ. հունվարի 28-ին: Կոնդակը կարդացվել է նույն օրը Ռումինիայի հայկական թեմի եկեղեցիներում «ի մխիթարություն հայրենասեր և հավատացյալ հայ ժո–ղովրդյան»: Ահա հաջորդում է «Խոսք Հայրենիքի մասին (ամփոփում Պուքրեշի եկեղեցվո մեջ և հրապարակային ժողովներու առթիվ արտասանված քարոզներու)» խորագիրը կրող «մեկնողականը» (էջ 14-27), որտեղ վերլուծաբար ներկայացված է Չորեքչյանի վերոհիշյալ կոնդակը, շեշտը հատկապես դնելով նրա ազգային-հայրենասիրական ծալքերը բացահայ–տելու վրա: «Մեկնողականն» ունի «Վազգեն վարդապետ Պալճյան» ստորագրությունը:

«Խոսք Հայրենիքի մասին»-ը քաղվածո ձևով, այդ խորագրի ներքո և խմբագրության համառոտ ծանոթագրությամբ՝ «Էջմիածին» ամսագիր, 1967 թ., № 10-11, հոկտեմբեր-նոյեմ–բեր, էջ 17-22:

«Խոսք Հայրենիքի մասին»-ը անփոփոխ՝ Հայրապետական «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 252-262):

«Մեր պատարագը» (անվանաթերթի վրա՝ նաև հետևյալ ենթավերնագիրը. «Հայաս–տանյայց եկեղեցվո Սուրբ Պատարագի խորհուրդը՝ բացատրված հավատացյալ ժողո–վուրդին համար») – ստորագրություն «Վազգեն վարդապետ Պալճյան»: Պուքրեշ, տպարան «Ալֆա», 1945 թ., 104 էջ: Աշխատությունը նվիրված է Շապին-Գարահիսարցի հայուհի Վե–րոնիկա Ա. Տեր-Մեսրոպյանի (1875-1944 թթ.) հիշատակին:

Նույնը անփոփոխ, պրոֆ. Պիոն Հակոբյանի կարճառոտ առաջաբանով («Վերահրա–տարակության առթիվ») և արևելահայերեն տառադարձությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջ–միածին, 1988 թ., 57 էջ: Աշխատության վրա որպես հեղինակ նշված է «Վազգեն Ա Կաթո–ղիկոս»:

Նույնը արևելահայերեն լեզվով և ուղղագրությամբ (լեզվական այս վերափոխումը իրականացվել է Վեհափառ Հայրապետի ցուցումով, որը խմբագրաբար կատարել է Ասո–ղիկ եպիսկոպոս Արիստակեսյանը) և «Երկու խոսք» ընծայականի հավելումով (հեղ. Ասո–ղիկ եպիսկոպոս), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1990 թ., էջ 119: Որպես հեղինակ նշված է «Վազգեն վարդապետ»: Հանդիսանում է նույն 1990 թվականին հիմնադրված «Լուսաղբյուր» մատենաշարի («մի մատենաշար, որի առաքելությունը պիտի հանդիսանա սնել մեր հա–

վատացյալ հոգիները կրոնա-բարոյական սնունդով, պարզ ու հասկանալի լեզվով») առա– ջին գիրքը:

> **Հեղինակի առաջաբանից**. - «Մեր եկեղեցի հաճախողների մեծամասնու– թյունը ոչ միայն չի կարդում Սուրբ Գիրքը, այլ բնավ չի հասկանում կարդաց– վածը: Ավելին՝ մեր ժողովրդի մեծ մասը և մանավանդ, մեր նոր սերունդները չգիտեն եկեղեցական արարողությունների իմաստը, անգամ տարրական չա– փով: Զարմանքով ենք նկատում, որ ցարդ որևէ հրատարակություն չկա, որ ժողովրդին պարզ ու հասկանալի ձևով բացատրի Սուրբ Պատարագի արարո– ղությունը: Ահա թե ինչու մեր մտքի մեջ գաղափարը ծնվեց մեր քիչ իմացածից բաժին հանել մեր ընթերցասեր ժողովրդին և այսպիսով օգտակար լինել հոգե– վոր կյանքի ամրապնդմանը: Մեր իղձն է մանավանդ, որ մեր պատանիներն ու երիտասարդները անպայման կարդան սույն գրությունը և մի քիչ էլ խոր– հրրդածեն աստվածային խոսքերի մասին: Հետևաբար, զրի ենք առնում և մեր հավատացյալների տրամադրության տակ ենք դնում Սուրբ Պատարագի «ահավոր և սարսափելի խորհրդի» մեկնությունը պարզ ու հասկանալի բա– ցատրություններով ու ծանոթություններով, այն բոլորին մատչելի դարձնելու նպատակով»:

«Հայրենի արևին տակ» - ստորագրություն՝ «Վազգեն եպիսկոպոս Պալճյան, առաջ– նորդ ռումանահայ թեմի»: (Նույնն է նաև ռումիներեն անվանաթերթը) Պուքրեշ, 1954 թ., 110 էջ: Հեղինակի ցանկությամբ գիրքը հրատարակվել է արևելահայերեն ուղղագրությամբ: Գրքի Ա, Բ և ԺԲ գլուխները որոշ կրճատումներով, Վազգեն Ա Կաթողիկոս, «Գալիքի տե– սիլքով» ժողովածուում, գիրք Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., էջ 289-300:

> Հեղինակի՝ 1945, 1948, 1951 և 1953 թվականների՝ Մայր Հայրենիք կատա– րած այցելությունների ժամանակ ստացված տպավորություն հուշապատում– ներն են. շարադրված տասնչորս գլուխներում: Որպես ներածություն զետեղ– ված է «Պահակում» 1946 թ. հրատարակված «Երևանյան պատկերներ» ակ– նարկը (տես ներկա հատորը, այդ թվականը):

«Հոգեբանության դասեր» - ունի նաև՝ «Հոգեբանության դասեր. հոգեբանության դա– սախոս՝ Վեհափառ Հայրապետը» խորագիրը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1961 թ., 119 էջ: Նույնը՝ հեղինակի կատարած լեզվա-ոճական մասնակի փոփոխություններով՝ Բեյրութ, 1963 թ., 128 էջ: ՈՒնի յոթ կետից բաղկացած փոքրիկ առաջաբան («Ծանոթություն») և բաղ– կացած է քառասունմեկ գլուխներից: Նախատեսված է որպես հոգեբանության ուսումնա– կան ձեռնարկ հոգևոր ճեմարանների ուսանողության համար:

Առաջաբանից. - «1. Հոգեբանության սույն ձեռնարկը ամփոփումն է հոգեբանության այն դասերի, որն ավանդում է Վեհափառ Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետը Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանում:

2. Հոգեբանության սույն դասերը կազմված են արդի հոգեբանության հիմունքների վրա, առանց սակայն որոշ ուղղության կամ դպրոցի հարելու: Հեղինակն աշխատել է միայն ընդհանուր գիտելիքներ և տեսություններ ներկայացնել, որոնք կարող են ընդունելի լինել բոլոր դպրոցներին:

3. Հեղինակն օգտվել է ի մասնավորի ռումինացի և օտար հոգեբանների գործերից, որոնք հիմք են կազմել իր ուսումնասիրությանց Բուխարեստի Պետական համալսարանում իր ուսանողությանց շրջանին, 1931-1936 տարիներին:

7. Անհրաժեշտ է ուսանողներին հանձնարարել գեղարվեստական գրականության ընթերցում, ուսումնասիրելու համար համապատասխան երկերի հերոսների հոգեբանությունը, նրանց հոգեկան աշխարհը»:

«Գալիքի տեսիլքով (ուսումնասիրություններ, հոդվածներ, ուղևորություններ (1933-1954)» - գիրք Ա: Հեղինակ՝ Վազգեն Ա Կաթողիկոս: Հատորը կազմել է Սուրեն Շտիկյան-Վանեցին, աշխատակցությամբ Պարգև Շահբազյանի և Պիոն Պակոբյանի: Գիրքը նվիրված է Վեհափառ Հայրապետի ծննդյան ութսունամյակին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1988 թ., 330 էջ:

Բովանդակություն. – («ՈՒսումնասիրություններ» ենթախորագրի ներքո) 1. Անձնավորության գաղափարի մասին. 2. Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ. 3. Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ. 4. Սուրբ Գրիգոր Նարեկացի:

(«Հոդվածներ» ենթախորագրի ներքո) 1.Նոր սերունդին համար. 2. Մեր ապագան. 3. Ապագա ունի՞նք. 4. Ինչի՞ կը հավատանք. 5. Դեկարտի այժմեությունը. 6. Հայ ըլլալ. 7. Հոգի. 8. Մեր հայրենիքը. 9. Ապրիլի 24. 10. Քրիստոնյա ըլլալ. 11. Հո՛ն հեռուն. 12. Խոսք հայրենիքի մասին. 13. Մեր հարազատ լեզուն. 14. Ռումանահայ թեմը երեկ և այսօր. 15. Բուլղարահայ գաղութը այսօր:

(«ՈՒղեգրություններ» ենթախորագրի ներքո») 1. Հայրենի արևին տակ. 2. Ճամբորդական նոթեր:

«Գալիքի տեսիլքով (ուսումնասիրություններ, հոդվածներ»), գիրք Բ: Հեղինակ՝ Վազգեն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց: Հատորը կազմել է Սուրեն Շտիկյան-Վանեցին,

խմբագրել է Պարգև Շահբազյանը: Գիրքը նվիրված է Վեհափառ Հայրապետի ծննդյան ութսունամյակին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1993 թ., 163 էջ:

Բովանդակություն. «Երկու խոսք» «ստորագրություն («Գերագույն Հոգևոր Խորհուրդ»): 1. Քսան տարի հետո. 2. Ո՞Իր ես, Լուսավորիչ. 3. Ինչի կը հավա– տանք. 4. Ռուսահայ, թրքահայ. 5. Մեր հայրենիքը. 6. Հայրենասիրություն. 7. Քրիստոնյա ըլլալ. 8. Քաջազնունին և մենք. 9. Ներքին քաղաքականություն. 10. Փոթորիկ. 11. Կարոտ Հայրենի. 12. Նոր աշխարհը. 13. Նորը. 14. Կենդանի Հա– յաստանը. 15. Իմաստուն մարդ մը. 16. Ինչպե՞ս կը սկսինք. 17. Շողակաթ լուսո խորան Էջմիածին. 18. Վնասաբեր մի գիրք. 19. Հայ ժողովուրդը և իր մայր եկեղեցին. 20. Տանն Կիլիկիո Տ. Գարեգին Ա կաթողիկոսի 80-ամյակը. 21. Ի սեր մեր եկեղեցու միության. 22. Իմ պատասխանը պր. Ա.Տ.-ին. 23. Ամենուս Հ.Մ.Ը.Մ.-ը. 24. Սո՛ւտ է. 25. Բնազդ և գիտակցություն. 26. Ինչ կը նշանակի դիալեկտիկա. 27. Ինչ կը նշանակե «բուրժուազիա». 28. Ինչ կը նշանակե «ոգի». 29. Ինչ կը նշանակե «իդեալիզմ». 30. Մարքսիստը. 31. Մտերիմ նամակներ հայ ծնողքներուն. 32. 1952-ին. 33. Նշմարներ Էջմիածնի մասին. 34. Նշմարներ. 35. Մտածումներ:

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Աղմուկ վասն ոչնչի 1987

Աճման թերությունները 1938

Ամենուս Հ.Մ.Ը.Մ.-ը 1941

Այսօրվա երիտասարդությունը 1937

Անձնավորության գաղափարի մասին (մտածումներ) 1939

Ապագա ունի՞նք 1937

Ապրիլի 24 1938

Բնազդ և գիտակցություն 1938

Բուլղարահայ գաղութը այսօր 1954

Գալիքի տեսիլքով (ուսումնասիրություններ, հոդվածներ, ուղեգրություններ), գիրք Ա 1988

Գալիքի տեսիլքով (ուսումնասիրություններ, հոդվածներ), գիրք Բ 1993

Դարձյալ Պ.Ա.Տ.-ին 1938

Դեպի ոգեպաշտություն 1938

Ելույթ Բուխարեստում կայացած խորհրդակցության ժամանակ 1950

Ելույթ Հայաստանում Խորհրդային կարգերի 27-րդ տարեդարձին 1947

Ելույթ նվիրված խաղաղության պաշտպանությանը 1951

Եկեղեցվո օրհնությունը 1945

Երևանյան պատկերներ 1946

Զատիկ 1945

Էջմիածնի վերանորոգությունը 1955

Ընկերային գիտությանց այժմեականությունը 1937

[Ըսողներ կան] 1937

Իմաստուն մարդ մը 1939

Իմ պատասխանը Պ.Ա.Տ.-ին 1938

Ի՞նչ կը նշանակե a priori 1937

Ի՞նչ կը նշանակե Bourgeois 1937

Ի՞նչ կը նշանակե Dialectique 1937

Ի՞նչ կը նշանակե ընկերային 1938

Հո՛ն, հեռուն 1941

Ղազարոս Կռնիկյան	1942
Ճամբորդական նոթեր Ժողովրդական Ռեսպուբլիկա Բուլղարիայեն	1955
Ճշմարտությունը ամբողջ	1970
[Մաղթանք]	1954
Մաղթանք Հ.Մ.Ը.Մ.-ին	1939
Մարքսիստը	1938
Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Կաթողիկոսի ծննդյան 80-ամյակը	1947
Մենդելի օրենքները	1937
Մեր ապազան	1933
Մեր հայրենիքը	1937
Մեր հարազատ լեզուն	1950
Մեր պատարազը	1945
Մեր վարժարանը	1938
Մի դժբախտ «Թուղթ շրջաբերական»	1992
[Մտածել]	1937
Մտածումներ	1937
Մտերիմ նամակներ հայ ծնողքներուն	1937
Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (վերլուծական փորձ)	1940
Նամակ Երևանեն	1953
Նամակ Հայաստանեն	1951
Ներգաղթը և մեր պարտականությունը	1946
Ներքին քաղաքականություն	1937
Նշմարներ	1937
Նշմարներ	1938
Նշմարներ	1941
Նոթեր Մայր Հայրենիքեն	1951
Նոթեր ռումանահայ կյանքի մասին	1953
Նոր աշխարհը	1938
Ի՞նչ կը նշանակե Idealisme	1938
Ի՞նչ կը նշանակե ոգի	1937
Ի՞նչ կը նշանակե Synthese	1937

Ինչի՞ կը հավատանք 1937

Ինչպես կը սկսինք 1941

Ի սեր կարգ ու կանոնի 1987

Ի սեր մեր եկեղեցու միության 1986

Լավ հայերեն չենք գիտեր 1937

Խոսք աղոթքի և ուխտի 1965

Խոսք հայրենիքի մասին (Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության սրբազան տեղակալի վերջին շրջաբերականը կոնդակով) 1945

Խոսք վասն խաղաղության 1950

Խորհրդային Հայաստան 1955-ին 1955

Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ 1943

Ծաղկաքաղ Վեհափառ Հայրապետի մտածումներից 1985

Կարոտ Հայրենի – տես Երևանյան պատկերներ

Կենդանի Հայաստանը 1939

Կոչ ի պաշտպանություն Բեռլինի դաշնագրի 1951

Հազար ինն հարյուր երեսունյոթի հայը 1937

Հազար ինն հարյուր քառասուներկուսին 1942

Հայաստանյայց եկեղեցին Խորհրդային Միության մեջ 1955

Հայ եկեղեցվո անփոխարինելի կորուստը 1954

Հայ ժողովուրդը և իր մայր եկեղեցին 1980

Հայ մամիկներու դասը 1938

Հայրենասիրություն 1938

Հայրենի արևին տակ 1954

Հայուն պայքարը 1933

Հերկ (ամսագիր) 1937

Հոգեբանության դասեր 1961

Մեր վարժարանը 1938

Մաղթանք Հ.Մ.Ը.Մ.-ին 1939

Նոր ավետիս հայության 1968

Նոր գիրք մը Խորհրդային Միության մասին 1937

Նորը 1939

Նոր սերունդի խնդիրը	1933
Նոր սերունդին համար	1933
Նոր տեղեկատվություններ Խորհրդային Հայաստանեն	1953
Շողակաթ լուսո խորան Էջմիածին	1951
Ոգի Հայաստանյայց	1952
Ողջույն Համաստեղին	1966
Ռամկավար կուսակցությունը ապրի՞լ կուզե	1937
Ռումանահայ թեմը երեկ և այսօր	1948
Ռումանահայ թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյանի ելույթը	1954
Ռուսահայ, թրքահայ	1937
Ռուս ժողովուրդը իր տանը մեջ	1948
Սիրելի հայրենակիցներ	1945
Սխալ և մերժելի	1969
Սրբությամբ պահպանենք եկեղեցական արվեստի մեր ավանդները	1961
Սո՛ւտ է	1938
Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործը	1955
[Սուրբ Էջմիածնի լույս բարձունքներից]	1984
Վեհափառ Հայրապետի պատգամներից	1970
Վնասաբեր մի գիրք	1962
Տեքարտի այժմեությունը	1937
ՈՒղևորություն դեպի Էջմիածին	1948
Ո՞Իր ես, Լուսավորիչ	1937
Փոթորիկ	1941
Քաջազնունին և մենք	1937
Քսան տարի հետո	1938
Քրիստոնյա ըլլալ	1938
Օրհնություն Սուրբ Էջմիածնից	1968